

## Գեղարմ

համարի բանաստեղծությունը

### Ապրիլ թե ոչ երազել

Ապրիլ թե ոչ երազել,- չլուծեցի՜նք  
հարցը դեռ.  
Վայելքը ո՞ւր փնտրուել, երազի՞ն մեջ թե  
կեանքին,  
-Չվճռեցի՜նք տակաւին... Ու մինչեւ ժամը  
վերջին  
Այս մեծ խնդիրն, ո՛վ հոգիս, վըրադ ըլլայ  
պիտի բեռ...

Քանզի երազն էր կեանքէն աւելի դիւր ու  
հեշտին,  
Եւ իր արշաւն ալ՝ անծայր, դաշտէ ի դաշտ,  
լեռնէ ի լեռ.  
Եւ ունէր ինքը միայն գոց դուռներու  
բանալին,  
Որոնց ետեւ լուսասփիւռ կային գանձեր  
ակնայեռ:

Մենք սիրեցինք երազին երթալ ճամբէն  
ծաղկալից,  
Մինչեւ անդունդը երբեմն, մինչեւ  
բարձունքը երկնից,  
Ու, խեղճ հոգիս, երկուքէն ալ սպառա՛ծ ետ  
դարձանք:

Ձի երազին վերքերուն կեանքը չեղաւ  
բալասան,  
Եւ յոգնութեան ալ կեանքին չեղաւ երազն  
ապաստան.  
Չառինք երազ մը կեանքէն, ու երազէն  
չառինք կեանք...:

**Վահան Թէքեան**

Գեղարմ-59. 2017  
Գրական-գեղարվեստական,  
թարգմանական հանդես  
Հրատարակիչ՝  
«ՈԳԻ-ՆԱԻՐԻ»  
գեղարվեստի կենտրոն  
Հրատարակվում է 2002 թվից

Հասցեն՝ ԼՂՀ, 375000  
Ստեփանակերտ,  
Վ. Սարգսյան 25

Էլեկտրոնային հասցեն՝  
gek harm@yandex.ru  
hrantalex@rambler.ru  
Հեռ. +37497-252323

Տպագրվում է  
«Դիզակ-պլյուս» ՍՊԸ-ում

Խմբագիր՝  
Հրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գեղարմ-59.2017  
Literary-Feature  
translating periodical  
The publisher:  
«VOKI-NAIRI»  
art centre  
Published in 2002

Address: 25 V. Sarkisian str.  
Stepanakert, 375000, NKR  
E-mail: gek harm@yandex.ru  
hrantalex@rambler.ru  
Tel: +37497-252323

Editor:  
Hrant ALEXANYAN

# Գեղարմ Գարուն 2017

## Հ Ա Մ Ա Ր Ի Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

«Գեղարմ»-ի մատենաշար.....	3
Շանթ ՄԿՐՏՉՅԱՆ. Բանաստեղծություններ.....	5
Հրաչ ԲԵԳԼԱՐՅԱՆ. Գեներալին սպասելիս.....	10
Յուրի ԲԵԼԻԿՈՎ - Նվարդ ԱՎԱԳՅԱՆ. Իսկական ռուսները, կամ՝ ձեր հաղթողի պատկերով սկահակը(երկխոսություն).....	15
Դմիտրի ԲԱԿԻՆ. Տերեւները.....	34
Ջիդի ՄԱՋԻԱ. Բանաստեղծություններ.....	53
Ինգեբորգ ԲԱԽՄԱՆ. Մարդասպանների եւ գժերի մեջ.....	57
Իտալո ԿԱԼՎԻՆՈ. Թեթևությունը.....	62
Ժամանակակից Սլովենական պոեզիա.....	73
Անդրեյ ԿՐԱՍՆՅԱՇՉԻՆ. Էկո-լոգիա, էկո-նոմիա.....	81
Literary translations. Slavik CHILOYAN.....	88
Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. «Մեռնող օրվա հետ չի մեռնում հույսը».....	92
Խճանկար.....	98

Կազմին եւ համարում՝ Հենրիկ եւ Ռոբերտ ԷԼԻԲԵԿՅԱՆՆԵՐԻ  
ստեղծագործությունների արտապատկերները

**Գ Ե ղ ար մ - ի**


**մ ատ ե ն ա շ ա ր ո վ**

լույս են տեսել

**ՉԻՆԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ:** Հատոր 3:  
**Թարգմ. անգլ.՝ Ա. Աթաբեկյան:**  
**Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2016, 136 էջ:**


Հայ ընթերցողներին է ներկայացվում չինական միտքն ու մշակույթը հատկանշող հիմնական հասկացությունների հնգհատորյա հանրագիտարանի երրորդ գիրքը:

Այն աննախադեպ ու բազմաձևավալ մի աշխատություն է, որ հետաքրքիր ու օգտակար կարող է լինել ոչ միայն փորձագետների եւ «Երկնատակի» երկրի սիրահարների համար, այլեւ կգրավի բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր ցանկանում են իրենց համար բացահայտել չինական ժառանգության նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ:




**ԳՈՆԳ Քիանգ**  
**ԿԱՑԱՐԱՆՆԵՐ:** Թարգմ. անգլ.՝ Խ. Գասպարյան:  
**Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2017, 100 էջ:**

Չինական ֆոլկլորին նվիրված հնգհատորյա շարքի «Կացարաններ» գրքում ներկայացված են Չինաստանում բնակվող ազգությունների բնակատեղիները, դրանց առաջացման պատմությունը, ազգային առանձնահատկություններն ու տարբերությունները, ինչպես նաև այդ ազգությունների յուրատեսակ սովորույթներն ու ավանդույթները՝ կապված կրոնական հավատալիքների, նիստուկացի եւ կենսական այլ երեսույթների հետ: Գիրքը կհետաքրքրի պատմաբաններին, բանահյուսությանը և ազգագրությանը զբաղվող մասնագետներին:



## Գեղարմ Գարուն 2017



**ԳՈՆԳ Քիանգ.**

**ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ: Թարգմ. անգլ.՝ Լ. Խաչատրյան:**  
**Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2017, 100 էջ:**

Չինական ֆոլկլորին նվիրված հնգհատորյա շարքի «Ամուսնություն» գրքում ներկայացված են չինացիների ամուսնական սովորույթները, դրանց առաջացման պատմությունը, եւ առանձնահատկությունները՝ կապված կրոնական հավատալիքների, նիստուկացի եւ ազգային այլ երեսույթների հետ: Գիրքը կհետաքրքրի պատմաբաններին, բանահյուսությամբ և ազգագրությամբ զբաղվող մասնագետներին, ընթերցող լայն հասարակայնությանը:



**Ինգերորգ ԲԱՍՄԱՆ.**

**ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԳ ՏԱՐԻՆ: Թարգմ. գերմաներենից՝ Սիրվարդ Ստեփանյանի:**  
**Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2017, 208 էջ:**

Գրքի հեղինակն է ավստրիացի նշանավոր գրող եւ փիլիսոփա Ինգերորգ Բախմանը, որի անունով է նաեւ մեծամասամբ հատկանշվում ետպատերազմյան գերմանալեզու գրականության զարգացումը:

«Երեսուներորդ տարին» ժողովածուն ընդգրկող թեմաներն են նույնականությունն ու հիշողությունը, հարաբերությունն ուտոպիայի եւ առօրեական լեզվի միջեւ, սերն ու սահմանների խախտումները, ֆաշիզմի հետ հեղինակի ինտենսիվ վեճը եւ բռնատիրության հետեւանքները:

Արձակ գործերի հետ գրքում ներառված են նաեւ հեղինակի նորաշունչ բանաստեղծությունները:

Շանթ ՄԿՐՏՉՅԱՆ

ԵՐԿՈՒ ՌԻԹՄ,  
ՆՈՒՅՆ ՎԱՅՐՈՒՄ



1.  
Ահա՛ պուրակը: Տասնամյա ծառերով:  
Դեռ ո՞ղջ է: Հիսուն տարեկան կլինի,-  
Շուքերից կարկատած փարչ-  
Թնդե՛լ է լռության գինին:

«Քեզ տուն ճանապարհելուց հետո  
Ուզեցի մտնել փարչի մեջ ու հարբել – հար  
Մինչև խլություն, մինչև նույն ձյունը կգար...»

2.  
Թեկուզև ջահել, մարմնական եռքով՝  
Մենմոլոր ձյուններն ինձ կանչում էին ձեռքով:-  
Մեկ ամբողջական ամալի կախարդանք-  
Նման քանդակի - մարմարե, որ մարմրում,  
Ճառագում, ապա անկատարի մասին խո՛հն է դադարում:

Գործից ետդարձին գրկում է հորիզոնը,  
Երբ արյան թագավորն ապրած կենա, և սեզոնը  
Բաց ծնկների հրում է փողոցներ ու բարեր-  
Դեպի պար, շարժում, մինչդեռ ուզում ես մերկ  
Նստել փաթիլների տակ, սուզվել սրտիդ հերկերն  
Իբրև մի յոգ:

3.  
Իմ երագներում միշտ ձյուն է գալիս երևանյան շոգին:

4.  
«Մոռ՛ւթ իմ, պատի՛կ իմ, հասար տանդ մոտ:  
Զգո՛ւյ՛ջ, աչքից հեռու, վստահ և...միամի՛տ»:

5.  
Ջութակի ձայն ցայտեց բանավանում,  
Ասես իմ մամուռն էր խուզում, օդ հանում,

## Գեղարմ Գարուն 2017

Ինչպես բույսերի մեջ խուճապահար լողորդ  
Թրատի թևերով- թավուտից դուրս հորդի,  
Պուրա՛կն եմ մտնում հիսուն տարեկան:

6.  
Իմ երագներում միշտ ձյուն է գալիս. սա է իմ ներկան:

7.  
Փաթիլների մե՛ջ եմ, փաթիլների տա՛կ,  
Տա՛ք է նաև մութը՝ հոտոտող հրեշտակ:  
Մթաքքն ինձ կողպում է պուրակի ներսում:  
Ես՝ լեզվովս՝ փաթիլներ եմ որսում,  
Որ մաղում է այն սիրտը՝ կուտակ-կուտակ՝  
Խուլ-արնագույն, խուլ-սպիտակ, սև էլ կար, չեմ հիշում,  
Երկու ռիթմ՝ մի կույր, մի արթուն աղբյուրից եմ խշշում...

8.  
«Ես ի՛նչ սուրբ և ես ի՛նչ մեղսական,  
Պարզապես շրշո՛ւնն է ներքաշում  
Մարմարիոնի՛ մեջ, ամպի՛ մեջ - սակայն»:

### **Բրողսկուն թարգմանելիս**

...Քարհանքը գտնել,  
զոմփով քարհանք մտնել,  
կտրել պալ, կտրել սալ,  
կտրել սյուն, բարավոր ու կամար,  
ապա կրել - կարապներով,  
ինչպես ամայության մեջ -  
հատ առ հատ - լուսատուներն անշեջ,  
և շինել տաճար, շինել եկեղեցի  
և թե վերջն է՝ ասել.  
- Հա՛ր մնա չարչարանքդ և ջա՛նքդ՝ եղիցի...

Հ.Գ.

*Աստ՝ անցողիկ ու անանց,  
խավար ու կանաչ  
թող հավետ հանգչեն:*

## Գեղարմ Գարուն 2017

\*\*\*

Ժամանակը հոսեց,  
և ահա ծովափի  
բովանդակ ավազի մեջ եմ -  
մինչև կոկորդս:

Սպիտակ սպիտակել եմ, -  
ամպերն են ասում ,-  
սրվել է լսողությունս  
ոնց թարթիչը մանկան...

Ճայերը ճշում են.  
- Ահա՛, ահա վերջին  
ավազահատիկն էլ  
սահեց ձագարի ծակով  
ու՛ր արդեն Ոչի՛նչն է,  
և քեզ նշմարել են  
սափորում ապակե -  
մայրամուտի վարդի՛ մեջ անել...

Օրորվի՛ր, օրորվի՛ր գունեղի հոսքերում  
հեռացող հորիզոնի հեռացող խոսքերում:

### Ետ դարձ

Այո, նստել եմ  
Հենց փոսի եզրին,  
Կախել եմ բոպիկ ոտքերս ցած...

Ի՛նչ ցուրտ հավերժություն է հոսում...  
Մի՞թե օվկիանոսն է Սառուցյալ ...

Սովորաբար անդունդը քաշում է,  
Սա՛ ինձ տշում է-  
Ե՛տ,ե՛տ,ե՛տ,  
Մինչև որ բացվի տերևաթափ աստղերի արահետն,  
Ու մահվան նեգատիվի համար  
Ոգով հասունանամ,  
Այսինքն՝ մտնեմ խոռոչը սև,  
Որ հետո մի ա՛ստղ արտանետվի իմ հետքով  
Եվ կյանքիս բոլոր հույզերը լուսանան...

## Գեղարմ Գարուն 2017

Իսկ հիմա ոտքերս ե՛տ դնեմ հողին՝  
ու քայլեմ, քայլեմ, քայլե՛մ, մինչև որ խաղողի  
ողկո՛ւյզը հասունանա:

### Քախ.Ադաջիո

Յոթն օր ու գիշեր,  
Յոթն ամիս ու ամ  
Երգերից հետո խրախճանական  
Նստել է ձայնն իմ,  
Որպես սուզանավ անհայտ տերություն:

Ես իմ գվվոցն եմ ի վեր արձակում  
Ձկների միջով, ծովաբույսերի և ընկած երկնի:

Նա, ով տարավ ինձ,  
Ի՛ր հոգու մեջ եմ - իմ ամբողջ հոգով.  
Մատներս եմ դնում դիմագծերին  
Սքանչական և տարաբախտ կյանքի:

Հին ու նոր քանի՛ թավջութակ ունեմ՝  
Ես մոտ եմ բերում ձայնին իմ խռպոտ  
Ու ընկած երկնից ոգում՝ ջուրն ի վեր:-  
Այդպես եմ նավերն հանում խորտակված  
Երկնի հատակից - համանվագով թավջութակների...

Ծաղկաթերթերի քանի՛ գարուն է թռել իմ միջով  
Դեպի չորս ծագեր.  
Վերադառնո՞ւմ եմ - դեպի ջրերը,  
Ուր բարձրանում է նավն իմ խորտակված  
Եվ իմ մայունն է լսվում ծածանվող քամիների մեջ...



## Գեղարմ Գարուն 2017

### **Լուսաբացները արտասանում են ձեզ բերանացի**

Անհայտից եկած  
Պոետներ, ողջո՛ւյն,  
Մենյակիս օղն է  
Մութում դողանջում:

Բաց է սեղանս ,  
Ու լույսն է աղոտ,  
Բայց գինի ունենք,  
Հաց ու ծխախոտ,

Ճիշտ է, չեմ գտնում,  
Բայց սեղանին է,  
Ինչ որ գրեցիք-  
Տողն սպեղանի:

Ով ներելու չէր,  
Նաև ներեցինք,-  
Եկեք շնջանք ականջախեցում  
Պաղ լուսաբացի:

Մոտ նստեք հացին,-  
Լուսաբացները  
Արտասանում են  
Ձեզ բերանացի:

Հրաչ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԳԵՆԵՐԱԼԻՆ  
ՍՊԱՍԵԼԻՍ



-Լավ, բա գեներալը ե՞րբ է գալու,- արդեն որերորդ անգամ պահակետում կանգնած զինվորին դիմեց հաստաբազուկ տղամարդը:

-Ես ի՞նչ,- ուսերը թոթվեց զինվորը:

-Է՛, - չգիտես բարկացած, թե հուսահատված ձգեց Հաստաբազուկն ու նստեց նեղլիկ պահակետի պատի տակ դրված կիսաջարդված կողապահարանին: Կողապահարանը նրա աժդահա մարմնի ծանրությունից խղճալի ճռռաց: Ջահել զինվորը, կողապահարանը, պահակետի դռանը գեներալին սպասող ընկերները չգիտեին, որ նա գայրացած է դեռևս առավոտից: Թե կինը գիշերն ինչ էր մտածել, առավոտյան տոտոնքի էր կանգնել. «Երևան եմ գնում»: «Գնում ես, ի՞նչ անես», - զարմացած հարցրել էր ինքը: «Գնում եմ հիվանդանոց պառկեմ, բուժվեմ»: «Էլ նո՞ր... արդեն քառասունմեկ տարեկան ես», - առարկել էր ինքը: «Կին կա՞ վաթսուն տարեկանում է երեխա ունենում: Չբերությունը հո ճակատիս գրված չէ՞»: «Ձեռ քաշի, այ աղջի, քո արգանդը չորացած է,- համոզել էր ինքը,- աշխարհն էլ դեղ ու բժիշկ չմնաց: Որ չէ՛ չէ էլի՛»...

Կինն արցունք ու ճիչ իրար էր խառնել, հետո վեր էր կացել ու՝ Երևան ու՞ր ես, գալիս եմ: Ինքը չէր կարող նրա հետ գնալ: Պայմանավորվածություն ուներ գեներալի հետ: Պիտի խնդրեր, որ երկրապահի տղերքի համար մարզպետից խոտհարքի տեղ ուզի: Հետո ի՞նչ, որ հիմա գեներալ է: Մարտական ընկերների մասին չպիտի՞ մտածի:

-Է՛, էդպես ո՞նց կլինի,- կնոջ արածը հիշելով հառաչեց նա և գլուխը քաշեց ուսերի մեջ:

Զինվորը չհասկացավ, որ Հաստաբազուկը կնոջ արածից է գայրացած ու գլու-

## Գեղարմ Գարուն 2017

խը կախեց: Ինքն ի՞նչ մեղավոր է: Ինքը հասարակ զինվոր է: Կանգնել է այստեղ, որ գնացող-եկողի մասին զեկուցի շտաբին, ուղեփակոցը բացի-փակի: Ինքն իր հանձնարարությունը կատարում է: Ո՞վ գիտե գեներալը գա՞, չգա՞: Նրան ո՞վ կասի՝ աչքիդ վերևը հոնք կա: Ուր ուզի՝ կգնա, ինչ ուզի՝ կանի: Գեներալ է, հո զինվոր չէ՞:

Իսկ Հաստաբազուկի սիրտը պայթում էր անորոշությունից: Խանդում էր կնոջը: Ի՞նչ իմանա՝ բժշկի մո՞տ է գնացել, թե... Ի՞նչ իմանա՝ դրա բժիշկն ի՞նչ տեսակ մարդ է: Մեկ-մեկ սրտի մեջ գլուխ է բարձրացնում մի խենթ միտք. պատերազմի դաշտից բերած ինքնաձիգն առնի՝ ու կնոջ սիրուն մարմինը թիրախ դարձրած՝ ողջ պահունակը դատարկի վրան: Ա՛ն քեզ բժիշկ: Գատում են՝ դատեն: Ինքը քանի՞ անգամ է դեմառդեն նայել մահվան աչքերին:

-Ախր էսպես ապրել կլինի՞,- ձգեց նա և դժվարությամբ վեր կացավ տեղից,- էս ի՞նչ երկիր է: Խոստանում են, չեն գալիս, պայմանավորվում ու խաբում են:

-Ո՞վ գիտե՝ նախարարություն, բան...,- Հաստաբազուկի հուսահատ զայրույթը մեղմել փորձեց զինվորը:

Պահակետի դիմացի ծառերի ստվերում, կիսաշրջան կազմած. կանգնել էին մի քանի հոգի: Կիսաշրջանին ինչ-որ բան ապացուցելու-համոզելու համար արագ ու զայրացած պտտվում էր Անտի սայլը: Տերը հինգ տարվա ընթացքում այնպես էր վարժվել սայլին, որ գրեթե չէր զգում իր անուտք լինելը: Մարտի դաշտում պայթած ականը ածելու նման ազդրերից կտրել-տարել էր զույգ ոտքերը: Նա հենակներին չէր վարժվել, հրաժարվել էր ազդրերը կաղապարի նման սեղմող պրոթեզներից ու սայլ էր սարքել իր համար: Տղայի ինքնագլորի ռետինապատ անիվները հանել, գցել էր իր ձեռքով սարքած սայլի տակ: Նստում էր վրան, ոտքերի մնացած մասը կապում, ամրացնում սայլին և տեղաշարժվում էր ամենաուժեղ վագրոդից էլ լավ:

-Ի՞նչ ա ասում,- խոսքը կիսատ թողնելով իրենց մոտեցող Հաստաբազուկին դիմեց նա:

-Հե՛ջ: Ասում է՝ որ խոստացել է, ուրեմն կգա:

-Գեներալ է բա՞,- փնջացրեց Անտը:

-Գեներալ է, բա ի՞նչ է,- պայզելով նրան պատասխանեց Չորչորուկը: Նա Անտի հետ խոսելիս միշտ պայգում էր: Մի տեսակ անհարմար էր զգում վերևից խոսել հետը: Համ էլ թվում էր, որ եթե չպպզի, իր խոսքն Անտի գլխավերևվով կթռչի, ուրիշ տեղ կգնա ու նրա ականջները չեն լսի:

-Ես էլ մարշալ եմ,- ձեռքը կրծքին խփեց Անտը:

-Բա ո՞նց, մենք էլ՝ պահակախումբ, սայլդ էլ՝ գրահապատ մեքենա,- ծիծաղեց ու կրծքի մեղայը փայլեցրեց ջահել մորուքովը:

-Չէ, աշխարհն անհավասար է սարքած,- դարձյալ կնոջ ճիչը հիշելով՝ տնքաց Հաստաբազուկը,- կռվելիս ոնց որ բոլորս հավասար էինք: Բայց էս ո՞նց եղավ: Մի մասը մնաց բանակում, պաշտոն-մաշտոն ստացավ: Մենք էլ մինչև ետ եկանք, տեսանք՝ ամեն ինչ իրար մեջ բաժանել, կիսկիսել են...

-Ուզում էիր՝ բոլոր կռվողները գեներալ դառնայի՞ն: Չեղավ, չէ՞: Որ անձանոթ մեկը լիներ, առաջը գլուխ կծռեի՞ք: Հիմի վա՞տ է, որ մեր ընկերը մեզ օգնում է: Մեկիդ երեխան ուսման վարձ չունի, մյուսիդ բուժվել է հարկավոր, մեկիդ տեղեկանք է պետք... Գալիս ենք ու չենք ասում՝ ախր էս մարդը գեներալ է: Մարզպետ չէ, բժիշկ չէ, քոլեջի տնօրեն չէ...,- դարձյալ գեներալին պաշտպանեց Չորչորուկը:

Հետո նստեցին բարդիների տակ, կանաչ խոտի վրա: Ամեն մեկն իր մտքի հետ, յու-

## Գեղարմ Գարուն 2017

րաքանչյուրը իր հոգսերից ազատվելու հույսով, ուզվորի նման ձեռքն ուրիշին պար-  
զած: Բարդիներից նրանց գլխին ձյունի նման բամբակ էր մաղվում:

-Անտերը լավ բան լինի, էդքան շատ չի լինի,- տնքաց Հաստաբազուկը:

-Որ լավ բանն էլ շատ լինի, կանհամանա,- նետեց Անտըրը, ձեռքերը հենեց գետնին,  
ճարպիկ ցատկով իջավ սայլից, թեք ընկավ հնձած խոտի վրա ու սայլը բարձի պես  
հարմարեցրեց թևի տակ: Նայեց ծառերին, ամռան արևին ու ծխախոտը փստացնե-  
լով սկսեց պատմել:

-Ես որ աչքերս բացեցի հիվանդանոցում, նախ, շատ ուրախացա, որ ողջ եմ: Մեջս  
արյուն չէր մնացել: Ինձ համար կարևորն էն էր, որ ողջ էի: Հետո քայլել ցանկացա,  
սիրտս սար բարձրանալ ուզեց, հետո կնիկ ցանկացա... Հիմա գիտե՞ք ինչ եմ ուզում:  
Ասե՛մ՝ ծիծաղեք: Ուզում եմ ծառ բարձրանալ...

Քրքչացին բոլորը: Հաստաբազուկը՝ բոլորից բարձր: Բայց հանկարծ անտանելի  
ծակեց սիրտը: Առավոտյան զայրացել էր ու կնոջը նույնիսկ մեքենայով ավտոբուսի  
կանգառ չէր տարել: Թող գնա՝ ոնց ուզում է, թող ամի՝ ինչ ցանկանում է: Հիմա ձեռքը  
կրծքին դրած պատկերացնում էր, թե ինչպես նա կարմիր շորով, զարդարուն ու երջա-  
նիկ, սլանում է դեպի իրեն սպասողի գիրկը: Ասենք հաստատ չգիտի՝ կինն իրո՞ք որևէ  
մեկն ունի՞, թե՞ այդ ամենը իր խանդոտ երևակայությունն է հնարում: Թե որ հանգիստ  
նայի՝ կինը որևէ առիթ չի տվել, բայց ո՞վ գիտե կին-արարածին:

-Օ՛Ֆ,- տնքաց նա,- մենք ենք հիմար, որ սպասում ենք: Նորմալ երկրներում գենե-  
րալները նման հարցեր չեն լուծում: Գեներալի գործը բանակն է, իսկ մենք եկել ենք, թե  
խոտհարք տուր, երեխայիս ուսման վարձը զիջիր, բժշկին ասա՝ ձրի վիրահատի...

-Գործի անունն ի՞նչ է, թող օգնի, էլի,- նետեց Չորչորուկը:

-Գործի անունը գեներալություն է,- սայլը թևի տակ հարմարեցրեց Անտըրը,- ասում  
եմ՝ գա, խնդրեմ, ինձ համար մի լավ սայլ ճարի: Էն փայլուն, արտասահմանյան սայ-  
լերից: Էս չոր անտերից հոգնել եմ: Թե ճիշտն ասե՛մ՝ տղաներից մեկինը մի անգամ  
փորձեցի, դուրս չեկավ: Շատ է պաշտոնական, մի տեսակ շատ է կտրում հողից, իսկ  
ես արդեն հինգ տարի է՝ սովորել եմ, որ ձեռքս հողին քսվի: Ոտքս չի քսվում, թող ձեռքս  
քսվի:

-Համա թե բանի հետև ես ընկել... ողին քսվի, հող տրորեմ, հող, հող, հող... Էդ՝  
հող-հող ասելով չէ՞ր, որ գնացիր, ոտքերդ տվեցիր, էկար: Հիմի էլ...,- կարծես ինքը  
կռիվ չէր գնացել ու ընկերոջը մեղադրում էր Հաստաբազուկը:

-Ի՞նչ, ի՞նչ... Հիմի էլ ի՞նչ,- մի ցատկով սայլին նստեց Անտըրը:

-Հիմի էլ պայմանավորվում ու խաբում են: Մա վիճա՞կ է: Առավոտից սոված-ծա-  
րավ սպասում ենք իրեն: Ինչի՞, մենք օտա՞ր ենք: Իրար հետ հաց չե՞նք կիսել: Միա-  
սին չե՞նք կռվել, իրար հետ չե՞նք տառապել: Ախր մի բուսեմ լուծելու հարցեր են...

-Կարող է մարդը նախարարություն է գնացել: Հազար հարց կա...

-Տո ի՞նչ նախարարություն,- փրփրեց Հաստաբազուկը,- ես դրա նախարարությու-  
նը լավ գիտեմ: Ո՞վ իմանա՝ որտեղ մի փեշ է տեսել կամ մի սեղանի գլխին նստած է:

-Քո ընկերն է,- նախատիքով գլուխը տարուբերեց Չորչորուկը:

-Ընկերս է, դրա համար էլ նեղանում եմ,- փնչացրեց Հաստաբազուկը, որի հոգում  
հիմա ահագին մաղձ էր կուտակվել և աչքին իր կնոջ հոմանիս կարող էր լինել ցանկա-  
ցած տղամարդ: Հասկանում էր, որ մտածածն անմիտ բան է, բայց ինքն իր վրա չէր  
կարողանում: Մեկ ուզում էր գրողի ծոցն ուղարկել ամեն ինչ և մեքենան ուղիղ Երևան  
բշել: Կզնա, նախ հիվանդանոցում կփնտրի, հետո՝ քենու տանը: Թե չգտնի, ուրեմն

## Գեղարմ Գարուն 2017

դավաճանում է: Մեկ էլ սառը բանականությունն ասում էր՝ չէ, կի՛նը երբեք բարձր չի փոխի...

-Թե դու ինչի՞ ես նրան պաշտպանում, չեմ հասկանում,- Չորչորուկին դարձավ նա,- նրան ե՛ս եմ փրկել մահից:

-Հետո՞... Որ փրկել ես, մինչև կյանքիդ վերջը կյանքն ուտելո՞ւ ես:

Չորչորուկը տեսնում էր, որ ընկերոջ հետ ինչ-որ տարօրինակ բան է կատարվում այսօր, բայց գլխի չէր ընկնում: Նա չգիտեր, որ ընկերոջ սրտի մեջ հուսահատություն ու մաղձ է կուտակվում ժամ առ ժամ: Մայր մտնող արեգակին նայելով՝ նա ավելի էր նեղսրտում, գիշերը ո՞նց է մենակ մնալու տանը: Պատերազմից առաջ ավարտեց շինարարությունը: Այն ժամանակ ձեռքը տաք էր ու փողի պակաս չուներ հիմիկվա պես: Հիմա տունը արտասահմանյան թանկարժեք դագաղ է հիշեցնում և գիշերն ի լույս նրա ընդարձակ-սառնությունը հանելու է հոգին: Թե հանդիպեր գեներալին, մի քիչ բենզին կուզեր, կլցներ մեքենան ու կքշեր Երևան, բայց հիմա...

-Իրենք պետ են դարձել, մեր կյանքն են ուտում: Իրենց ի՞նչ կա, ուր ուզեն՝ կքշեն: Ո՛չ բենզինի պակաս են զգում, ո՛չ մեքենայի կարիք ունեն: Էս երկիրն իմն ու քոնը չէ, հիմա իրենցն է: Մենք իրենց ինչի՞ն ենք հարկավոր: Առավոտից սոված-ծարավ չորացել ենք էստեղ: Չէր գալու, թող զանգեր, ասեր: Կարող է՝ հեռախոսի վարձ պիտի մուծեր:

Հաստաբազուկը վեր կացավ տեղից, մեջքը հենեց պատին: Յեմենտ-ավագով ծեփված պատը տաք-տաք էր, ու նրան դուր էր գալիս այդ տաքությունը: Չգիտես ինչու այն նմանեցրեց կնոջ շթե շորի տակ թրթռացող ազդրի տաքությանը և արյունը գլխին խփեց: Քանի՜ անգամ էր առաջարկել երեխա վերցնել: Տղա, թե աղջիկ, իր համար միևնույնն էր: Կվերցնեին ու կինն այդպես քարեքար չէր խփի իրեն: Ինքն առաջարկեց, կինը հակառակվեց: Հետո կռիվ եղավ: Իսկական կռիվը սրա դիմաց ի՞նչ է: Մա ուրիշ կռիվ է: Ինքը որքան էլ որ արդար լինի, միշտ պարտված է հեռանում այս կովից:

Հիմա երբ հիշում է կնոջ թաց աչքերը հոսալիտալում, սիրտը փափկում է: Կուզենար, որ հիմա էլ վիրավորված լիներ: Թեկուզ՝ ոտքը կորցրած, թեկուզ՝ մահամերձ վիրավոր, միայն թե կինը դարձյալ քնքուշ ու բարի լիներ:

Ընկերները լուռ էին, Հաստաբազուկին չէին առարկում: Թե ուղիղն ասեին՝ Հաստաբազուկը ճիշտ էր ասում: Գեներալն այլևս նախկինը չէր: Կա՛ն հոգսերն էին շատացել, կա՛ն իրենք էին հոգին հանել իրենց անվերջ խնդրանքներով, կա՛ն նախարարությունում գործերն այնքան էլ լավ չէին:

-Է՛, է՛,- ձգեց պատերազմի ժամանակ ցնցակաթված ստացածը, որ բոլորից շուտ էր եկել և փաստաթղթերը ձեռքին սպասում էր: Չէր խոսում, որովհետև խոսել չէր կարողանում: Ուշադիր հետևում էր ընկերների խոսակցությանը, մտքում հակառակվելով կամ համաձայնելով նրանց հետ: Գնացել էր հիվանդանոց, հատուկ մասնագետը փորձել էր նորից խոսել սովորեցնել նրան, բայց նա ընդդիմացել էր, մտքում հազար հայհոյանք տվել: Հո երեխա չէ՞ ինքը: Ախր ամեն ինչ գիտի ու մտքի մեջ խոսում է, ուղղակի բառերն արտասանել չի կարողանում: Չայրացել էր, գայրույթը բառերով արտահայտել չէր կարողացել, բացականչել էր սովորականի մման և թողել, հեռացել էր հիվանդանոցից: Հետո անվարժ ձեռագրով նամակ էր գրել գեներալին, որ հանդիպման ժամանակ հեշտ լինի ու ծառերի տակ, հիվանդության պատմությունը ձեռքին, սպասում էր: Նամակը երկար չէր, գրված էր դպրոցական քառակուսի տետրի թղթի վրա, ընդամենը մեկ նախադասությամբ. «Ինձ ուղարկիր արտասահման՝ բուժվելու»:

## Գեղարմ Գարուն 2017

Ողջ օրը սպասել էր համբերությամբ, բայց հիմա այլևս չէր դիմանում: Դրա համար էլ վեր կացավ, թափ տվեց շավարի հետևն ու քայլեց:

-Ո՞ւր,- հետևից ձայն տվեց Հաստաբազուկը:

-Է՛, է՛,- դժգոհ մզզաց ցնցակաթված ստացածը, մատով ցույց տվեց մայր մտնող արևը, կռացավ, անցավ ուղեփակոցի տակից և քայլեց մի քիչ գայթելով ու անհաստատ:

-Ի՞նչ պակաս գեներալացու է,- անկոթ ծխախոտը փստացրեց Անոտն ու սայլակը հրեց դեպի պահակետի դուռը: Գլուխը ներս մտցրեց ու դիմեց զինվորին,- մի զանգիր շտաբ կամ ուրիշ տեղ, իմացիր՝ կգա՞...:

Զինվորը ճպճպացրեց աչքերն ու բացասաբար շարժեց գլուխը:

-Ես իրավունք ունեմ միայն հերթապահ սպային հարցնելու, իսկ սպան ասաց՝ չգիտե:

-Թյու՛,- գայրացավ Անոտն ու սայլակը կատաղությամբ հետ հրեց,- ա՛յ քեզ գեներալ:

Նախքան ոտքերը կտրվելը ինքը ինքնաձիգի առաջն էր արել թշնամու տասներկու զինվորի, բերել, հասցրել էր իրենց դիրքերն ու չէր վախեցել: Պատահել էր՝ անցել էր թշնամու թիկունքը, առանց ահ ու վախի ուսումնասիրել դիրքերը և անվնաս ետ էր վերադարձել, բայց հիմա անգործությունից չգիտեր՝ ինչ աներ: Իրենց ընկերը, արդեն քանի անգամ խաբում է իրենց: Իրեն՞ք են մեղավոր, թե՞ կյանքը, դժվար է ասել: Հիմա ընկերների մեջ ավելացել է բժնողների թիվը: Մտածում են մի բան, ասում՝ բոլորովին այլ բան: Վախենում են մի անպատեհ խոսք ասեն, գնա, ընկնի գեներալի ականջն ու նա այլևս չընդառաջի: Ուզեց դժգոհել, բայց լեզուն առավ ատամների տակ ու սայլը քշեց, գլուխը կռացրած անցավ ուղեփակոցի տակից ու գնաց:

Հաստաբազուկը մնաց նստած: Գլուխը կախել էր ծնկների վրա ու տնքում էր: Մի քիչ այն կողմ, մթնշաղի մեջ գրաստի սովոր համբերությամբ սպասում էր հնամաշ ավտոմեքենան: Նա ուզում էր տեղից վեր կենալ, բայց անելիքը չգիտեր: Տուն գնալ չէր ուզում, մարդու երես տեսնել չէր ցանկանում: Պահակետի լուսամուտից լույսը ցայտում էր ծառերի վրա: Լուսավորված տեղում հնձելուց հետո երկրորդ անգամ կանաչող խոտը մի քիչ դեղնավուն էր: Գետնից նեխած տերևի, փոշու և նորածիլ խոտի խառը հոտ էր գալիս: Նրան թվում էր, թե գեներալն իր կնոջ հետ մի տեղ քեֆ է անում: Այդ միտքը ոչ մի կերպ ուղեղից հանել չէր կարողանում, դրա համար էլ վեր կացավ ու քայլեց դեպի մեքենան: Ավելի լավ է՝ քշի մի կողմի վրա, թեկուզ «նիսյա», մի լավ խմի:

-Էլ չե՞ք սպասում,- հարցրեց պահակետի զինվորը:

-Ո՞ւմ:

-Գեներալին:

-Քո գեներալի էլ...,- նետեց Հաստաբազուկն ու գազ տվեց:

...Քիչ անց զրնգաց պահակետի հեռախոսը: Զինվորը վերցրեց լսափողը, զգաստ կանգնեց ու գեկուցեց:

-Գնացին, պարոն գեներալ... Այո, բոլորը... Լսում եմ՝ բացել ուղեփակոցը:

Բարձրացավ ուղեփակոցը և մեծ արագությամբ դեպի մայրաքաղաք սլացավ նաև գեներալի գրահասպատ ավտոմեքենան:

Granish.org

Երկխոսություն

**Յուրի ԲԵԼԻԿՈՎ -  
Նվարդ ԱՎԱԳՅԱՆ**

**ԻՍԿԱԿԱՆ  
ՌՈՒՄՆԵՐԸ,  
ԿԱՄ  
ՁԵՐ ՀԱՂԹՈՂԻ  
ՊԱՏԿԵՐՈՎ  
ՍԿԱՀԱԿԸ**



**Յուրի ԲԵԼԻԿՈՎ** - Հենց այնպես չէր, ախր, որ հիշողությանս մեջ խրվեցին Իգոր Շկյարեևսկու այս տողերը. «Դպրոցն ավարտելու քսանամյակը Նոր դիմավորեցի: Այսօր չեմ գնա այնտեղ...»:

Իսկ ես, հիմարս, գնացի: Ոչ թե քսանամյակի, այլ թե Տերը գիտի՝ ժամանակի որ խորքերն ընկած դպրոցական հոբելյանի: Այն կազմակերպողները հետաքրքիր բան էին մտածել. «մերձակա» տարիների թողարկումների շրջանավարտներին տեղավորել էին պարահատակի պարագծով շարված, ճերմակ սփռոցներով սեղանների շուրջ, մնացյալին /այդ թվում եւ իմ խունացած տարվան/ երկրորդ հարկի թևերում, որոնք փակուղու էին նման պարաշրջանի գլխին: Լուսավորությունն այստեղ սնվում էր պարահատակի աղբյուրներից, ըստ այդմ էլ սեղանները հայտնվել էին կիսախավարում, դե, իսկ «իմ» տարվա սեղանը հո թաղված էր մթան մեջ: Բայց ամենից կանխատեսելին՝ որ այդ սեղանի շուրջ ես գտնվում էի լիակատար մենության մեջ...

Մտավորապես նույն զգացումն եմ ունենում՝ 2002 թվականին Մոսկվայի «Գրաալ» հրատարակչության լույս ընծայած «Անհայտ պոետների ապաստան: Դիկոռոսներ» գիրքը թերթելիս: Այն կազմողը ես եմ եղել: Ցնցվում եմ ներքուստ եւ ցուրտ զգում: «Ապաստանի» աշխարհագրական ընդգրկմամբ քառասուն հեղինակներից մեկուկես տասնյակ տարում կյանքից հեռացել են քանի՜-քա նիսը: Ինչպես «Լիտերատուրնայա գազետա»-ի էջում հընթացս նրանց բնութագրել եմ՝ դիկոռոսները «կյանքի ծայրագրի բանաստեղծներ» են:

Եթե բացելու լինես անթղլոգիայի առաջին բաժինն ու վերից վար հայացքդ տանես բանաստեղծական շար-

## Գեղարմ Գարուն 2017

քերի գլխագրերով, դրանք կկազմեն ռուսական հոգու թռիչքների եւ անկունների ինչ-որ մետաֆիզիկական զարգացում /համենայնդեպս, նման ինտրիգ են ես ներհայել՝ շարքերի գլխագրերն ու բովանդակությունը հերթադրելով միմյանց/։ Ահա նրանցից մի քանիսը՝ նշածս հերթադրածությամբ. «Ռուսները գալիս են» /Անդրեյ Կանավչիկով/, «Թող բռնատեղն զգա ձեռքս» /Սերգեյ Լուգան/, «Պահպանել են «տաքացած ֆլեյտան» /Իվան Վորոբյով/, «Իսկ թեւավոր արարածներին միայն ցանցերը» /Նադեժդա Գերման/, «Սամձը հնարել են հետո» /Ալեքսեյ Շմանով/, «Նա փոքրիկ կտոր էր կտրում, բայց ստացվեց մեծ հատվածք» /Վալերի Աբանկին/, «Այդ խնջույքի մասնակիցը չենք» /Սերգեյ Կուզնեչիխին/, «Ալարում են անգամ խաչակնքել» /Բորիս Կոսենկով/, «Ընկել էր տղամարդն աշնան ցեխում» /Ալեքսանդր Յուլիշև/...եւ այդպես՝ մինչեւ վերջնուն աղոտկեն ու թախժոտ տոնայնությունը։

«Իսկական ռուսներ»՝ այսպես է անվանում դիկոռոսներին Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում ապրող հայ գրող Նվարդ Ավագյանը։ Այն քառասունից մինչեւ այժմ կենդանի մնացած քչերը պարզապես ցնցված էին. Նվարդն աշխարհի ամենահին լեզուներից մեկով՝ լեզվով Գրիգոր Նարեկացու ու Եղիշե Չարենցի, թարգմանել է ամբողջ անթուրգիան, իսկ դա ավելի քան երեք հարյուր էջ է... Ավելին. թարգմանությունը լույս է տեսել առանձին գրքով եւ Արցախում գտել իր ընթերցողին։ «Չճանաչվածները» ճանաչում են ստացել «չճանաչված հանրապետությունում» /ինչպես ՋԼՄ-ներում է ընդունված անվանել Լեռնային Ղարաբաղը/։ Եվ դա՝ մի ժամանակ, երբ հետխորհրդային տարածքում գեղարվեստական թարգմանության կամուրջները, եթե ոչ լիովին այրված ու ոչնչացված

են, ապա հաստատ խարխլված են, լքված ու անխնամ։ Եվ այդ ճոճացող ու ոչ անվտանգ կառույցով դեպի հանդիպակաց ափ են դժվարորեն շարժվում խիզախ ու միայնակ հաղորդիչները։ Գնում են առանց դարձի առանձնակի հույսի։ Ինչպես իր էլեկտրոնային նամակներից մեկում Նվարդն է ինձ գրել՝ «Բարի գիշեր։ Մեզ մոտ ընդունված է նաեւ ավելացնել. «Եվ որպեսզի առավոտյան ոչ ոք պակասած չլինի մեզնից»։ Որովհետեւ այդպես լինում է հազվադեպ։ Իսկ հաճախ... լսում ենք, որ սահմանին նորից զոհ ունենք»։

Խոսքի ճիշտն ասեմ՝ արժեր այս կյանքում քիչ ավելին մնալ, որպեսզի ձեզ կնքեին ոչ թե «նոր» կամ «հին», այլ՝ «իսկական ռուսներ» անվամբ։ Ընդ որում՝ ոչ թե ձեր հայրենիքում, այլ փոքրիկ անկյունում՝ արդեն գոյություն չունեցող կայսրության, որի մի պատկանելի մասն էր ոչ այնքան վաղուց հանդիսանում ձեր հայրենիքը։ Բայց նրանք էլ, ովքեր շուտ հեռացան կյանքից, կարծում են՝ երբեք չեն կորցրել այդ ներքին, ու եթե կուզեք՝ գաղտնի իմացությունն իսկական ռուսների մասին։

Նվարդ, ենթադրում են, որ դիկոռոսները սփռված են Երկիր մոլորակով մեկ եւ սպասում են շրջապատի կողմից ճանաչվելու ժամին։ Նրանց ռուս բանարվեստային տարերքի «տեղադրումը» հայոց լեզվի բանատարերքի մեջ լավագույնս է վկայում կռահմանս իրավացիության մասին։ Այդուամենայնիվ, ի՞նչն է ձեզ մղել դրան։ Հստակ գիտեմ, որ գիրքը տպագրական էջերի հին շրջունով չի հասել ձեզ։ Այո, «Անհայտ պոետների ապաստան»-ի տեքստերը ընդարձակ տարբերակով եղել են համացանցում։ Բայց, այնուամենայնիվ, պետք էր, չէ՞, որ իմանայիք դրանց գոյության մասին, որպեսզի ինչ-որ տեղ բռնեցնեիք... Ինչու՞ եք ընտրել հիմնականում անհայտ բանաստեղծներին, ոչ թե ճանաչված ու



մրցանակներով զարդարված «ֆիզուրանտներին»: Ի վերջո, տվածս հարցերին, պարզ ու մանկականորեն զարմացած, կգումարեի այս մեկն էլ՝ «Ո՞վ եք դուք»:

**Նվարդ ԱՎԱԳՅԱՆ** - Մենք՝ դա առաջին հերթին «Ոգի-Նաիրի» գեղարվեստի կենտրոնի ղեկավար, եւ այդ շառավղում՝ նաեւ թարգմանական գործի գլուխն ու պատասխանատուն՝ Զրանտ Ալեքսանյանն է: Զաջորդ հերթին էլ, բնականաբար, թարգմանիչը, այսինքն՝ ես:

Ինչու ենք ընտրել դիկոռոսների՞ անթուղզիան: Կարծում եմ, Յուրի, որ, ինչպես հարմար գտաք հիշեցնելու, գրականության «ճանաչված ու մրցանակներով զարդարված ֆիզուրանտների» մոտ թարգմանիչների պակաս հազիվ թե երբեւէ եղած լինի... Իսկ այ չճանաչված բանաստեղծներին նման ուշադրություն պարզապես անհրաժեշտ է: Սա՛ առաջինը: Երկրորդ, նայած թե ինչպիսի բանարվեստի մասին է խոսքը: Ես ներկայացնում եմ փոքրիկ ու երիտասարդ մի հանրապետություն, որի կենսագրությունն սկսվել է բողոքից. բողոք՝ հանուն ազատության, ազգային ինքնագիտակցության պահպանման, տեղաբնիկ ժողովրդի հանրաճանաչ եւ անզամ ամենատարրական իրավունքների պաշտպանության: Այդ իսկ պատճառով «բողոք» բառն ինձ համար ներծծված է հարգանքով: Եվ զուգարությունն այստեղ մեկն է ու պարզ. «Անհայտ պոետների ապաստան /Դիկոռոսներ» անթուղզիայում ներառված հեղինակների մեծամասնության մոտ ես տեսել եմ բողոքի զգացումը: Ոչ թե խռովության, նկատի ունեցեք, այլ՝ ազնվամիտ բողոքի՝ հիմնված այն ամեն բացասականի վրա, որը, թվում է, մշտական գրանցում է ստացել իրենց հայրենի երկրում:

Օրինակներ բերե՞մ գրքից. «Դե,

Մոսկվան մի՞թե Ռուսաստան է որ, /Ըստեղ Ռուսիայի վաղուց չկա հոտ, /ըստեղ ապրողը թե պարոն էլ չի, /Բայց դե մի ուրիշ արմատից է, նոր»: Այնուհետեւ. «Մենք դրանց շարքը կմտնենք, մի՞թե, / Մեր շան մշուքով...»: Սա Բորիս Կոսենկովն է՝ այդ ժամանակ Սամարայում ապրող: Իսկ այժմ՝ Օբնինսկում ապրած, բայց կյանքից շուտ հեռացած Վալերի Պրոկոշինը՝ իր «Նամակ Իոսիֆին» բանաստեղծության մեջ. «Երրորդ Զոռնում ցուրտն է իջել ներկա պահին, /Իջնող ձյունն էլ հետմահու դիմակն է Նախագահի, /Ու մենք նորից կալուգայաներձ Ալյասկայում /Ցնորվում ենք իրույթի եւ հորինվածքի միջեւ. /Դոնապանի՝ ծեր Կուզմայի ասած՝ /Դեպի հյուսիս ահ ու վախի նույն աչքով ենք նայում»: Իսկ ահա տողեր՝ մերիկ-Ռուսաստանին դիմող անտունի Արկադի Կուտիլովի «Խորթ զավակ» բանաստեղծությունից. «Զսիրեցիր ինչու՞ դու ինձ, /Ամոթից դենք-երես թեքած /Յանդուրժանք էր եղածդ լոկ.../Բռնկումի մոլուցքի մեջ սիրտս անչար/ Քեզ հետ կապ է փնտրել հաճախ, /Խոստումներիդ միշտ հնազանդ՝ /Շա՛տ տարիներ սպասելով քո ճանաչման: / Զրաժեշտիս տխուր ժամին /Դե, ա՛ռ, վերցրու ամտեր գլխի հմայիլն իմ»: Եվ վերջապես, մահկանացուն նույնպես վաղ կնքած Գեմադի Կոնոնովը՝ պսկոպյան՝ ավելի քան խոսուն Պիտալովո անվամբ փոքր քաղաքից. «Անձրեւի տակ կանցնեմ՝ տալով անունները ծովային չարք ու դեւերի՝ /Առավոտյան լոգարանում երբ փրփուրն է ձյունաճերմակ, /Վերջ չունեցող անձրեւի տակ կլողացնեմ հայրենիքս՝ սկսած ծայրից տրեխների: /Կազանովաները իրենց հոգնածությունը մաքրում են գերխոնջացած անդամներից, /Տիեզերքը մաքուր նորից, անձրեւներն էլ ի՞նչ մի բան են տկլոր ապրողների համար: /Վճարիր իմ դիմաց: Եվ թող մանրը մնա քեզ մոտ»:

## Գեղարմ Գարուն 2017

Դուք, որպես անթուղոգիայի սեւեռուն կազմողը, հաստատ կասեք, որ նման բարձր «բողոքային» օրինակների այնտեղ կարելի է հանդիպել գրեթե յուրաքանչյուր էջում: Սակայն կա եւ երրորդ փաստարկը /որը կարելի է համարել գլխավորը/, թե մենք ինչու ենք մեր հայացքը դարձրել դիկոնոսների: Անթուղոգիան, ինչու՞ թաքցնենք, մեզ գերել է հեղինակների կենսագրություններով եւ նրանց կից կուռ ու տրաքուն բանաստեղծություններով... Դե, մի՞թե չես «գերվի». մարդն, անտունի դարձած, ներեցեք, «ալկաշության» է զբաղվում՝ արժանանալով եթե ոչ արհամարհանքի, ապա՝ համընդհանուր անուշադրության, ու միաժամանակ... գրում բանաստեղծություններ: Այն էլ ինչպիսի՞ դառը եւ նուրբ, երբեմն՝ զայրալից, երբեմն՝ հեզմական-տխուր, եւ սակայն միշտ՝ հրաշալի: Վերհիշենք նույն Կոնոնովի «Ահա իմ դիպլոմը եւ անձնագիրը...» բանաստեղծության չարածճի ու խորախոհ դարձվածքները. «Ես բոմժ չեմ, պարոնայք: Ասում են, որ ես ունեմ հոգի: /Մութում եմ կացարանի համար, /հաշվառված եմ արհմիության եւ ամուսնության ցուցակներում:/ Երկիրն ունի հերոսներ. Դոբրինյա, Մալչիշ-Կիբալչիշ:/ Այնպես որ՝ անտոհմ չեմ: Պետք լինի՝ կնեմնեմ Ռուսիայի համար...»:

Դիկոնոսները գրում են գրավիչ անկեղծությամբ ու վստահությամբ եւ ապրում են իցե թե «մեղք» գործելով շատ բաներում, բայց ո՛չ մայրենի լեզվի նկատմամբ: Նրանք հայրենական բանարվեստի հիմունքների «հավատարիմ հպատակն» են մնում, իհարկե, եվրոպական պոեզիայի «բնահյութից» քիչ-ինչ ներառելով ռուս բանաստեղծական լեզվի մեջ: Վելիկիե Լուկիում ապրած Անդրեյ Վլասովի մոտ այսպիսի տողեր կան. «Թող որ ամեն ինչ վաղուց մեկ է, /Թող անցողիկ է այստեղ ամեն ինչ, /Բայց մայրենի լեզվի եւ Աստծո առջեւ

մաքուր է խիղճն իմ»: Իսկ հիմա կարդանք Բորիս Կոսենկովի «Դափնեկիրը» բանաստեղծության /որում նա, Պրոկոշինի նման, դիմում է, ըստ երեւթին, Իոսիֆ Բրոդսկուն/ վերջին տողերը.

«...Ցավոտ չէ, արդյո՞ք, /երես թեքելով ակունքներից յուր, լքած հայրենիք՝ /Մատելն անխռով ու անդարդ հեռվում /հանձարեղ տողեր գրելն անիճյալ լեզվով մայրենի»:

Գաղտնիք չէ, որ թերթ ու հանդեսում մեկ-երկու հրապարակումով եւ կամ շատ վաղուց տպագրված նիհարիկ գրքույկով «հանրամատչելի» չես դառնա: Արդյո՞ք, այդքանը բավական է, որպեսզի լայն հասարակությանը հասնի մինչ այդ անհայտ բանաստեղծի պոեզիան: Հարցնում եմ, որովհետեւ գիտեմ, որ դիկոնոս-պոետների համար Ձեր ճակատամարտն սկսել էք հենց պարբերական մամուլում /սկզբում՝ «Տրիբունա», հետո՝ «Տրուդ», ապա՝ «Լիտերատուրնայա գազետա» թերթերում, այնուհետեւ՝ «Դեն ի նոչ» եւ «Դետի Ռա» հանդեսներում/ ու հաստատ գիտեք՝ ինչ է նշանակում անգամ մեկ անհայտի ասպարեզ դուրս բերելը: Բայց անթուղոգիան՝ քառասուն «ինքնացան վայրենաճների» /այդ պատճառով էլ՝ անհայտ-չճանաչված բանաստեղծների/ ընդգրկմամբ... Այնպես որ, այդ Դուք եք եւ միայն Դուք, թանկագին ընկեր, իսկական սխրանք կատարել: Եթե ուզում եք իմանալ, ապա այնպիսի մի աշխատատար գործ ստանձնելուն, ինչպիսին հաստափոր անթուղոգիայի թարգմանությունն էր, ինձ մղել են նաեւ Ձեր տիտանական ջանքերը՝ ոնց որ թե օրինակ ծառայելով...

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Ես ընդամենը հետեւել եմ Ֆիդել Կաստրոյի իսկականից տիտանական օրինակին. «Ով ընդունակ չէ պայքարելու ուրիշների համար՝ երբեք ի զորու չի լինի պայքարել եւ իր համար»: Պուշկինյան թեւավոր դարձ-

## Գեղարմ Գարուն 2017

վածքները՝ «խնջույք ժանտախտի ժամանակ», «Ու մթին անդնդի եզրին»... նրանց մասին է՝ դիկոռոսների: Նրանց ցուցակը, որ աճում է երկրաչափական պրոգրեսիայով, եթե հայացք զցելու լինենք ամբողջ բանաստեղծական Ռուսաստանի վրա, նման է ռուսաստանյան սոցիումի կենսակարգի նկատմամբ դատավճռի. պերմից երկու պոետ Նիկոլայ Բուրաշնիկովն ու Բորիս Գաշենն սպանվել են, Անատոլի Կուլտիշենն իրեն ցած է նետել մոսկովյան բարձրահարկից, ծեծկռտուքում հայտնված եկատերինբուրգի Սերգեյ Նոխրինը վախճանվել է ատրտայի պատռվածքից, Արկադի Կուտիլովը հայտնաբերվել է Օմսկի գրոսպուրակներից մեկում՝ անկենդան վիճակում, 19-ամյա Իլյա Տյուրինը ջրահեղձ է եղել Մոսկվա գետի Կիրովյան գետախորշում: Սրանք՝ անթուղոգիան հրապարակվելու վրա: Բայց հետագա տասնհինգ տարում Գենադի Կոնոնովից ու Վալերի Պրոկոշինից բացի կորցրել ենք նաև Արսենի Բեստոնովին, Յուրի Վլոդովին /մահացել են ծանր հիվանդություններից/, Օլեգ Բալեգինին /ատրտայի պատռվածք/, անտունի դարձած Վալերի Աբանկինը հրդեհից խեղդվել է մի լքված տնակում ...

Իսկ եթե ավելի լայն վերցնելու լինենք /իսկ դուք, որպես թարգմանիչ, հենց այդպես էլ արել եք՝ «Ապաստանի» արցախյան անթուղոգիայի մեջ ներառելով եւ դիկոռոսների կայքի որոշ հեղինակների/, ապա ծանր հիվանդությունը մեզնից խլել է եւ ձեր կողմից հիշատակված Անդրեյ Վլասովին, ում պոեզիայի մասին դեռ ականավոր լեզվագետ Յուրի Լոսմանն էր խոսել: Իսկ ահա վերջերս էլ կյանքին հրաժեշտ տվեց կրասնայարսկի Զամլետ Զարությունյանը: Զիվանդանոցում պառկած՝ նա մահանալուց առաջ հասցրել է տեսնել ձեր կողմից հայերեն թարգմանված իր բանաստեղծությունները /գիրքը նրան

հանձնել է դիկոռոս Սերգեյ Կուզնեչիխինը/... Ի դեպ, Զամլետի բանաստեղծությունները դիկոռոսների կայքում չկան, այդուհանդերձ, դուք ակնհայտորեն ինչ-որ ներգոյությունը որսալով նրա ներքին հարազատությունը դիկոռոս-բանաստեղծների հետ՝ առանց իմ մասնակցության նրանց միացրել եք Զամլետին, ում ես անձամբ չէի ճանաչում, գիտեի միայն Սերգեյի պատմածներով: Ես, իհարկե, հասկանում եմ, որ այդտեղ, երեւի, ինչ-որ չափով դեր է խաղացել հայկական գործոնը, բայց ձեր կարծիքով՝ ի՞նչն է հեղինակներին մղում «դեպի դիկոռոսները գնալուն» /մենաստան գնալու նմանությամբ/ եւ մարդկային ու պոետական ի՞նչ հատկանիշներ են մերձեցնում, հարազատացնում նրանց:

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Ուրեմն՝ Զամլետն էլ արդեն չկա... Ափսո՛ս: Թույլ տվեք ասել, որ ինչ տարիքում էլ հեռանալու լինեն բանաստեղծները՝ վաղ են «լքում» մեզ... Դուք ճիշտ եք. իմ պատասխանատվությամբ նման «մեղք» ամել են ինձ վրա՝ Զամլետին ներառել գրքի մեջ, բայց՝ ոչ այն, կամ՝ լոկ այն պատճառով, որ Զարությունյան է... Անկեղծ կլինեմ. նրան «արցախյան» անթուղոգիա մտցնելուն վերջնականապես մղել է Սիբիրի պոեզիայի անթուղոգիայի մասին Վլադիմիր Յարանցեւի հոդվածը. անթուղոգիա, որտեղ Զամլետը վատ հարեւանության մեջ չէ մյուս հեղինակների հետ: Այսպես ասած՝ օտար չի երեւում, ուրեմն եւ՝ հարազատության եզր ունի, թեւ ինքը ատաղձագործ չէր, ոչ էլ փայտահատ եւ այլն, այլ՝ վիրաբույժ, գիտությունների դոկտոր, ՌԴ ԳԱ ակադեմիկոս: Ուրեմն այսպես. Յարանցեւը գտնում է, որ սիբիրյան անթուղոգիան իր հեղինակներով «ինքնայգի» է հանդիսանում, որ զավառական բանարվեստն «անմշակ» է ու «վայրենաճ», ինքն իր գլխու է՝ ինչպես տայգա-

յի մոլախոտերը: Ես էլ մտածեցի. դե, որ այդպես է, ինչու՛ մի փոքր պարտիզանություն չանեն՝ սիբիրյան անթուրոգիայի հեղինակներից մեկին տանեն... «գտարյուն» դիկոռոսների մոտ: Թե՞ «դիկոռոս» բառն առաջին անգամ մեկ այլ բանաստեղծի՝ Անդրեյ Կանավչիկովի լեզվից չէ հնչել, հետո էլ եզրույթի վերածվել՝ լայն շրջանառության դրվել Յուրի Բելիկովի կողմից: Դա հավասարապես արդար է, ինչպես նաև այն՝ որ «Անհայտ պոետների ապաստան /Դիկոռոսներ/» գիրքն էլ լույս է տեսել... սիբիրյան անթուրոգիայից վեց տարի առաջ:

Լուրը՝ թե անթուրոգիայի հայկական տարբերակը հասել է մահամերձ Յանլետին, ցնցեց ինձ: Շնորհակալություն Սերգեյ Կուզնեչիխինին, որ գիրքը տվել է նրան... Եթե ես իմ թարգմանությանը թեկուզ բարոյահոգեբանական առումով դույզն ինչ օգնել եմ «կենսեզրի բանաստեղծներից» որեւէ մեկին, նշանակում է՝ զուր չեմ ջանք թափել: Մի անգամ համացանցում «թափառելիս» պատահաբար հանդիպեցի մի բանաստեղծության /հեղինակի անունը չեմ հիշում՝ ազգանունը Դանիլովսկի է/, որում «եզր» բառն օգտագործված ձևով ու ներքին տարողունակությամբ ամուր «բռնեց» ինձ. «Սկսիր հոգսաշատությամբ արբեցումդ տեսական, ոտք դիր ծայրեզր, /Ես հո գիտեմ՝ ինչի է վերածում Մարդուն կենցաղը, կողմն իրիկվա/ Ինչպիսի կեղեւով է ծածկվում նա...»: Կարդացի ու մտածեցի, թե ընդհանրապես ինչպես կարող է բառը գերազանցել ինքն իրեն կամ բառարանային սահմանները: Ինչպես է դառնում երեւոյթն ընդհանրացնող խորհրդանիշ, խորհրդանիշ՝ մարդկային ողբերգության:

Դժբախտությունն այն է, որ մինչ այժմ գոյություն ունի տափակ մի պատկերացում, իբր՝ անվիճելի տաղանդն իր

համար ուղի կհարթի... Կներեք, իսկ եթե ինչ-որ մեկը չունի՞՞ այդ «ուղետոփան» ուժը: Կամ լինելով ոչ միայն տաղանդավոր բանաստեղծ, այլև ի բնե հպարտ անհատ՝ չի՞ ընդունում... առաջ գնալու համար շատերի նման արմունկներով հրելն ուրիշներին: Եվ ապա՝ անհայտների մասին ի՞նչ խոսել է՝ երբ, պարզվում է, որ անգամ որոշակի չափով հայտնիների՝ առջև էլ է իջեցվում ուղեփակոցը... Չեմ բացառում, թե Չեզ էլ հանդիպած լինի ցավալի տեղեկատվությունն առ այն /ես կարդացել եմ համացանցում, կայքի անունը, ցավոք, չեմ մտապահել/, թե Վսեվոլոդ Նեկրասովի բանաստեղծությունների մասին ինչ է ասել Կիրիլ Կովալչին. «Այո, գիտեմ: Այ որ մեռնի՛ կտպագրեմք»: Դա հայերենում էլ կա. «Գնա մեռիր՝ արի սիրեմ»... Բայց ինչպես ցույց է տալիս կյանքը՝ շատերին հետմահու էլ չի ժպտում լույսը: Ամեն տեղ չէ, որ կգտնվի Յուրի Բելիկով, որպեսզի գտնի քեզ ու թեւիցդ բռնած՝ անհայտության խավարից հանելով՝ տանի մտքնի գրականության լուսավոր բեմառաջք: Ահա եւ ստիպված ենք արձանագրել, որ շարունակվում է չճանաչված տաղանդների նկատմամբ անպատշաճ վերաբերմունքը...

**Յու. Բելիկով** - Անկեղծ ասած՝ լսողությունս սղոցեց՝ իբր Կիրիլ Կովալչին պատկանող արտահայտությունը: Մանավանդ՝ ուղղված Վսեվոլոդ Նեկրասովին: Որքան ինձ է հայտնի՝ Կիրիլ Վլադիմիրովիչը ողջ կյանքում ու հատկապես «Յունոստ» ամսագրում աշխատելու ընթացքում, ընդհակառակը՝ ավանգարդային շաղխի շատ հեղինակների է օգնել տպագրվելու: Եթե ենթադրելու լինենք, որ դրանք իր բառերն են, ապա նա ավելի շուտ կարող էր նման թուղիկ ակնարկ անել ոչ թե Նեկրասովի, այլ... Գենադի Կոնոնովի կամ Անդրեյ Վլասովի տեսակի որեւէ դիկոռոսի մասին, նույնիսկ ոչ թե ակնարկել,

այլ մտածել: Վերադառնանք, սակայն, Յանվետին:

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Նրա բանաստեղծություններում ես իրոք դիկոռոսային «շնչառության» տեմբր եմ զգացել: Ձեզ ծանոթ չե՞մ թվում նրա գործերում առկա թախիծն ու թեթեւ հեզմանքը: «Տապանագիր»-ում, օրինակ: Կամ «Ծլլացող աստղ»-ում. «Այնպես դժվար է կողմնորոշվել՝ ինչն ինչոց է, /Ու՞մ տաս քո նվաղած ձայնը, /ինչպե՞ս հաղթահարես իրարանցումն այս», «Ներիր, հոգի, / որ քաշքշել եմ բառը / եւ թափառման տարել նրան պարապուտում»: Բայց նրա թախիծը միշտ տաք է եւ առկայծուն, ներսում լավատեսություն կրող. «Հագիվ թե նա ների: / Այդուհանդերձ՝ կվերածվի /լուսավոր տաճարի»: Բանաստեղծը մի առիթով խոստովանել է, որ Վերակառուցումից հետո վերագնահատում է տեղի ունեցել իր ծնողների ճակատագրում / նրանք բռնաճնշվել - դատապարտվել էին 58 հոդվածով ու քշվել Սիբիր՝ տարիներ անց արդարացվել, եւ դա իր մոտ բանաստեղծություններ գրելու ներքին պահանջմունք է ծնել: Ինչո՞վ չէ դիկոռոսի ճակատագիր: Իսկ հետո՞. միշտ բեռնված լինելով ծանր, հատկապես՝ հոգեբանորեն ծանր, աշխատանքով, որպիսին վիրաբույժ-ուռուցքաբանի գործն է, նա իրոք իրավունք ուներ ասելու, թե հպարտ է, որ կարողացել է ճեղքելով դուրս գալ իր ընթերցողների մոտ...

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Դուք տվեցիք Վերակառուցման անունը... Ստիպված ես համաձայնվել, որ այն բանից հետո, երբ վերջնականապես փլուզվեց, լուծարվեց Խորհրդային Միությունը, սկսեցին քայքայվել մինչ այդ գոյություն ունեցող, թող որ անհարկի ավել պաթոսից ոչ զուրկ, մշակութային կապերը ԽՍՀՄ-ում ապրող ժողովուրդների միջև: Միմյանցից բաժանվեցին ու հեռացան եւ լեզվական մայրցամաքները, որոնք

նախկինում իրար էին կապվում թարգմանությունների՝ գնալով ավելի կարաբելագործվող մեխանիզմներով: Այժմ համատարած դատարկություններ են: Նույնիսկ իր իսկ՝ ՌԴ-ի կազմ մտնող ազգությունների միջև: Ու հանկարծ ոչ մի շրջանակում չտեղավորվող, անսպասելի-անպատկերացելի իրադարձություն. Լեռնային Ղարաբաղում թարգմանե՛լ են դիկոռոս բանաստեղծներին: Այդ լուրը նրանցից շատերին տառաջիորեն արթնացրել է, ուշքի բերել, որովհետեւ երբ հեղինակը հաշտվում է այն մտքի հետ, որ ինքն իր գրվածքներով այնքան էլ պետք չէ Հայրենիքին / դե, իսկ պետությանն էլ՝ շատ ավելին/, նա կարող է ընկնել ստեղծագործական անաբիոզի մեջ, եթե ոչ՝ իրեն դատապարտի համրության, վիատ քաղթենու վերածվելուն: Այնպես որ, հենց դուք եք, Նվարդ, որ ռուս պոետների հանդեպ յուրօրինակ սխրանք եք կատարել, զուցե անգամ անդնդից ետ քաշել նրանցից ոմանց: Թեեւ մենք կարծես թե պայմանավորվել ենք, որ դիկոռոսներին, մեկ է, ձգում է ծայրեզրը... Բայց շատ ենք ուզում իմանալ. որքա՞ն ժամանակ եք, օրինակ, ծախսել ռուսաստանցի քառասուն բանաստեղծներին թարգմանելու համար, ինչպե՞ս եք վերամարմնավորվել նրանցից յուրաքանչյուրի մեջ /թարգմանությունն, այսր, նման է վերամարմնավորման, հետո էլ՝ չէ՞ որ պետք է պատկերային մեկ համակարգից դուրս գաս, որպեսզի մտնես մեկ ուրիշը/: Բանաստեղծներից ո՞վ է ձեզ համար առավել «դժվարը» եղել եւ ինչու՞:

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Հարցափունջ... Գործս դյուրացնելու համար պատասխանեմ հերթով: Անթուրգիան թարգմանել եմ չորս ամսում եւ գտնում եմ, որ մեկ ամսում «յուրացնել» տասական պոետի՝ բանաստեղծական պատկառելի շարքերով, այնքան էլ նորմալ բան չէ: Բայց, ինչպես ասում են, ճանապարհը

հաղթահարում է քայլողը... Հետո էլ՝ գիրքը հանձնելու հստակ ժամկետ էր սահմանված, եւ դրանից գլուխ թաքցնելու տեղ չկար: Ասել, որ լարել եմ բոլոր ուժերս՝ նշանակում է ոչինչ չասել: Այո, թարգմանչի համար մեկ հեղինակի հետ գործ ունենալը, մեկի՛ մեջ, ինչպես նկատեցիք, վերամարմնավորվելը, անհամեմատ հեշտ է, քան երբ քո առջեւ միանգամից քառասուն բանաստեղծներ են: Որպեսզի բավարար չափով հասկանաս յուրաքանչյուրի գրավոր խոսքի ու մտածողության ոճն ու յուրահատկությունը, նրա աշխարհագրորությունն ու շատ այլ ինչեր, անշուշտ, պահանջվում է ժամանակ: Ստիպված էի չբավարարվել անթուրգիայում եղած շարքերով. նրանց գործերը փնտրում էի եւ կայքում, եւ ամենուր՝ որտեղ հնարավոր էր... Հատկապես դժվար էր նրանց հետ, ում տեքստերը շատ էին հագեցած ժողովրդական դարձվածքներով, նեղ բարբառային բառերով, սլենգներով... Մի անգամ, երբ դարձվածաբանական բառարանն էլ անուժ գտնվեց օգնելու, դիմեցի հին ընկերներիցս մեկին, ով մեծացել ու ապրում է ռուսական ծայրագավառում: Նա էլ հենց բացատրեց... տղամարդկային մի թունդ արտահայտության իմաստը: Խնդալու բան է, այո՞...

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Կասեի՝ ավելի շուտ ապշեցնում են այն փութաջանությունն ու մանրակրկիտությունը, որով իրագործել եք մեր դիկոռոսների լեզուն «հայացնելու» խնդիրը...

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Ելել եմ իմ առջեւ դրած խնդրից. որքան հնարավոր է՝ «անարատ» պահել/պահպանել/ բանաստեղծությունների ինչպես «հենքը, այնպես էլ «գարդանախշերը»՝ երանգ չկորցնելով վերջիններիս գունային գամմայից: Կարծում եմ՝ հիմնականում հաջողվել է հասնել դրան: Այն մասին, թե ինչպես եմ թարգմանել: Չեմ ասի՝

դյուրին: Դե, մի՞թե հնարավոր է հեշտ աշխատել Յուրի Վլոդովի կամ Անդրեյ Կանավչիկովի հետ: Նրանց տեքստերի «դիմադրողականությունը» շատ է բարձր: Վելիկոլուկացի Կանավչիկովի «Ռուսները գալիս են» շարքը, եւ մասնավորապես՝ «Սոֆիա» եռահատվածը, թարգմանելու համար, ցեյտնոտին չնայած՝ ստիպված էի, որքան կարելի է խոր/համեմայնդեպս՝ ոչ դպրոցական եւ անգամ՝ համալսարանական ծրագրով/վերաքրքրել ստրելեցյան բունտի պատմությունը, վերակողմնորոշվել, այսպես կոչված, Խովանչիկայում, եւ ընդհանրապես՝ նորովի գլուխ հանել «պետրովչիկայից»...

Մեծ էներգածախս է պահանջել նաեւ նովոսիբիրսկցի Կոնստանտին Իվանովը... Դժվար է եղել ամենից առաջ նրա բառաձեւավորման առանձնահատկությունների անկորուստ պահպանումը: Չի բացառվում, իհարկե, թե թարգմանություններն ավելի սեւեռուն հայացքով պրպտելու պարագայում կարող են գտնվել ոչ լիովին երեւակած ինչ-ինչ նրբություններ, բայց ինչպես ինձ է թվում՝ դրանք իրոք հասցրել եմ հնարավոր նվազագույնին... Չեմ թաքցնի. Իվանովի «Տխուր տողեր» եւ «Ամեն ոք իր ուժի չափ է բարձրացնում բեռը» բանաստեղծությունները թարգմանելիս հարկ է եղել հատկապես «քրտնել»՝ բնագրի մեխանիկական «բառապատճենում» թույլ չտալու եւ չկորցնելու համար այն գունագեղությունն ու առանձնահատուկ արտահայտչականությունը, որոնցով աչքի են ընկնում այդ ստեղծագործությունները: Ինչպես նաեւ՝ տեքստ չներմուծել հեղինակին խորթ աշխարհայացքային գծեր, ճիշտ ըմբռնել նրա մտքերը, որովհետեւ «Գիլգամեշին լտող» Կոնստանտին Իվանովի բանարվեստը կառուցված է աշխարհի ու մարդկային կյանքի ավելի քան փիլիսոփայական իմաստավորման վրա. «Եվ

այդ նախածին աղաղակին, /Ինչպես Աստծուն աղոթելով ես կգնամ, /Որպեսզի հրեշտակների այգում / Տնկեմ անմահ բարդին»: Կամ էլ ահա, իմ կարծիքով, իրենց իսկ՝ դիկոռոսների գաղտնի խաչը բնութագրող այս տողերը. «Ոչ վեղարներ՝ ոչ ծիրանիք, թագ ու մական, /Երկրով մեկ ցրված՝ /տեսանելի չեն հուշատախտակների տերերը, / Տափաստաններում կորած կրեմլները...»:

Դժվարթարգմանելի դեմքերի թիվն անթուղոգիայում փոքր չէ, բայց որքան ավելի դժվար՝ այնքան ավելի հետաքրքիր էր նրանց թարգմանելը: Մեծ բավականություն են զգացել, օրինակ, Սուտուլով-Վատերինիչի, Արսենի Բեսսոնովի, Սերգեյ Լուզանի, Սերգեյ Նոխրինի, Վլադիմիր Մոնախովի, Սերգեյ Կուզնեչիխինի ստեղծագործությունների վրա աշխատելիս: Իմ ունկերում հիմա էլ է հնչում Յուրի Ասլանյանի «Պեչորական մեծուղու» թախծաշատորեն զրնգուն մեղեդին. «Ոչ այն է՝ անվերջ են մտքերս, խիստ են ու սարսռուն, /Ոչ այն է՝ քամին է Պեչորական մեծուղուց ճամբարները ձգվում...»: Իսկ Սերգեյ Կուզնեչիխինի «Գայլաշունը գազանանոցում» բանաստեղծությունը: Այն ստիպում է շան ողբերգության մեջ նմանություն փնտրել... մարդկային ողբերգության հետ: Նայեցեք ձեր շուրջը՝ կհամոզվեք. «Ոչ գայլ է, ոչ շուն, բայց կատաղի է գայլից, /Ճաղերի հետեւից պարապ մարդկանց նայում է աչքով չարալից»: Նայեք թեկուզեւ լքված երեխաներին՝ նուվորիշների ժամանակաշրջանի չսիրված ապօրինածիններին... Սիրեին՝ չէին լքի նրանց: «Նրանց աչքերում արցունքներ կան, թանձր՝ ինչպես թարախը, /Գերված գայլի եւ տափաստանային քածի որդին է: /Յանգամանքների ծնունդ, որտեղ դերում թագավորի /Եթե գամփռի հեշտանքը չէր, ապա քմահաճույքն էր տիրոջ, /Ով գայլաշանը կյանք տալու համար բացել էր փարախը: /Միախյուսվել են

երկու չարություն ու երկու ատելություն, իրոք, /Եվ երկու վախ ու երկու կիրք՝ գարնանը եռացող: /Երկու արհամարհանք, /Եվ՝ ո՛չ մի սեր»: Այս բանաստեղծությունն ինձ համար լավագույնն է՝ 21-րդ դարում կարդացածս ստիխների շարքում: Ընդհանրապես, կարդում ես դիկոռոսներին, ու սիրտդ սեղմվում է մեծ անարդարության զգացողությունից, եւ գլուխդ է այցելում մեղավոր մի միտք. իսկ եթե չլիներ Բելիկովը, կամ եթե նա չաներ այն, ինչ արել է, ի՞նչ տեղի կունենար այդ ապաբախտ ու հիանալի պոետների հետագա ճակատագրի հետ...

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Գիտե՞ք, Նվարդ, իմ տնային գրադարանում «Անհայտ պոետների ապաստան»-ի՝ ինձ համար հազվագյուտ մի օրինակ են պահում, նրա սկզբնական էջերը համեմված են գրքի հեղինակների ձեռագրերով: Իսկ նրանցից ոմանք, կրկնեմ, արդեն կենդանի չեն... Իրենց մտքերով ու մաղթանքներով այդ ինքնագրերը նրանք կատարել են 2002 թվականին՝ ինչպես Կոնստանտին Իվանովն է կնքել՝ «դիկոռոսների համաժողովում»: Այն կազմակերպվել ու անցկացվել է Մոսկվայի ժուռնալիստների տանը՝ «Տրիբունա» թերթի խմբագրության կողմից, որն, ի դեպ, ապահովել էր եւ գրքի հրատարակությունն ու լայնածիր Ռուսաստանի տարբեր անկյուններից անթուղոգիայի հեղինակների նկատելի մասի ներկայությունը միջոցառմանը: Ես հիմա մի կողմ են դնում «տիտղոսները», որոնցով ձեր համեստ ծառային մտերմական պոռթկման մեջ պատվել են երախտագետ դիկոռոսները, բայց կապածածկագրեմ հիշարժան մակագրություններից գոնե մեկ-երկուսը. «Յուրի Բելիկովին...ով իր թանկ ժամանակը ծախսում է «դարպասատակի» բանաստեղծներին օձիքից քաշելով՝ նրանց ասպարեզ հանելու համար»: «Յուրիին... երախտա-

գիտությամբ՝ սկսած փայլուն գործն իրականացնելու համար»։ Ապա եւ՝ գրեթէ կանխագուշակություն. «Ժամանակ անցնելուց հետո դա կհասկանան անգամ նրանք, ովքեր այդ մասին չեն էլ մտածել»։ Բայց այստեղ ահա թե ինչ տխուր հանելուկ կա. ես գուցե թե փրկել ու շարունակում եմ փրկել դիկոռոսների ստեղծագործությունը, բայց չեմ փրկել եւ, ըստ երեւոյթին, չեմ կարող փրկել նրանց՝ որպէս անհատների... ֆիզիկական գոյությունը։ Խորագույն ափսոսանքով հանդերձ։ Աստօն հետ չես վիճի։ Բայց ես կուզենայի այլ հարց տալ. անթուղոգիայի հեղինակներից ու՞մ բանաստեղծություններն են զուգադիպել ձեր անձնական աշխարհագրության հետ։

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Որ դա... առաջին հերթին մոսկվայաբնակ Եվգենի Ստեպանովն է, ավելորդ անգամ հանգովեցի օրերն՝ նրան կարդալով դիկոռոսական շարքից դուրս։ Էլի կմեջբերեմ առանձին տողեր, որոնք, ինչպէս ինձ է թվում, առավել համահունչ են իմ բանատողերի հետ։ Ստեպանովի մոտ. «Միայնակ չեմ։ /Մենակ եմ։ /Բոլորի հետ...»։ Ինձ մոտ. «Թախծի բեռը քար է ասես՝ նստած իմ մեջ, /Եվ ինչպէ՞ս է սիրտս մրսում . /Ապրում եմ ես բոլորիդ հետ, /Սակայն մենակ՝ ինքս իմ ներսում.»։ Եվ՝ Ստեպանովի փախուստն այդ մենությունից, ու ո՛չ միայն դրանից, դեպի գյուղն ու մայր բնությունը. «Սխալ տեղում եմ փնտրել մեծաքաղաքս, /Ամառանոցում, հաղթելով խոտին՝ աճեցրել եմ ես հասկն անարատ»։ Իսկ ահա եւ «ոսկորներ ջարդող դարի մասին». «Այստեղ թաքնվելը մեղք չէ՝ բացարձակ / Ոսկորներ ջարդող դարից, / Ու ես հոմո-հովեկուս դա եւ անգամ՝ պոեմ «Յոդի կանչը»...

Ասեմ, որ Ստեպանովի մոտ հիանալի են ստացվում անժամբեմանները /շիթմիկ ու շարահյուսական քայլանցումներ-

ընդ տողից տող/։ Նա ընդհանրապես, ինչպէս նուրբ ու դիպուկ բնութագրել է ժամանակակիցներից մեկը /եթ չեմ սխալվում՝ Եվգենի Խարիտոնովը/, «դաստիարակված» ավանգարդիստ է. երբ հաջողված սինթեզի շնորհիվ մարդու մեջ համակեցվում են երկու էություններ՝ առաջապահական ու ավանդապահականը։

Անթուղոգիայի եւս մեկ հեղինակի մասին։ Ես վերլիբր չեմ գրում։ Կամ՝ համարյա չեմ գրում... Բայց ինձ դուր են գալիս մաքուր վերլիբրները։ Ընդգծում եմ մաքուր, եւ տվյալ դեպքում՝ Վլադիմիր Մոնոմախովի վերլիբրները, որոնցում սովորական բանաստեղծական ատրիբուտների բացակայությունը թարմություն է հաղորդում բառին, նրանց հարակցությամբ։ Ասենք, կերպարի, պատկերների անսպասելի տրամաբանությամբ էլ։ Օրինակ. «Ռուսաստանը չի պահում տաքը։ / Յատկապես՝ երբ լայնորեն /բաց են սահմանները, /ու ողջ աշխարհի ցուրտը / թափանցում է Յիդրոմետի կետերով...»։

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Իսկ անթուղոգիայի թարգմանությունն ավարտին հասցնելով՝ ի՞նչ եք քաղել՝ գումարել ձեր իմացությանն Ռուսաստանի եւ ռուս ժողովրդի մասին։

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Բանն այն է, Յուրի, որ Արցախը միշտ եղել է Յայաստանի այն տարածամասը, որտեղ ոչ միայն բավարար չափով իմացել են ռուսերեն, այլև ամենից շատ են հարգել այդ լեզուն։ Խոսեմ փաստերով։ Մինչեւ անցյալ դարի Յոկոնոմիայի /հայերիս համար՝ տխրահռչակ/ հեղափոխությունն ու մինչ ընդհուպ 1920 թվականը, երբ Շուշիի/ ժամանակակիցներն, այդ թվում եւ օտարերկրացիք, այն կոչում էին «փոքր Թիֆլիս»... / 30 հազար բնիկ հայերն ընկան թուրք ասկյարների գնդակներից եւ անդրկովկասյան թուրքերի յաթաղանից, անմեղ զոհը դարձան հայ-



կական թաղամասում նրանց կողմից կազմակերպված հրդեհի ու զանգվածային ջարդերի /այդ ողբերգության մասին գրել են Սերգեյ Գորոդեցկին, Օսիպ Մանդելշտամը եւ ուրիշներ/, Շուշինում հրատարակվում էին 21 անուն թերթ ու հանդեսներ, որից տասնութը՝ հայերեն, երեքը՝ ռուսերեն /«Шушинский листок», «Шушинская жизнь», «Голос народа»/: Եվ ինչն է այստեղ կարելորդ. ռուսալեզու պարբերականները լույս էին ընծայում հայ մտավորականները... Ասենք, մեր օրերում էլ եւս փոքր Ստեփանակերտում գործում էր ռուսալեզու երկու միջնակարգ դպրոց՝ այն դեպքում, երբ դպրոցների ընդհանուր քանակը քաղաքում տասից ավելին չէր: Գումարեք նաեւ պետական բուհում ռուսաց լեզվի եւ գրականության առանձին ամբիոնը, եւ, կարծում եմ, հասկանալի կդառնա արցախցիների վերաբերմունքը ռուսաց լեզվի, ռուսական մշակույթի նկատմամբ:

Հիշում եմ ժամանակը, երբ Ստեփանակերտում կազմակերպվում էին ռուս բանարվեստի երեկոներ, եւ դրանցում ռուս դասականների, ինչպես նաեւ առավել հայտնի ժամանակակից բանաստեղծների ստեղծագործությունների շքեղ ասմունքով փայլում էր ազգությանը հայ, շարքային ուսուցչուհի, ռուսական պոեզիայի գիտակ եւ սիրահար հոգի Սարգարիտա Տեր-Կարապետյանը /երկնային արքայություն նրան /, դահլիճն էլ... որոտում էր ծափողջույններից...

Գալով այն հարցին, թե կարդալով ու թարգմանելով դիկոռոսների անթուղիքի՝ ինչ եմ քաղել նրանից, կասեմ այսպես. առաջին հերթին՝ այն ճշմարտությունը, որ տաղանդավոր ու լավ իմաստով հանդուգն մարդիկ ունենում են ոչ թե բախտ, այլ դաժան ճակատագիր: Եճմարտությունը «աչք է ծակում» անենուր... Երկրորդ, որ, չնայած դրան, Ռու-

սաստանը, ի հեճուկս բոլորի եւ ամեն ինչի, մշտապես ունենում է իսկական բանաստեղծների ոսկե պաշար: Ռուս բանաստեղծը կարող է ապրել կիսաքաղց, քրձերի մեջ, բայց ո՛չ երբեք առանց երգի... Ուրախ թե տխուր՝ բայց՝ հոգու երգի: Ինչպես Նիկոլայ Բուրաշ-Նիկոլի մոտ է. «Ես երջանիկ եմ, որ դեռ արցունքներ ունեմ: /Իսկ ինձ թվում էր, թե էլ չեմ կարող լաց լինել...»: Դե, իսկ հասարակ ժողովուրդը... Նա՛ էլ է Ռուսաստանում միշտ ապրում ու սնվում գալիք լավ օրերի սպասմամբ ու համբերությամբ: Այդպես՝ մինչեւ ժամն այն, երբ սպառված կլինեն այդ համբերության վերջին կաթիլները, եւ նա ձեռքը կառնի կացինը... Որքան էլ պարադոքսալ հնչի՝ ռուս մարդու ներսում առկա են երկու սկիզբ. արքայականը եւ պուգաչովականը...

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Բայց այդտեղ, ըստ իս, փոխբացառող հակասությունն չկա՝ եթե հաշվի առնենք, որ Պուգաչովը Պյոտր երրորդ կայսեր տեղն էր դրել իրեն...

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Դրա համար էլ կարծում եմ, որ որոշ իմաստով վերցված՝ ներկայումս քիչ են իսկական ռուսները... Եվ դա մեծ դժբախտություն է Ռուսաստանի համար: Որչափ էլ որ այն գերտերություն լինի, կամ համարվի... մեղքերում թաղված այս մոլորակի վրա: Ու տվյալ պարագայում դիկոռոսներն ինձ համար նույն իսկական ռուսներն են: Գրքի վրա աշխատելիս, ու նաեւ հետո, ինձ համար պարզ դարձավ, թե որքան կարելորդ են նման շփումները մեր ժողովուրդների մտավորականների, եւ մասնավորապես՝ գրականության հետ գործ ունեցողների՝ ստեղծագործական մտավորականության միջեւ: Դուք ճիշտ էիք՝ մեր գրույցի սկզբում ասելով, որ միասնական պետության ու երկրի լուծարումով միմյանցից բաժանվեցին եւ լեզուների՝ «մայրցամաքներն», ու մենք

## Գեղարմ Գարուն 2017

, գուցե թե ոչ լիովին, բայց կորցրել ենք մշակութային փոխկապերը: Այնպես որ, վաղուց է պետք վերականգնել այդ կարեւոր կամուրջը՝ միմյանցով հարստանալու կամուրջը:

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Եթե հիշում եք, Նվարդ /չէ՞ որ դիկոռոսների գրքի ու կայքէջի փակագծերից դուրս թարգմանել եւ նույնիսկ արցախյան «Գեղարմ» հանդեսում /թիվ 58, 2016/ հրապարակել եք իմ բանաստեղծությունները/, ես այսպիսի տող ունեմ. «Երբեք չեմ եղել Հայաստանում»: Դրանով է սկսվում համանուն բանաստեղծությունը: Շշմարտությունն այն է, որ հետո, այնուամենայնիվ, եղել եմ այնտեղ: Դա 1991 թվականին էր՝ հայ-ադրբեջանական սահմանային հակամարտության ժամանակ: Եթե ավելի ճշգրիտ ասեմ՝ հակամարտությունն այն ժամանակ վերաճել էր պատերազմի: Այդ շրջանում ես «Յունոստ» հանդեսի հեղինակներից էի եւ խմբագրական կոլեգիայի անդամ, ու մոսկովյան իմ ծանոթներից մեկը՝ այժմ բավականին հայտնի ու ճանաչված արձակագիր Անատոլի Կորոլյովը, իմանալով, որ պատրաստվում եմ մեկնել հայ-ադրբեջանական սահմանամերձ տարածք, իրեն հատուկ պարադոքսայնությամբ զգուշացրեց. «Մի բարձրացրու գլուխդ, երբ սուլում են թռչունները»: Վերադարձին ես այդպես էլ վերնագրեցի ակնարկս, որը հրապարակվեց «Յունոստ»-ում: Հիշողությանս մեջ եմ «Ձվարթնոցը», որտեղ մեկընդմեջ ետ էին գցվում թռիչքները, Երեւանը եւ հատկապես Սիսիանը՝ Հայաստանի լեռնային մի շրջան, որն ինձ «կուրացրեց» իր նախնականությամբ. այն ջրվեժները, այն հրաշատեսք քարե «քանդակները», որոնց երբեմն համեմատում եմ հնագույն աստղադիտարանի հետ...

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Ներեցեք ընդհատելու համար, բայց չեմ կարող չասել, որ հա-

ճելիորեն զարմացա լսածից: Այն ժամանակ ռուս մտավորականներից շատերն են այցելել Արցախ. ակադեմիկոս Սախարովը, Գալինա Ստարովոյտովան, գրող ու հրապարակախոս Անդրեյ Նույկինը, արձակագիր Ինեսա Բուրկովան, բանաստեղծ Սիխայիլ Դուդինը: Անգամ դժվար է հիշել բոլորին, նույնիսկ Բորիս Ելցինն ու գեներալ Լեբեդն են եղել մեզ մոտ... Եվ ահա քսանից ավել տարիներ անց իմանում եմ, որ իմ երկրամասի ճակատագրի, այնտեղ տիրող ավելի քան դրամատիկ իրադրության նկատմամբ մեր «մասնագիտական արտադրամասից» իրեն անտարբեր չի դրսևորել եւս մեկ բարի հոգի՝ բանաստեղծը հեռավոր Պերմից...

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Այո՛: Եվ մտապահել եմ ես ոչ միայն երկնամերձ բարձունքների նախաստեղծ գեղեցկությունը: Հիշում եմ՝ ինչպես ենք «ուազիկով» ժամանել Ներքին Խնձորեսկ գյուղը, մտել մի տուն, որի տերը մեզ ցույց տվեց խոշոր տրամաչափի գնդակի հետքն իր դստրիկի մահճակալի վրա /այն պոկել էլ նիկելապատ գնդիկներից մեկը/: Մենք դուրս եկանք բակ՝ օդ շնչելու, ու տեսա մորուքավոր, քիչ-ինչ կորացած թիկունքներով տղամարդկանց՝ որսորդական հրացաններով: Գնալով թանձրացող աղջամուղջում հեռվից լսվում էին ինքնաձիգային կրակահերթեր: Որոշեցինք շարունակել ճանապարհը: Իսկ առավոտյան իմացանք, որ մեր գնալուց կես ժամ անց ադրբեջանական օմոնը մտել է գյուղը... Հետո իմ մոտ կծնվեն այս տողերը. «Ես բայրոնացել եմ, պաշտպանության երկարափող հրացանով /ֆիդայիների հետ ռուսական գնդակների վրա եմ գնացել»: Բանն այն էր, որ այն ժամանակ՝ 91-ին, հակառակ կողմում մարտական ու ոչ հազվադեպ պատժիչ գործողություններին մասնակցում էին խորհրդային, իմա՝ ռուս, զինվորներ: Պարզ է՝ ոչ սեփական

կամքով, այլ՝ հրաման կատարելով: Բայց, իմ կարծիքով, այն ժամանակից ի վեր հայերի մոտ ռուսների հանդեպ առաջացել է ինչ-որ բարդույթ կամ հանդուժանք, թե՛ ի՞նչ արեցիք դուք, քրիստոնյա եղբայրներ, ծախեցիք մեզ...

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - 91 թվականը մենք հաճախ ուղղակի կոչում ենք «Կոլցո» օպերացիայի» տարի... Կենտրոնն Արցախում արտակարգ դրության ռեժիմ էր մտցրել, տարածքը լցրել խՍՀՄ ՆԳՆ եւ խորհրդային բանակի զորքերով: Խորհրդային իշխանություններն անկողմնակալության մասին կեղծիքն արդեն մի կողմ դրած՝ բացահայտորեն պաշտպանում էին ադրբեջանցիներին: Երկրամասը հայտնվել էր կլոր շրջափակման մեջ: Յերկել էին Մարտակերտի օդանավակայանի թռիչքուղին, Ստեփանակերտի օդանավակայանն էլ հանձնել ադրբեջանական օմոնին... Արցախը գտնվում էր նաեւ լրատվական շրջափակման մեջ: Մտցվել էր դաժանագույն գրաքննություն /հիշում են՝ անգամ մեկ բառի համար մենք՝ լրագրողներս, ժամերով, ընդհուպ մինչ լույսը բացվելը, «կոխի» մեջ էինք լինում զինվորական գրաքննչի հետ/: Բռնափակված էին ռադիոն ու հեռուստատեսությունը: Օբյեկտիվ տեղակատվությանը հազվադեպ էր հաջողվում ճեղքել այդ զրահն ու դուրս գալ արտաքին աշխարհ: Ապրիլի 10-ից մինչեւ մայիսի 22-ը, հիմնականում հայաբնակ Շահումյանի շրջանում /Գետաշենի ենթաշրջանով հանդերձ/ եւ էլի Արցախի հինգ շրջաններում ընթանում էր տեղաբնիկների ազգային բռնաքշում՝ հայաթափություն: Եվ ի պատասխան դրա՝ ժողովուրդն ստիպված էր կազմակերպել ինքնապաշտպանության փորձեր: Ռուսական «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպության տվյալներով՝ 91-ի հունվար-ապրիլ ամիսներին զինված խմբավորումների կողմից խաղաղ

հայ բնակչության վրա տեղի է ունեցել հարձակման 80 դեպք, ինչի հետեւանքով բանտերն են նետվել, սպանվել հարյուրավոր հայեր:

Իսկ այժմ, Յուրի, եկեք մտովի միասին տեղափոխվենք ավելի ետ՝ 1988 թվականի դեկտեմբերի 7-ը: Սպիտակի՝ տասնմեկբալանոցին մոտ երկրաշարժի օրը: Ոչ թե պաշտոնապես հայտարարված 25.000, այլ դրանից շատ ավել զոհերով, անպատկերացնելի ավերածությամբ: Գորբաչովը, ուշ այցով եղավ մի քանի ակնթարթում հսկայական գերեզմանոցի վերածված Գյումրիում՝ Չայաստանի երկրորդ խոշոր քաղաքում: Եվ այդ դժոխքում իրենց հարազատներին կորցրած, շատերն էլ՝ դեռ փլատակների տակ փնտրելիս, գյումրեցիների ու նրանց օգնության շտապած մյուս հայերի, ինչպես հայտնի երգում է ասված՝ «արցունքն աչքերին» հարցը. «Ե՞րբ եք, վերջապես, լուծելու Ղարաբաղի հիմնախնդիրը»: Գենսեկը դուրս եկավ ավերից. «Ինչպե՞ս կարող եք նույնիսկ այս դրության մեջ մտածել ու խոսել Ղարաբաղի մասին»: Այո՛, կարո՞ղ ենք: Կարողացանք, որովհետեւ այն, ինչ Ղարաբաղի հետ /դեռ Նախիջեւանի անունը չտված/ 1923 թվականին արել է բուլղերիկների իշխանությունը /Ստալինի վոյուդտարիստական որոշմամբ այն կտրել-պոկել են Չայաստանից ու բռնադրել նորաթուխ Ադրբեջանի իրավասության տակ/, մինչ այդ ցեղասպանության ենթարկված՝ պատմական հայրենիքի կեսից /Արեւմտյան Չայաստան/ զրկված հայ ժողովրդի համար ցանկացած գերերկրաշարժից էլ, գերցունամիլից էլ ահավոր էր եւ անենթակա՝ մոռացման... Եվ ահա՝ քեզ, շուրջ յոթանասուն տարի անց՝ «Կոլցո» ռազմագործողությունը, այն էլ՝ Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի /Գանձակ/ հայկական ջարդերից հետո... Նորից՝ բռնություններ, նորից՝ անմեղ զոհեր, նորից ծավալուն

բռնագաղթ:

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Ես միանգամայն հստակ հիշում եմ /այդ մասին էլ կա իմ ակնարկում/ մեր շփումը այն ժամանակ գերությունից ազատված հայ միլիցիոներների հետ: Այնտեղ նրանց տանջահար են արել, ամեն կերպ ստորացրել: Ես եւ ուղեկիցս՝ լրագրող Սարիչ-Բելոպլտովը, նրանց հետ արցունքի կաթիլի պես թափանցիկ թթի օղի խմեցինք ու սրտահալ եղանք, բայց տղաների մի կարճ արտահայտությունն ուղեղս շամփրելով հասավ գիտակցությանս. «Մենք մտածում էինք, որ ռուսների հետ այլեւս բաժակ չենք խփի...»: «Յունուստ»-ում ակնարկը տպագրվելուց հետո երկու հեռագիր ստացա. առաջինը՝ երատագիտության խոսքով /հայերից/, երկրորդը՝ ստորացման ու սպառնալիքի /հակառակ ճամբարից /... «Ուռուսկի փիյանիցա...»: Եվ ինչն է բնութագրական՝ որ շեշտն ակներեւ դրվել էր «ռուս» բառի վրա:

Որպես անցած այն իրադարձությունների դիտորդ, կարող եմ այսպես ասել. հայկական կողմն սկզբում ուժեղ ճնշման տակ էր /որսորդական հրացաններով՝ ԲՏՐ-ների եւ տանկերի դեմ/, հետո հայերն էլ զինվեցին ու պատասխանեցին՝ ինչպես հարկն է: Ազգամիջյան հակամարտությունում, խնդրին անգամ վերացականորեն մոտենալու պարագայում, որպես կանոն, դժվար է գտնել ով է ճշմարիտը, ով՝ մեղավորը, բայց, ինչպես ինձ այն ժամանակ ասաց Երեւանում ապրող ռուսագիր /եւ Գրականության ինստիտուտում սովորող/ բանաստեղծ Արմեն Ասրյանը, գոյություն ունի «պատերազմի մշակույթ»: Իհարկե՝ տարօրինակ ու անհնարին բառակապակցություն է, եւ սակայն... «Սպանել կարելի է տարբեր կերպ,- ասում էր զրուցակիցս,- կան՝ որ գնդակահարում են, կան էլ՝ կտրում են գլուխները...»: Այն ժամանակից անցել է քառորդ դար,

ու թվում է՝ այժմ, երբ աշխարհն իր հայացքը սեւեռել է սիրիա-իրաքյան ապրկալիպսիսի վրա, սկսում է գիտակցել՝ ինչից կարող են այդ երկու անհաշտ բառերն իրար կողքի կանգնել:

Ես նրա համար այսքան խորացա հուշերիս սմեջ, որովհետեւ ինձ թվում է, թե հենց այն իրադարձություններից են /սկզբում՝ Լեռնային Ղարաբաղի, իսկ հետո Չայաստանի հետ՝ Ադրբեջանի սահմանին/ սկիզբ առնում արյունոտ բռնկումները հետխորհրդային ողջ տարածքում: Բայց եթե Չայաստանի ու Ադրբեջանի մասին մեզ Ռուսաստանում գոնե ինչ-որ բան հայտնի է, ապա այն մասին, թե այժմ ինչ է կատարվում Լեռնային Ղարաբաղում, ինչի մասին են մտածում նրա բնակիչները, գրողներն ու պոետները, ինչի մասին՝ երազում ու թախծում՝ չգիտենք...

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Այլեւս բաժակ չենք զարկի ռուսների հետ... Դե, իհարկե: Բա ուզում էիք ինչպե՞ս լիներ: Ախր այն ժամանակ մեր ցավը չափելի չէր ոչ մի չափիչով: Իսկ դրանից էլ շատ՝ հիասթափությունը մեր: Բայց մենք՝ հայերս /կուզենայի ասել «ավա՛ղ», այդուհանդերձ, կասեմ՝ բարեբախտաբար/ հիշաչար ժողովուրդ չենք: Անկեղծ զղջացողի ձեռքն օդում կախված չենք թողնում: Ու տեսեք, թե որքան էլ տեղին է այստեղ վերադառնալը... Համլետին, ավելի շուտ՝ նրա «Ջրույց վարորդի հետ» բանաստեղծությանը, որն սկսվում է այս տողերով.

«-Դուք իրոք սիրու՞մ եք  
Ռուսաստանը:  
Ու ես ասացի նրան.  
-Սիրում եմ»:

Դա ասում է հանիրավի արքայազների զավակը: Որովհետեւ հայ է: Կարծում եք՝ ներկայումս քի՞չ են մեր հիասթափությունները: Ո՞նց չէ: Մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանը զանգվածային բնաջնջման հարձակո-

## Գեղարմ Գարուն 2017

ղական զենք է մատակարարում մեր երդվյալ գործող թշնամուն... 2016թ. ապրիլին հենց այդ զենքը գործադրվեց մեր դեմ՝ չորս օրում խլելով 101 տղաների կյանք: Ի դեպ, այդ գործարքին դեմ են արտահայտվել ռուս քաղաքագետներից եւ անգամ ռազմական փորձագետներից մի քանիսը: Ոչինչ չորոշող, գրեթե չնչին արձագանք է, բայց մեկ է՝ ինչ-որ չափով բարոյական աջակցություն է: Մենք գիտենք ու միշտ ենք իմացել, որ գոյություն ունի երկու Ռուսաստան... Ու Հանլետ Հարությունյանի բանաստեղծությունն էլ, որի մասին նոր հիշեցրի, իր տեսակի մեջ քաղաքական երկխոսություն է երկրում ընթացող փոփոխությունների մասին, ոչ միշտ եւ ոչ ամեն ինչում արդար ժամանակի փիլիսոփայական խորությունը պարզելու փորձ:

Արցախի հանրապետությունն արում եւ արարում է՝ Բարձրյալի ամենատես հայացքի ներքո ու շնորհիվ իր ժողովրդի եւ նրա փառապանծ Պաշտպանության բանակի: Թող եղիցի՝ մեր մեջ Լույսը, ինչպես եղել է միշտ: Հայի ինքնությունը հյուսված է ազնվաբարոյությունից: Մ.թ. 317 թվականին Հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը Ձիրավի ճակատամարտում այնպես է ջարդել Հայաստանի վրա հարձակված պարսից արքա Շապուհ երկրորդի զորքին, որ նա անգամ իր հսկա կանանոցը լքած վերադարձավ Պարսկաստան: Բոլորն սպասում էին վատթարագույնին, բայց Մուշեղը դեսպանների ուղեկցությամբ, ասել է թե՛ հարգանքով, անվնաս ետ ուղարկեց հարեմը: Գլխավոր պարսիկն այնքան էր զարմացած ու ազդված այդ իրոք վեհ արարքով, որ հրամայեց իր ոսկե սկահակի վրա դրվազել Մուշեղի դիմանկարը եւ ամեն անգամ այն բարձրացնելով՝ խմելուց առաջ մի պահ մտասույզ մայում էր ազնվածին հայի պատկերին եւ ասում. «Փա՛ռք Սպիտակ

ձիավորին»: Այդ պատմական փաստի մասին վկայող անգամ հին մանրանկար կա: Մի՞թե հենց դա չէ «պատերազմի մշակույթը», որի մասին ասել է Ասրյանը:

Իսկ այսօրվա մեր հակառակորդը քարանձավային բնակչից էլ է վայրենի: Նա կտրում է եւ ողջ, եւ զոհված 19 տարեկանների գլուխները: Նա սպանում է 90-ամյա կնոջը եւ այլանդակում մարմինը զուտ այն պատճառով, որ նա հայ է...

Մենք խավարի երեխաները չենք: Մենք չենք խավարի երեխաները... Ու երբեք էլ այդպիսին չենք եղել: Մենք միայն ուզում ենք ազատ ապրել մեր իսկ հողի վրա, հանգիստ կառուցել, մշակել արտ ու այգի, բանաստեղծություն գրել, երեխաներին պահել-մեծացնել՝ նրանց դաստիարակելով ոչ միայն իրենց նախնիների թողած ժառանգությունը պաշտպանելու եւ պահպանելու, ոչ միայն սեփական ազգային մշակույթի, այլեւ աշխարհի բոլոր ժողովուրդների մշակույթի նկատմամբ հարգանք տածելու ոգով:

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Եվ Դուք, այդ թվում, դատելով ամեն ինչից, ա՞յդ պատճառով եք այդքան շատ ժամանակ հատկացնում թարգմանական արվեստին... Մեծելայտիսի արձակը, Խոդասելիչի եւ Կուբլանովսկու պոեզիան, համարյա մի ամբողջ գիրք Սեդա Վերմիշելայի բանաստեղծություններից եւ նույնիսկ Չինաստանի մշակույթի քրեստոմատիան... Այժմ էլ ահա դիկոռոսների անթուղզիան: Եթե հաշվի առնենք, որ ինքներդ հեղինակ եք երկու վեպի, պատմվածքների երեք ու բանաստեղծական վեց ժողովածուների, մնում է միայն կռահել, թե ինչպիսի ցայտնոտով եք անցնում... Բայց անձամբ ինձ «պինդ կպավ» այն փաստը, որ բանաստեղծական վեցերորդ ժողովածուն, որում զետեղված գործերից շարք է կարդացել-հավանել Սիխայիլ Դուդինը, գրել եք

## Գեղարմ Գարուն 2017

ռուսերեն: Դա «Арцахский дневник»-ն է: Ու եթե Ֆետի մոտ «рояль был весь раскрыт, и струны в нем дрожали...», ապա Նվարդ Ավագյանի մոտ «рояль...с пылью на зубях», այն պատճառով, որ «лает все снаряж с огненным хвостом». Իսկ բանաստեղծություններից մեկի վերնագիրը հենց այդպես էլ կոչվում է. «Тоска по тишине»: Այն լռության թախծոտ բաղձանքը, երբ կարելի կլինի սրբել նվագարանի փոշին, ու վերստին կթրթռան Ֆետի նշած լարերը: Եվ այստեղ կուզենայի պարզել մի բան. ես հասկանում եմ ինչու է Համլետ Չարությունյանը բանաստեղծություններ գրել ռուսերեն /որովհետև ռուսաց լեզուն նրա համար դարձել էր մայրենի/, իսկ ի՞նչու է ստիպել ձեզ՝ հայոց բանալեզվի տարերթուն դաստիարակվածին, ոտք դնել ռուսաց բանադաշտ:

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Առաջինը չեք, որ տալիս եք նման հարց...Այն լսել եմ եւ իմ հայրենակիցներից: Իսկ պատասխանել դրան՝ նշանակում է նայել իմ ներսը... Մինչևե հիմա էլ չեմ հասկանում ինչպես ստացվեց, որ ազգային դպրոցի յոթերորդ դասարանում սովորողս ի կատարումն ռուսաց լեզվի ուսուցչի տված առաջադրանքի՝ փոքրիկ շարադրություն է գրել «Նիլովնայի կերպարը» թեմայով, ներկայացրի մի ամբողջ, ուսուցչիս բնորոշումն է, «ռեֆերատ»: Ընդամին՝ ստանալով «գերազանց»: Կամ. նույն ոչ ռուսական, ընդ որում՝ գյուղական, դպրոցի շրջանավարտ՝ անծանոթ ու մեծ, եւ հիմնականում ռուսախոս. քաղաքի բուհում ռուսաց լեզվից ու գրականությունից ընդունելության քննությունը /թելադրություն/ նույնպես հանձնեցի գերազանց /կարմիր թանաքը բացարձակապես գործ չունեցավ այնտեղ անելու/, զարմացնելով ոչ այլ ոքի՝ քան անձամբ ամբիոնի վարիչ Յուդիկինին: Գուցե Աստված է ռուսաց լեզվի նկատմամբ նման անմեկնելի

«ձգողականություն» պարզելել ինձ: Ռուս դասականներն էլ այն վերածել են մեկնվող սիրո...

Բայց վերադառնանք այն ժամանակը, երբ մի կողմից վեհ, մյուս կողմից էլ ավելի քան դրամատիկ իրադարձությունների /չընդհատվող բազմահազարանոց հանրահավաքներ՝ Ստեփանակերտում եւ դրան ի պատասխան՝ «սունգայիթ»՝ ցեղասպանության փորձ Սունգայիթում /շրջանում շատ հայտնի մտավորականների թվում Արցախ այցելեց եւ Միխայիլ Դուդինը: Փշալարով ու խորհրդային եւ ադրբեջանական օճոնով շրջափակված կենտրոնական հրապարակ, եւ նրան կի՝ Արցախի մայր թերթի խմբագրության միջանցքում ինչպես իմ, այնպես էլ մյուսների աշխատասենյակների դռան հետեւում... ինքնաձիգով ու խստաշունչ դեմքերով զինվորներ, մեր ներս ու դուրս անելուն աշալրջորեն հետեւող «կազբեշնիկ» սպաներ... Այդուհանդերձ, հարմար պահ ենք որսում զինվորների հետ խոսք փոխանակելու համար: Փորձում ենք նրանց բացատրել մեր ճշմարտությունն՝ այն հույսով, որ ըմբռնելուց չեն կրակի ժողովրդի վրա... Բայց, ավա՜ղ, ինչպես երգվում է երգում՝ «գրահն ամուր է, ու մեր տանկերը՝ սրընթաց»... Ես զգում եմ, որ միայն թերթ լույս ընծայելով քիչ բան ենք անում: Եվ ահա տուն վերադառնալով, ուշ երեկոյան, երբ քնած եմ բոլորը, որտեղից չգիտեմ՝ ինձ այցելում են ռուսերեն բառեր՝ վերածվում ռիթմ ու հանգերի, կազմում տողեր, կարճ ասած՝ դառնում բանաստեղծություն: Նախկինում էլ, երբ ուսանող էի, գրում էի «օտարալեզու քառյակներ», բայց դա ավելի շատ նմանվում էր խաղի: Իսկ այստեղ, նման իրադրությունում, ի՞նչ խաղի մասին կարող էր խոսք լինել: Այդպես սկսեցին ծնվել «այրող» ասեն թե «այրվող» բանաստեղծություններ՝ սկզբում «քաղաքա-

## Գեղարմ Գարուն 2017

կան թանձր», իմա՝ ավելորդ, լիցքերից զուցե թե մեկ ուղքի վրա կաղին տվող, բայց հետո զնալով, կարծում եմ, այնպիսին, ինչպիսին պետք է լինի՝ բանաստեղծությունը: Ես զինվորներին առաջարկում եմ կարդալ /ու զարմանում, երբ երկուսը համաձայնվում են/ «Սունգայիթ» վերնագրով բանաստեղծությունը, ուր կան այսպիսի տողեր.

Инстинктом мутным  
Алкают снова кровь геноцида;  
В семени блудном  
Больно живуча эта страсть!  
Бозкурт, он ведь зверь особого  
вида,

Чаще и шире открывает пасть...

Մի լեյտենանտ նույնիսկ մտերմացավ մեզ հետ: Կուրսկից էր: Պարզվեց, որ սիրում է «մեկ-մեկ ոտանավորներ խզրզել»... Ահա այդպես: Ահա թե մարդկանց հետ ինչ կարող է անել պոեզիան: Կամուրջ դառնալ հակադիր ակերի միջև: Անցնեն առաջ: Երբ ես շարքը մեկնեցի Դուդինին, ճիշտն ասած, առանձնապես հույս չունեի, թե կկարդա /ժամանակը շատ էր սուղ/: Բայց նա վերցրեց ու տեղնուտեղը, «ոտքի վրա», ընթերցելով մինչեւ վերջ, ինչպես ինձ թվաց՝ նույնիսկ ուրախ ու հուզված ասաց. «Պատկերացրեք, որ ձեզ մոտ վատ չի ստացվում... Կարելի է ասել՝ նույնիսկ զարմացած եմ: Անպայման շարունակեցեք՝ քիչ-ինչ ավելին ուշադրություն դարձնելով չափածո խոսքի գեղարվեստական հնչունությանը»: Դե, այդ մասին ինքս էլ գիտեի. ինձ մոտ տեղի էր ունեցել «պայթյուն», իսկ պայթյունի ակիթից բոլոր բեկորները չէ, որ հավասար են թռչում...

Ռուս բանալեզուն ինձ այսօր էլ է հմայում: Եվ ձեռքս չէ-չէ՝ մեկ էլ տեսարձակեց դեպի գրիչը... Բայց ես, բնականաբար, եղել ու մնում եմ հայ գրող, ու չեմ պատկերացնում ինձ առանց իմ մայրենի լեզվի եւ այն ամենի, ինչը

կապված է նրա հետ: Իսկ ռուսաց լեզուն ինձ համար, դե, ինչպես ասեմ... դե, ոնց որ մի պատուհան՝ դեպի հարստագույն ռուս գրականությունն ու մշակույթը: Ու բացի դրանից, այդ հիմա է, որ ով շուտ հասցնում է՝ ձեռքը մեկնում... բնագրի լեզվով արտասահմանյան գրականությունը թարգմանելուն: Իսկ մեր ժամանակ, իսկ իմ սերունդը համաշխարհային գրականության առյուծի բաժինը կարդացել է ռուսական թարգմանությունների շնորհիվ:

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Բայց այսօրվա Ռուսաստանում չկա այն ընթերցողական ու հանդիսատեսային արձագանքը բանաստեղծի նկատմամբ, որպիսին եղել է, ասենք, երբ պոեզիան կարող էր հնչել Լուծնիկի մարզադաշտում եւ Պոլիտեխնիկականի դահլիճում: Թույլ է մխիթարանքը, թե բանաստեղծություններին նման հսկայական լսարաններ պետք էլ չեն, քանզի բանարվեստն ընտրյալների բաժինն է, նրանցով «փոքրաթիվ հոտ է սնվում»: Համացանցին ու սոցցանցերի կողմն արվող երկդիմությունն էլ՝ իբր ընթերցողների արձագանքը տեղափոխվել է այնտեղ, նույնպես չի կարող փոխարինել պոետական խոսքի ամուր ընթերցողական /հենց ընթերցողական, ոչ թե գրողական/ հետաքրքրությանը: Համաձայնվեցեք, որ երբ բանաստեղծներն են մեկնաբանում բանաստեղծներին, իսկ բանաստեղծական երեկոների հանդիսատեսն են դառնում հրավիրված պոետները, դրանից Աստվածային մտահղացման ինչ-որ նեխածության հոտ է փչում, որովհետեւ Բանը ոչ միայն ընտրյալների համար է, այլեւ՝ բոլորի եւ յուրաքանչյուրի:

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Այո, ընթերցողական պակասորդն ակնհայտ է, եւ իրավիճակն այդպիսին ամենուր: «Հաստ» հանդեսների փոխարեն պոեզիայի տարածման դերն սկսել է խաղալ համացանցը, բայց, որքան ինձ է թվում, ձեւավորված

«ցանցային» բանարվեստը ինքնուրույն ու տարբերվողական գծեր ձեռք չի բերել ու հազիվ թե բերի: Համացանցն, անշուշտ, լսարան ձեռք բերելու հնարավորություն է տալիս, երբեմն նույնիսկ նպաստում նոր տաղանդավոր անունների երեւալուն, բայց չէ՞ որ այն միաժամանակ ու ավելի շատ հանգեցնում է եւ բանաթուխների, գրչակների տարածմանը...

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Դուք ինձ գրել եք ձեր կողմից թարգմանված եւ Արցախում հրապարակված իմ բանաստեղծական շարքի մասին /մեջբերում եմ/. «Ուրախ եմ հայտնելու, որ այն իսկույն արժանացել է ուշադրության...»: Այս կետից, ինչպես ընդունված է ասել մեզ մոտ՝ Ռուսաստանում, «խնդրեմ՝ հանգամանորեն»: Ես, օրինակ, վաղուց է, ինչ չեմ հիշում, թե հայրենի հանդեսներում կամ ավանախներում ներկայացված, իմ թե այլ հեղինակի, բանաստեղծությունները ռուսաստանյան ընթերցողի ուշադրությունը հրավիրած լինեն, այն էլ՝ իսկույն: Իսկ հայ ընթերցողին, պարզվում է, գրավել է: Գուցե հայ ընթերցողն սկզբունքորեն ինչ-որ բանով տարբերվում է ռուսականից: Եվ փոքրիկ Արցախի ընթերցողն ա՛յլ հոգեկերտվածքի տեր է, քան հսկա ու լայնածավալ, ոնց որ թե քնի մեջ ձգվող, Ռուսաստանի ընթերցողը: Դե, ինչպես ձեր թարգմանած իմ այն բանաստեղծության մեջ է. Պերմում հայտնված հայն, այն բանից հետո, երբ իր հայրենիքում «կծկվել-կրճատվել է Երկրի մկանը» /երկրաշարժի մասին է/, ոչ-ոքի չի տալիս իր թողած, իսկ ավելի շուտ՝ ավերված, տան բանալիները.

Աշխարհն անտուն  
լիովին- թիթեռից մինչեւ նախագահ-  
երկար կխնդրի այդ մարդուն՝  
հանձնել բանալիները,  
բայց ի պատասխան կհնչի՝  
«Չե՛մ տա»

...հեռու խորքերից տիեզերական:

Բայց այժմ գործնականորեն նույն «խորքերից տիեզերական» ինձ է հասել, որ ձեր համեստ ծառայի ստիխները արցախյան հող հասնելուց լրացրել են «ուշադրություն գրավողների» ցուցակը: Հայերն, արդյո՞ք, հույժ ուշադիր ժողովուրդ չեն...

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Երբ ես առաջին անգամ կարդացել եմ ձեր այդ բանաստեղծությունը, մտածել եմ՝ ո՛չ միայն... Երբ «կրճատվել է Երկրի մկանը: Պարզվել է, որ ես դա արտաբերել եմ բարձրաձայն, եւ իմ «ռեպլիկը» լսել է այդ պահին առանձնասենյակս մտած ուսանող թոռնուհիս: Նա՛ իմ ԱՆԻՆ, զարմացած հարցրեց. «Տա՞տ, այդ ինչի մասին ես խոսում ինքդ քեզ հետ ...»: Նրան մեկնեցի բանաստեղծությունը: Կարդաց, աչքերը լցված՝ թե՛ «Թափով է... հատկապես ավարտը, «շուռ է տալիս» մարդու հոգին... Ո՞վ է հեղինակը, տատ. ինքնատիպ է գրում»:

Բայց ես չբացատրեցի «ո՛չ միայն»-ի իմաստը: Ծննդով արցախցի իմ զարմուհի Լիզան վաղ պատանեկության տարիքում հայտնվել ու մնացել է Սիջիւն Ասիայում՝ բռնադատված ու Սիբիր քշված հոր պատճառով /որի բարի անունը հետագայում, միլիոնավորների պես, վերականգնել են/: Ապրել է Անդիջանում, ապա՝ Դուշանբեում, իսկ ոչուփուչ պերեստրոյկայի ու գլասնոստի ժամանակաշրջանում, երբ այնտեղ էլ են լափին տվել ազգամիջյան բախումները, ոչ առանց դրսի ձեռքի՝ հայերի հալածանքը, թողնելով տարիների քրտնաջան վաստակով հոյակապ կահավորած քաղաքային բնակարանն ու ամառանոցը, միայն բանալիները պայուսակում երեխաների հետ դարձել է բռնագաղթող, փախստական, երկար դեզերումներից հետո խարխախ նետել Ֆինլանդիայում: Դա եւս եղել է մեր օրերում, քիչ ավել կամ պակաս՝ 25 տարի առաջ: Այս



## Գեղարմ Գարուն 2017

դեպքում, ապա, այս մասին... ի՞նչ կլսենք «տիեզերական խորքերից»:

**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Կամ՝ հոգի քրքրող լռություն, կամ էլ նույնը. «Չեմ տա...»: Չի կարելի տալ նախնյաց հայրենիքը, խիղճը, մաքրությունը, գեղեցկությունը՝ թող որ անգամ աղճատված աշխարհի... Հակառակ դեպքում զգվելի կլինի ապրելը:

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Համաձայն եմ: Դրա համար էլ վերադառնամ Ձեր բանաստեղծությունների թարգմանությանը: Ես դա արեցի երկու պատճառով: Առաջինն ու գլխավորը՝ որ կարդացածս «կողքով չանցավ»... արձագանք գտավ իմ սրտում, խորհելու մղեց: Երկրորդը. գաղտնիք չէ, որ ովքեր սիրում են մեր ստեղծագործությունները, չեն հիասթափվում դրանցից, նրանք էլ հաղորդում կամ փոխանցում են մյուսներին... Ես մտածեցի, որ Յուրի Բելիկովի ստիխները տեղ կգտնեն բնականից ու պատմականորեն բանաստեղծական լսողությամբ ու զգացողությամբ օժտված իմ հայրենակիցների սրտերում եւ ուղեղներում: Ու չսխալվեցի:

«Գեղարմ»-ում հայերեն կարդալով Ձեր շարքը եւ ցանկություն հայտնելով այն կարդալ... բնօրինակի լեզվով եւս, արցախահայ գրականության մեր այսօրվա նահապետն ու «հայտնի չմահավան» Մաքսիմ Հովհաննիսյանը, ով վատ չէ ծանոթ ռուսական պոեզիային, ասաց. «Այս բանաստեղծություններում կան խորը հոգեւոր սկիզբ եւ իմաստասիրական մեծ լիցքեր: Դրանք կարդալու ընթացքում ինձ այցելած առաջին միտքն այն էր, որ հեղինակը գիտի յուրաքանչյուր բառի արժեքը եւ «խնամքով է վերաբերվում» նրան: Դրանից բացի, իր մասին իսկույն է զգացնել տալիս հեղինակի վառ, հարուստ ու միաժամանակ բնական լեզուն, տողերն էլ ջերմություն են արտածում. ջերմություն՝ մարդկանց եւ առանձին վերցված ան-

հատի, երկրի, բնության հանդեպ»: Նա ինձ պես չէր կարդացել Ձեր, ասեմք, «Սոճիները Դմիտրի Դոնսկոյին են նման» բանաստեղծությունը, որտեղ, ինչպես ինձ է թվում, խտացված կերպով կա նրա թվարկած ամեն ինչը... Կասեմ ամենայն անկեղծությամբ. երբ ես կարդացի այդ գործը, հոգիս ասես նվաղեց այս 8 տողից.

Но в тишине, когда ночь  
разгорится,  
хочется соснам по спящим ветвям  
тайно на тёмную землю спуститься,  
чтобы поплакать немножечко там.

Только ветвей не найти на стволе.  
Сосны качаются с болью немою.  
И опуститься не могут к земле,  
Да и подняться на небо не могут.


**Յու. ԲԵԼԻԿՈՎ** - Դա իմ սերնդի մասին է ծնված անցյալ դարի 50-60-ական թվականներին: Մի սերնդի մասին, որը տանջալիորեն կախվել էր երկրի ու երկնքի միջեւ եւ գուցե թե, մեծ հաշվով վերցված, մնացել չիրացված-չճանաչված...

**Ն. ԱՎԱԳՅԱՆ** - Ինձ մոտ, սակայն, ճանաչումը տեղի ունեցավ, եւ ինձ համար պարզ է, որ Ձեզ նման վարպետն ի զորու է իր բանատիրույթի մեջ առնել այն ամենն, ինչ անհրաժեշտ է իսկական, լուսարձակող պոեզիայի համար: Դուք ասես թե Ձեր սահմանները բացում եք դեպի երրորդ չափում... Եվ պատասխանելով արդեն Ձեր վերջին հարցին. չեք սխալվել, այո, ենթադրելով, որ հայերս «հույժ ուշադիր» ժողովուրդ ենք: Մենք իրոք այդպիսին ենք, Յուրի, ուշադիր՝ այն էլ որքա՛ն: Ընդ որում, այս էլ ասեմ, եւ լավի, եւ վատի նկատմամբ...

Ու քանի որ խորախոր գիտենք առաջինի դեֆիցիտի մասին, այն գնահատում ենք բարձր:

**Դմիտրի ԲԱԿԻՆ**  
**/Ռուսաստան/**

**ՏԵՐԵՎՆԵՐԸ**



Տասներկու տարեկան տղեկ նա եկավ գյուղակ դաշտի կողմից, այնպես որ գետը նրա ձախ կողմում էր, իսկ անտառն՝ աջ եւ մինչ գյուղակ ընկնելն անցավ անցանկապատ գերեզմանով, գետավազով շաղված արահետով, եւ նրա բոքիկ ոտքերը, անհարող սուր քարերին ու ջարդված ապակուն, զգում էին հողի անփոփոխ ցուրտը: Նա հատեց պարապուտն, անցավ ճամփեզրի տունը, չթակելով, որովհետեւ գիտեր՝ ճամփեզրին ապրում են մռայլ, սարթ մարդիկ, փախուստի պատրաստ, անցավ երկրորդ տունը, որովհետեւ այն չափազանց մեծ էր, անցավ երրորդ տան բեկորները, չորրորդում ընդունվեց կեղտոտ միձեռանի տղամարդու եւ ամրակազմ կիսակույր կնոջ կողմից, որոնք անգավակուքյան տանոթ տարվա մեջ սպասում էին Հիսուս Քրիստոսի գալստյանը: Որոշ ժամանակ նրանք լուռ նայում էին իրար, հետո գնացին հարեւան սենյակ ու կամացուկ խոսում էին ինչ-որ բանից, հետո վերադարձան: Միձեռանի մարդը նստեց սեղանի մոտ, իսկ կինը կանգնել էր կողքանց ու նայում էր պատին: Տղամարդն հարցրեց՝ դու որտեղի՞ց ես. նա լռում էր, նայելով մարդու կրծքին. տղամարդն ասաց՝ դու ծնվել ես այս տանը մինչեւ պատերազմը. նայելով մարդու կրծքին, նա ասաց՝ չէ, տղամարդը բարձրացրեց ձեռքն ու ցուցամատը ցցելով չհավաքված մահճակալի կողմը՝ ահա էստեղ. նա ասաց՝ չէ, տղամարդը խոժոռ ասաց՝ դու ծնվել ես տասներկու տարի առաջ, դու տասներկու տարեկան ես, դու ծնվել ես օգոստոսին, կինը, առաջվա պես պատին նայելով, ասաց՝ սեպտեմբերի առաջին կիրակին. տղամարդը նրա կողմը դարձրեց կարծրացած, կենտրոնացած դեմքը, նրա ծնոտը շարժվեց, ետ շրջվեց ու ասաց՝ սեպտեմբերին, նա ասաց՝ չէ, տղամարդը ելավ ու ասաց՝ վերջ:

Լուսադեմին նրան լվացին, խուզեցին,

## Գեղարմ Գարուն 2017

երնջապուր կերցրին, մեխերով գամեցին Բեղովագին ազգանվանը: Երեք անգամ նա փորձեց փախչել միժեռնանի տղամարդու եւ կիսակույր կնոջ տնից ու երեք անգամ էլ բռնվեց՝ երկու անգամ անտառում, որտեղ խխունջներ էր ուտում անձրեւից հետո, գտնելով դրանք քարերի տակ կամ փրցնելով թացացած սուզածառերից, եւ մի անգամ էլ երկաթգծի կայարանում, ուր գնացքի էր սպասում, չնկատելով, որ ռելսերը հավաքված էին:

Դրանից հետո նա չէր փորձում փախչել, լուռ անում էր այն ամենը, ինչ խնդրում էին, ջանադրաբար խուսափելով մարդկանց նայելուց: Միժեռնանի մարդը մի անգամ ասաց՝ նա ամաչում է մեզ համար: Բայց կիներ ասաց, որ դա խոնարհություն է:

Երբ ռազմագերի գերմանացիները ռելսերը փռեցին նոր փայտակոճերի վրա եւ ամրացրին հողաթմբերն այնտեղ, որտեղ դրանք կործանվել էին ռումբերի պայթյուններից, եւ փախուստի ճանապարհը յուրաքանչյուրի համար բաց էր, միժեռնանի տղամարդը մահացավ: Մահանալուց առաջ, նա երկու շաբաթ մահճակալից չէր ելնում, եթե չհաշվենք այն հազվագյուտ դեպքերը, երբ կարիքի համար փողոց էր դուրս գալիս, որ ավելի ու ավելի հազվադեպ էր պատահում, մահվան մոտալուտության չափով, որովհետեւ նա ոչինչ չէր ուտում եւ չէր խմում: Երկու վերմակների ու խոնավությունից շիկակարմիր շիների տակ, կիպ ձգված, չորցած մաշկի ծածկոցի տակ նրա ոսկորները ոչ տապ, ոչ ցուրտ չէին զգում՝ հենց այդ ժամանակ էլ նա կնոջն ասաց, որ մարդը տապն ու ցուրտը զգում է ոսկորներով եւ տապն ու քաղցն էլ՝ ոսկորներով: Այլեւս նա ոչինչ չասաց, որովհետեւ լիովին իրավունք ուներ բոլոր բառերի իմաստը մոռանալու: Ղեկավարվող նրանցով, ովքեր վաղուց մահացել են, նրա օրգանիզմի յուրաքանչյուր բջիջը նա ենթարկեցրել էր մահվան ձգտմանը, հրաժարվելով դեղերից ու բուժիչ թրմերից, որոնք անզգայության պահերին փորձում էր նրա մեջ լցնել կիներ:

Նստելով անկյունում ու դռնուս իրեն օտար զգալով՝ Բեղովագին-կրտսերը, առաջին անգամ այն պահից, որ դաշտի կողմից եկավ գյուղակ եւ այս տունն ընկավ, բացեփրաց, առանց աչքերը թաքցնելու, զննում էր կիսակույր կնոջն ու միժեռնանի տղամարդուն, ով մահանում էր: Կիներն ինչ-որ բան էր ասում մարդուն խուլ, մռայլ ձայնով, անշտապ ու համաչափ հնչող, հանց ժամացույցի տկտկոցը, իսկ հետո հասկացավ, որ նա ոչինչ չի պատասխանի, քանի որ այլեւս մարդկային բառերը չի հասկանում: Նա շտկվեց, դանդաղ հեռացավ մահճակալից ու նայեց Բեղովագին-կրտսերին: Նա նայում էր նրա դեմքին ու աչքերին, քանզի արդեն գիտեր, որ կմնա այս տանն ընդմիջտ ու կգրավի միժեռնանի տղամարդու տեղը ըստ չգրված երկրային օրենքի, երբ կյանքը գրավում է մահից ազատված տեղը, եւ նրա վրա է փլվում ժառանգությունը:

Բեղովագին-կրտսերը, ով պարզապես Բեղովագին դարձավ եւ բաց նայում էր մարդկանց, չզնաց գերեզմանոց, ուր տարան միժեռնանի մարդուն, բարձրացնելով մենավոր լացի կատարին, այն բանից հետո երբ ճամփեգրին ապրող պառավը նրան լողացրեց ու սափրեց, կապույտ այտերին կարմիր ծաղկափոշի քսելով: Բայց նրանք, որ տանում էին միժեռնանի մարդուն, եւ նրանք, ովքեր ուղեկցում էին դագաղը, չէին կարողանում ազատվել համոզվածությունից, որ Բեղովագին-կրտսերն հետեւում է իրենց, դարբասատակերում թաքնվելով, ծառից ծառ, տնից տուն վազելով, իսկ հետո, թաքնվելով գերեզմանների ետեւում, հետեւում է, ինչպես են նրանք նրան թաղում: Նստած Բեղովագինների տանը սեղանի մոտ հոգեհացի օրը, ճամփեգրին ապրող պառավը թրմօղուց ու թերսնումից հարբած, գովաբանական հիմներ էր երգում միժեռնանիին, պտտվելով աթոռի վրա, ասես բմբուլի փոշու փոքրիկ մրրկասյուն, հազիվ հավասարակշռությունը պահելով ու նայելով Բեղովագին-կրտսերին, ով նստած էր դիմացը, ջրազրկված դարչնագույն

## Գեղարմ Գարուն 2017

աչքերով, հղկած փայտի պես պսպղալով, ասաց՝ ահա պտուղը, եւ ասաց՝ մեռած սերմի: Առաջինը ելավ ու սկսեց հրաժեշտ տալ: Նրա շարժումների մեջ սովեր անգամ չկար դատապարտվածության, որը հայտնվում է մարդկանց շարժումներում ծերությունից շատ առաջ: Սակայն ոչ մեկը չէր խիզախում դիպչել նրան, զգուշանալով, թե նա կփռչեցրվի, հինավուրց սկահակի պես, որ դարերով պառկել է օվկիանոսի հատակին ջրի, աղի ու ժամանակի անշարժ լուծույթում, եւ հրաժեշտ էին տալիս նրան միայն աչքերով, ինչպես հրաժեշտ են տալիս պատրանքին:

Այդ տարվա ամռանը, երբ մահացավ միժեռնանի մարդն ու երբ հայտնի դարձավ, որ պատերազմն ավարտվել է արեւմուտքում, բայց չի ավարտվել արեւելքում, եւ ողջ երկրով մեկ երկար էշելոններով տանում էին մարմիններն ու հոգիները դեռ մարտնչելու ունակ զինվորների, ինչպես նաեւ մարտերում մնացած զինվորական տեխնիկան, բարձած պողպատյա հենահարթակների վրա, իսկ սանիտարական էշելոններում տարան խլացածների աչքերը, կուրացածների ականջները, համրացածների բառաչը, փորից վիրավորների ծարավը, որոնց համար պատերազմը մեկընդմիջտ ավարտված է, գյուղակի կանայք, սովից քշված, մախաղները, կապոցներն ու պայուսակները ճանկելով, գնացին Խերսոնի կողմը, որտեղ, գերմանացիներից անվնաս, ապրուստի սերմ, կարճախողովակ, տնային թռչուն ու անասուն փոխանակելու հույս ունեին: Պատերազմի սկզբում գորացրված մի քանի հաշմանդամ, մի քանի կոնտուզիահար, ինչպես նաեւ մի ամուսնացած տխմար, որ ռազմական գրահագրեստ ուներ, որ նրան տեղից շարժվելու հրահանգ էր տալիս, կեցած էին մեռյալ դաշտի մեջ ու նայում էին, ինչպես բեռնված կանայք գնում են սպիտակ փոշոտ ճանապարհով, շրջանցում են սոճուտն ու բլրի վրայի եկեղեցին, իսկ հետո անհետում են շրջադարձում, եւ նրանցից ոչ մեկը չէր հավատում, թե նրանք կվերադառնան, մնալով այն համոզման մեջ, որ սպիտակ փոշոտ ճանապարհը հենց այն ճանապարհն է, որով կարելի է հավերժ գնալ ու անհետ կորչել, օդում ցնդելով: Գյուղակում տղամարդիկ ցրվեցին տներով, նգովելով իրենց տկարությունը, բոլոր կողպեքներով, սողնակներով դռները փակելով պատնեշվելու հույսով աշխարհից, ուր օդում ցնդելով, անհետ կորան կանայք՝ շրջապատվելով շշիկներով, շշերով, թրմօղու դույլերով ու բալոններով, դրանցով գծելով իրենց տիրույթների շրջանը, եւ թաղվեցին արբեցման ծանր ալիքների մեջ, ննջելով պատասխանի որոնումներում, համոզված այն բանում, որ այն ամենին, որ երազվում է, նախասահմանված է հավատալ, քանզի իրականությունը՝ ճշմարտության կեսն է եւ ճշմարտության երկրորդ կեսը փնտրելու տեղ չկա, քան լոկ երազում: Այդպիսով, իրենց համար բանտեր, հրետանախցեր ու զնդաններ կառուցելով, ինչը պահանջում էին ճշմարտության որոնումները, նրանք ապրեցին վանդակի ետեւում երկու շաբաթ, որոնց ընթացքում թաղվեցին անպտուղ խորհրդածություններում, փռվելով սեղանի տակ սեփական փսխուքի մեջ, թքերի, թքոտ ծխախտանմանացուկների ու սապոզների կավեկտորների մեջ, հոծացող մուժում, անտերունչ երկրում, մոռանալով անունն այն բանի, ինչի որոնումներին էին գնում:

Այնինչ երեխաները, որ լրիվ ազատություն էին ստացել, երկար ամառային օրերի լուսածագից մինչեւ արեւմուտ, կորչում էին անտառում, որտեղ փնտրում էին քայքայված, հողածածկ բլինդաժներն ու լքված գետնախուղերը, տնտղում էին հողի նեղության մեջ, վտանգվելով փտած գերանների տակ մնալուց, դեմ առնելով ցաքուցիր բեկորների, քարշելու համար ժանգոտած ճոպանների, ռետինելու կիսափտած կտորների, խամութների, հուսալով գենը ու զինամթերք գտնել, որպեսզի դրանք պայթեցնեն խարույկի կրակում:

Երրորդ շաբաթվա վերջում կանայք վերադարձան, լծված մախաղների ու պայու-

## Գեղարմ Գարուն 2017

ասկների քարշաթոկերին, բակերում գտնելով սովից սատկող շներին, վայրենացած կատուներին ու գզգզված ագռավներին տների կտուրներին: Տխմարի կինը մտավ բակ, հենց այնտեղ քարշ տալով վտիտ, կեղտոտ այծին, որին նայելով կարելի էր հաստատապես ասել, որ նա մեռած է, եթե ոտքերը չտարուբերեր, կապեց նրան ցանկապատին ու հոգնած շարժվեց դեպի տուն, բայց մուտքի դուռը պարզվեց ներսից փակ էր: Նա ձեռքերով, ոտքերով, բահի կոթով, կացնի գլխով, քարերով ծեծում էր դուռը, ուսով թափով թռչում էր դռան վրա ու ճաքած, սահմոկելի ճայնով հայհոյանքներ էր գոռում, պատրաստվելով տեղահան անել պատուհանի ապակիները, մեկ էլ դուռը ճռռոցով բացվեց ու երեսաց ավազի պես դեղին, անթրաշ, զարմանքից ծռնված դեմքը եւ նրա վրա սեւեռվեցին անշարժ, խելագար աչքերը, որոնցով ուղեկցում էին նրան վայրենացած կատուները, երբ նա գյուղակով դեպի տուն էր գալիս, իսկ դեղին դեմքի վերետում շարժվում էին կոլոված մազերը, իսկ կողքերից ցցվել էին, գորշ շարավով պատված ականջները: Շատ ժամանակ անցավ, մինչեւ որ նա այդ անորաշխարհային էակի մեջ ճանաչեց իր աննորմալ ամուսնուն, ով փլվեց շեմին, նրան ձեռքերով կառչելով, խցկվելով շրջագգեստի մեջ, լորձուքներն էր թափում ու մռմռում էր ամուսնության սուրբ անխափանության մասին: Այդժամ նա խուլ տնքաց ու ասաց՝ Աստված, եւ ասաց՝ սատկես դու, շան տղա,- եւ կրկին ասաց՝ Աստված: Նա օգնեց նրան ելնել ու տուն տարավ, ուր կոտրված աքռակների, ջարդված շների, անցյալ դարում մահացած բարեկամների տրորված հին դագերտոսիպերի վրա, գվվոցով բյուրավոր կանաչ ու սեւ ճանճեր էին անցնում: Նա ասաց՝ Աստված, օ՛յ, Աստված,- եւ ասաց՝ Աստված, ինձ այրի դարձրու,- եւ ասաց՝ այ սատկես դու, շան տղա, դու շան տղա: Մոտավորապես նույնն էր կատարվում գյուղակի մյուս տներում, ուր տղամարդկանց, ականջներից քարշ տված ժանտահոտ մշուշից, լվացացնում ու մաքուր շորեր էին հագցնում, նզովքի քարերով տարափում ու խփում էին մուտքներին, եւ այն ամենը, ինչ ունակ էր խելքը պղտորելու, ընդհուպ մինչեւ թթված խնձորները, անհապաղ թաքցվել կամ անխնա ոչնչացվել էր, եւ այն բանի համեմատ, թե ինչպես էին գործում օրերի սեւ գնդերը, կանայք, որ դուրս էին մղում ոգելից թուրմը կամ փոխարինում էին այն, ստիպեցին տղամարդկանց հավատալ, որ իրենք հենց այն ճշմարտությունն են, որ տղամարդիկ համառորեն փնտրում էին, փռվելով սեղանի տակ սեփական փսխուքի մեջ, թքերի ու թքոտած ծխախոտամնացուկների մեջ, հոծացող մուժի անտերունչ երկրի երեսին:

Բեղոլագինն, անմասն այն խաղերին, որ սարքում էին, ճակատագիրը փորձող, իր հասակակիցները, ավելի ու ավելի էր փակվում իր մեջ, գերադասելով արտաքին կյանքին ներքինը, բայց բոլոր ճանապարհները, որոնցով նա գնում էր դեպի ցնորական նպատակները, ունակ իմացության ծարավը հագեցնելու, ճանապարհներ էին դնել: Նրանք կանչեցին նրան, երբ նա կանգնած էր երկար սոված հերթում միհարկանի տախտակե բարաքի առաջ, որ հաց ու օճառ էին բերել, եւ նա գնաց նրանց ետքից: Նրանք կանգ առան բարաքի ետնապատի մոտ եւ, քմծիծաղելով, մատնացույց արեցին կքած տախտակներով անցքը եւ նրան ասացին՝ դե, նայի: Նա կռացավ ու նայեց անցքից ու տեսավ փոշոտ կիսամութ խանութի պահեստը, ալյուրով պարկերը, հացով պարկերը, իսկ պարկերի վրա խանութի վարիչը վեր էր քշտում վաճառողուհու շրջագգեստը, նրան տապալելով մեջքի վրա, եւ նրա դիմադրությունը հավասար էր ջրի դիմադրությանը լողորդի նկատմամբ, ով ուզում է չափազանց արագ լողալ: Բեղոլագինը չէր տեսնում նրա դեմքը, բայց նրա մարմնի ցնցումներից հասկացավ, որ նա ծիծաղում է, իսկ հետո խանութի վարիչը շալվարն արձակեց ու ելավ նրա վրա: Բեղոլագինը շտկվեց, իսկ նրանք նայում էին նրան, քմծիծաղելով: Մեկն ասաց՝ այ քեզ անպիտան, հը՞. մյուսն ասաց՝ եթե

## Գեղարմ Գարուն 2017

հիմա նրանց վախեցնես, դրանք էդպես էլ իրարից չէին պոկվի, ինչպես շները, երրորդն ասաց՝ ինչպես վագոնները, առաջնորդն ասաց՝ թող նա գնա - եւ ասաց Բեդրլագինին՝ դու գնա, թե չէ նա շուտով նրա վրայից կիջնի, ու նա խանութը կբացի, մյուսն ասաց՝ դեռ շատ կտեսնես, դրանք միշտ էլ էդպես են:

Նրան բերեցին, ձի հոտող դպրոց, որտեղ թերթերի տողերի արանքում նա գրառում էր այն, ինչ նրան թելադրում էին, ինչպես նաեւ երգում էր երգչախմբում կկոցած տիրակալան աչքերով տղամարդու վիթխարի դիմանկարի տակ: Երգեցողության դասատուն խփում էր քանոնով, ծանր, ինչպես արգելափակոցը, նրանց գանգերին, ովքեր չէին հասցնում ռեխները փակել միաժամանակ նրանց հետ, ովքեր հասցնում էին:

Աշնանը նրանց տանում էին մախապարտեզ, եւ նրանք հավաքում էին թափված տերեւները փայտյա փոցխերով ու ցախավելներով, ժողվելով մեծ, փխրուն կույտերի, որոնք օրըստօրե ավելի ու ավելի մեծ ու մթին էին դառնում, իսկ հետո, երբ ծառերը տերեւափվում ու մերկ կանգնում էին, նրանք այրում էին տերեւները, եւ մինչեւ ձմեռ նրանց հագուստը ծուխ ու դառնություն էր հոտում:

Մուժոտ օրերին կիսակույր կինը գնում էր դաշտ հասկիկներ հավաքելու, վտանգվելով մի տասը տարով վանդակի ետեւն ընկնել, եւ այնժամ, երբ նա սողում էր չորեքթաթ, եղյամապատ սեւ վարելահողի վրայով, Բեդրլագինը թաքնվում էր երկաթգծի հողաթմբի ետեւում եւ հետեւում էր որպեսզի հեծելապահակը վրա չհասներ: Հետո նա նրան նշան էր անում, եւ նա քայլում էր հողաթմբի երկայնությամբ մինչեւ կամուրջը, եւ վախը չէր թողնում նրան սառչել, իսկ կամրջի տակ նրանք հանդիպում էին գունատ ու կեղտոտ, եւ նա ասում էր՝ Ախ, սողուններ, նա ասում էր՝ լավ, նա ասում էր՝ Ախ, սողուններ - եւ ասում էր մինչեւ տուն հասնելը:

Եվ միշտ, ուր էլ նա լիներ, նրա մեջ գերիշխում էր տարիների պղտոր հոսքից անշարժ կենալու ձգտումը, ուր ընդմեջ տիղմի, կոտրտված ճյուղերի, մաշված հագուստի, ջարդոտած գեների, եւ ջրով տափանված ոսկորների առ կատարելություն են սլանում մարդիկ. անշարժ կողմ կանգնել եւ նրանց խորհուրդներ տալ, խաբելով օրենքի սովերին, որն ընկնում է յուրաքանչյուրի գխին ծննդյան պահից:

Ժամանակի ընթացքում նրա մտքերն ու ցանկությունները փոխվեցին, լցնելով գլուխն ամենաբազմաթիվ կանանցով՝ նրանք նրան սիրում ու կանչում էին, բայց առ նրանց ճանապարհը նա չգիտեր: Ծանապարհը գտնելու հույսով նա լսում էր ճամփեգրին ապրող պառավին, ով երեկոյան հաճախ էր գալիս իրենց մոտ եւ, սեղանի մոտ նստած, տարուբերվում էր աթոռի վրա, հազիվ հավասարակշռությունը պահելով, ինչպես հինգ տարի առաջ միձեռնանի տղամարդու հոգեհացին,- եւ իր համար վաղուց պարզ էր, որ նա կենում է երկրի երեսին ինչպես մեռյալների գեներ, եւ մեռածները խոսում են նրա շուրթերով, որպեսզի մախագուշացնեն ողջերին այն բանը, ինչը կենաց օրոք անպարզ է մնում,- եւ նա գուշակում էր խռպոտ, նկուն, սառցե ձայնով, կրծքի եւ կոկորդի խռչոցների միջով, հազի, փռչոցի ու հարբուխի միջով՝ ինչպես վարվել, որպեսզի սովից չսատակես՝ մի դույլ ջրին՝ ասում էր նա՝ մի գրալ թեփ, երկու կիլկա եւ սագախոտ՝ ինչպես չհղիանալ, ինչպես ընդունել ծնունդը, ինչպես ձմռանը կերակրել այծերին, ինչպես բուժվել թոքախտից ու դիզենտերիայից: Բեդրլագինը քնած ձեւացավ այն երեկո, երբ Աննային, ծնած օրից քսանհինգ տարեկան, վռնդեցին տնից բոլոր այն խելագար գիշերների համար, որ նա անցկացնում էր իր տղամարդկանց հավաքածուում, եւ նա եկավ իրենց մոտ, գտնելով պառավին, կիսակույր կնոջը եւ ֆրանսիացի մարկիզուհուն, որ տարագրվել էր Ֆրանսիայից դարասկզբին, խոսակցության պահին: Փոքր ինչ անց պառավը նրան ասաց՝ կինը, որ գնում է փոքրից դեպի մեծը, իսկ մեծից դեպի ավելի մեծը, ի վերջո բա-

## Գեղարմ Գարուն 2017

վարարվում է ամենաքչով, որովհետև շատ կգտնվեն այնպիսի բաներ, որոնք նա չի կարող տեղավորել. Աննան ասաց՝ չէ, կիսակույր կիներ ասաց՝ սուս, պառավն ասաց՝ նա քնած է. Աննան ասաց՝ նա քնած չի, մարկիզուհին ասաց՝ բոլոր կանայք քսանհինգ տարեկանում անկյալ են, պառավն ասաց՝ նա, ով կարգադրել է մեզ լինել, չի ների, Աննան ասաց՝ ոչ մեկը մեզ չի կարգադրել լինել: Մենք պայթյունի ծնունդ ենք:

Նա քնած էր, երբ ուշ երեկոյան նրանց տուն ճակատագիրը վճռելու եկավ սովորաբար գործերի գնդապետը, բարձրահասակ, մռայլ, տարեց մի մարդ, որ ազատում էր գյուղակը գերմանացիներից այն բանից մեկ տարի առաջ, երբ Բեդլազիմ-կրտսերը հռչակվեց Բեդլազիմ եւ ճանաչեց տոհմական ու ժառանգական նգովքների ծանրությունը: Բայց դա արդեն այն հրետանային գնդապետը չէր, որ բնակվում էր Բեդլազիմների տանը, ինչպիսին նրան հիշում էին գյուղակում, եւ ոչ էլ այն, որ դուրս թռավ առնուտք անքուն ցասումից գորշացած դեմքով, երբ սխալ նշանառման արդյունքում երեք կործանիչ աստղերի կարմիր կետերով գնդակահարում էին ազատագրված գյուղակը եւ ձիերով, սայլակներով ու թնդանոթներով նրա զինվորների շարասյունը, եւ ոչ էլ այն, որ երկարում էր վիթխարի, չոված ծայծլված մատներով ձեռքերը դեպի երկինքն ու ինքնաթիռները, ասես ուզում էր հասնել, վերցնել, քաշել դրանք այնտեղից եւ ջարդել ծնկին, այն ձայնով, որ փորոտիքը շուռումուռ էր տալիս, գոռում էր՝ ուր: Չկրակել: Չէ որ մենք այստեղ ենք: Այդ մենք ենք: Նրանց դրոշ էր թափահարում: Նա արտասովում, բայց շարունակում էր գոռալ ու խոխոսացնել, ասես լարից ընկած գործիք լարելու ժամանակ, եւ շատերը տեսնում էին, թե ինչպես կոկորդից արյուն ժայթքեց, եւ նա ընկնում էր սանդղամուտքից, կառչելով բազրիքից: Չինվորները բարձրացրին նրան, դրեցին սայլակի վրա, ծածկեցին պարկացուով եւ տարան մարտնչելու: Նա վերադարձավ ուշ երեկոյան, վեց տարի ու երկու ամիս անց, թողնելով իրեն պարկացուով ծածկած սայլակում, դիակային ժանտահոտով ներծծված, կամ էլ պարուրագծի ոլորներից մեկի վրա, որը նրան տանում էր վեր ու դեպի սովեր՝ ավելի պոռնիկ, քան զինվոր, որ, ամուսնությունից զատ, այլ ելք չէր տեսնում, անկանխատեսելի արարքներում, պատասխանատվության կաթվածի մեջ կարծրացած դեմքով, մտավ տուն, երբ Բեդլազիմը քնած էր, եւ կիսակույր կնոջն ասաց, որպսգի նա հավաքվի, եւ շատ այլ բաներ ասաց: Առավոտյան կիսակույր կինը ասաց Բեդլազիմին, որ մեկնում է: Նա խոսում էր երկար, խուլ, մռայլ ձայնով, որով դիմում էր, ընկալման բեռն իր վրայից նետած, միձեռնանի տղամարդուն: Բեդլազիմը հարցրեց՝ ինչպե՞ս նա իմացավ, որ ձեր ամուսինը մահացել է. նայելով պատին, նա ասաց՝ ես գրել էի նրան, եւ ասաց՝ նա ասում է, որ դու մեզ հետ գաս. նա հարցրեց՝ ո՞ր, նա ասաց՝ Մոսկվա, նա ասաց՝ ես չեմ գա, նա ասաց՝ ես այդպես էլ գիտեի: Մտավ գնդապետն ու ասաց, որ քաղաք նոտարիոսի մոտ գնալու ժամն է: Բեդլազիմն ասաց՝ գնացեք:

Գնդապետը լուռ ելավ: Կիսակույր կինն ասաց՝ դու փսլնքոտ ես, նա ասաց՝ սա իմ տունն է: Նրանք գնացին քաղաք, օղի առան ու գնացին նոտարիոսի մոտ, որտեղ կիսակույր կինը ձեռակերպեց ընծայական ու մի քանի փաստաթղթեր, որոնց համաձայն-Բեդլազիմը չափահաս դառնալով տանում էր տանտիրոջ իրավունքները, ինչը պիտի տեղի ունենար երեք ամսից: Մեկնելուց առաջ գնդապետը նրան ասաց՝ ինչը կա, վաղ թե ուշ դադարում է լինել, եւ այդժամ փոխարինելու է գալիս ինչ-որ այլ բան, բայց ոչ միշտ ավելի լավը: Եվ Բեդլազիմն արեց այն, ինչ արեցին հաշմանդամներն ու կուստուգիահարները, երբ կանայք, սովից քշված, գնացին փոշոտ սպիտակ ճանապարհով եւ անհետ կորան, ցնդելով օդում: Մի ժամվա ընթացքում նա նստել էր դատարկ կեսիտրանոց շշի դիմաց, մտածելով փրկության մասին եւ կարոտելով մայրական փորի ջերմությանը,

## Գեղարմ Գարուն 2017

հետո, օրորվելով ու զկռտալով, ելավ բակ, մտադրվելով զննել ժառանգության ամենաթեթև ու աննշան մասը, որ բաղկացած էր երեք կառույցներից՝ տնից՝ դրան հարակից խոհանոցով, անձրեւներից սեւացած ցախատնից, որը, խիստ ասած, ցախատուն էլ չէր, այլ, ավելի շուտ, ծածկարան ցախի ու մառանի համար, թափառում էր խնձորենիների ու սալորենիների միջով, համրում էր, ճակնդեղով ու կարտոֆիլով տնկած մարգերը: Տարուբերվելով դեպի ամառային խոհանոցը առնետի ծվվոցի վրա եւ խառնշտելով այնտեղ կերակրակաթասները, ճաշամաններն ու թավաները, նա երկու պարկ հայտնաբեց, որ զնդապետն էր թողել, որոնցում գտավ տասնյակ մուգ-կանաչ պաշտետով թիթեղյա բանկաներ, շոկոլադի սալիկներ, գալետներ, շոգեխաշուկ մսով բանկաներ, սոլիդոլի հաստ շերտով ծածկված, իսկ բացի այդ՝ զինվորական ներքնագգեստ, սպայական բուշլատ, սպայական սապոգներ եւ նոր փաթաթաններ:

Առավոտյան նա վատ էր զգում, ինչպես երբեք, եթե չհաշվենք ծննդյան պահը: Նրան կպել էր կատուն, որ ապրեց տանը մի օր եւ մի գիշեր ու զնաց, թողնելով լվերին ու կատվահոտը: Նա զնաց ճամփեզրին ապրող պառավի մոտ, եւ հարցրեց՝ ի՞նչ անել, եթե տանը լվեր են հայտնվել. նա ասաց՝ օշինդր քաղիր ու դրանով հատակը ծածկիր, - իսկ հետո ասաց՝ կատուներին տուն մի թող: Նա օշինդր քաղեց եւ դրանցով պատեց հատակը:

Մի շաբաթ անց եկավ Աննան ու մտավ սենյակ, ուր չորցած օշինդրի, հակատանկային խանդակների, դիմացանցերի ու բարիկադների մեջ, ստեղծած իր հիվանդ երակայությամբ, որպեսզի տունը պատնեշեին կատուների ներթափանցումից, Բեդրլազինը ցմբուր խմում էր թրմօդու նախավերջին շիշը՝ նրանցից, որ կիսակույր կնոջ մառանիկում էին եւ նախատեսված էին ճամփեզրին ապրող պառվուկի, եւ ֆրանսիացի մարկիզուհու համար, որ տարագրվել էր Ֆրանսիայից դարասկզբին: Նա բարձրացրեց գլուխն ու հարբած օտարման թափանցիկ անբեկանելի պատի միջից տեսավ քսանհինգ տարեկան կնոջը, ով մոտեցավ իրեն խշրտացող օշինդրի վրայով եւ, նայելով աչքերին, մատով շրխկացրեց ցավոտ տեղին այնպես, որ նա անկյուն թռավ: Եվ այդժամ նա զգաց, որ ասուպային անձրեղը տանելու ընդունակ, անբեկանելի, թափանցիկ պատը, ճռճում, փլվում եւ փոշեցրիվ է լինում կանացի մատների մեկ մի շրխկոցից, թողնելով նրան, մերկ, անպաշտպան ու մեղկ, տապալված ժամանակի աղտոտ հոսքի մեջ, ուր ընդմեջ տիղմի կոտրտված ճյուղերի, մաշած հագուստի, ջարդոտած զենքի եւ ջրով տափանած ոսկորների առ կատարելություն են պանում մարդիկ: Նա ասաց՝ դուք ինձ տնից քշում էիք, - այդպես նա ասաց, եւ կործանարար, դիվային ժպիտը խաղում էր նրա շուրթերին, նա ասաց՝ ուզում էի գիշերել էստեղ՝ այդպես նա ասաց. նա ասաց՝ լավ, նա ասաց՝ ես, Աստված վկա, գիշերելու տեղ չունեմ՝ այդպես նա ասաց, նա ասաց՝ լավ, նա ասաց՝ շնորհակալություն՝ այդպես նա ասաց ու քրքջաց, նա նայեց նրան ու ասաց՝ եթե դու մի անգամ էլ ծիծաղես, ես մռութդ կջարդեմ, եթե դու գիշերը խցկվես ինձ մոտ, ես մռութդ կջարդեմ՝ կջարդեմ, եթե առավոտյան ժամը յոթին դու դեռ իմ տանը լինես, ես մռութդ կջարդեմ՝ այդպես նա ասաց, որովհետեւ նա չէր համբերում ձեռք զարնել թափանցիկ անբեկանելի պատի վերականգնմանը, որը փոշեցրվում էր նրա մատների մեկ մի շրխկոցից:

Անշուշտ, նա նրա մոտ եկավ գիշերով՝ նա լսում էր, ինչպես էր խշրտում օշինդրը նրա բորիկ ոտքերի տակ, եւ նա մռութը ջարդելու փոխարեն, ասաց՝ էստեղ լվեր են, նա ասաց՝ եթե լվերն էստեղ են, դրանք ամենուր են, նա ասաց՝ դրանք ամենուր են, նա ասաց՝ հոգ չէ, - եւ հարցրեց՝ քանի՞ տարեկան ես, տասնյոթ. նա ասաց՝ գուցե եւ հիսուն, բայց նրանք ասացին, որ տասնյոթ, նա ծոր տալով ասաց՝ դե, բավական է բլբլանք: Եվ նա նրա վրա տեղաց կրակի փոթորիկներն ու անհունչ պայթյունների բռնկումները, որոնց չէր ենթարկվել, առաջին գիծ ընկած, եւ ոչ մի նորակոչիկ, եւ դիակիզարանի վա-



## Գեղարմ Գարուն 2017

ռարան ընկած եւ ոչ մի մեռյալ. նրա շուրթերը, ձեռքերը, կուրծքն ու ոտքերը խփում էին հոսանքով, նա երկրաշարժ ու կիզիչ քամի հարուցեց, մարմինները վերածելով ծորող շիկացած հրազանգվածի, եւ կուրացնող լույսը հերթափոխվում էր հեղձուցիչ, կպչուն խավարով՝ նա պտտում էր նրան, ինչպես խելքին փչեր, իսկ նա որոշեց, որ տիեզերքն այդպես էր արարվում:

Առավոտյան նա գնաց, իսկ նա նայում էր նրա ետքից ու մտածում՝ նա կվերադառնա: Մի ամիս նա հատակից չորցած օշինդրը չէր հավաքում, հուսալով զարթնել ու լսել խշրտացող քայլերը եւ տեսնել կործանարար ժպիտը սպասման մթության մեջ: Հետո օշինդրը վերածվեց դարմանի, եւ նա ստիպված էր այն ավել, որովհետեւ տանը մկներ էին հայտնվել եւ մկնային ճոթճոթոցը գիշերով նա հաճախ բորիկ կանացի ոտքերի քայլքի տեղ էր ընդունում: Շուտով ողջ գյուղակի հետ նա իմացավ, որ Աննան գնացել է քաղաք բարձրահասակ, գեղեցիկ տղամարդու հետ: Սակայն այդ նորությունը լոկ նվազ չափով խախտեց Բեդրյազինի հավատն առ նրա վերադարձը: Ծխեցնելով բարձիթողի բանջարանոցը եւ մարգերը չոր աղբով պարարտացնելով, նա քթի տակ մոթմոթում էր՝ ինչ է քաղաքը, եւ ինչ սրիկա է այն կառուցել: Բայց մեկուկես տարուց, որի ընթացքում նա պահպանում էր հույսը, վրա հասավ օրը, երբ, երբ նա կացինը ձեռքին այգում կանգնած եւ նայելով իր տանը, տաքացած մոխրային հավատի ջերմությամբ, այլանդակելու, վերացնելու, ջարդուփշրելու ցանկություն ապրեց, եւ այդ օրը ձեռքից վար գցելով մելիտեքը, նա ասաց՝ ես պարզապես հիմար եմ, իսկ նա կեղտոտ բոգ...

Չգտելով անշարժության ու մնջանքի, նա խաչի վրա, ամենայն մուտք առ լուսավոր նավահանգիստ բացառող, անխոտոր ուղիղ գիծ գծեց, եւ, որպես դրա հետեւանք, կրկին հայտնվեց պատն իր ու աշխարհի միջեւ: Ժամանակին անհաղորդ լինելու խաբուսիկ պատրանքն իշխում էր նրա երեւակայությանը, եւ հենց նույն ուժը, որ տանում էր միձեռնանի տղամարդու օրգանիզմի յուրաքանչյուր բջիջը դեպի վերացումն ու մահը, թափառում էր նրա արյան մեջ, շարժում էր ձեռքերը, ոտքերն ու վիզը, չորացնում էր կոկորդն ու սնում էր տեսողությունն անթափանց պարզությամբ: Եթե նա խմում էր տանը, նրան ոչ մեկը չէր տեսնում, բայց, եթե նա խմում էր այգում, շատերն էին տեսնում նրան եւ տեսնում էին նրա ճանապարհի անխոտոր ուղիղ գիծը, որը միայն կողքից էր թվում թեք ու ահաբեկված, եւ տեսնում էին, ինչպես էր նա փռվում ջրափոսերում դարալանջի տակ կամ գլխով հերկում էր կեղտը կեղտաջրի առուններում, որտեղից ցցվում էր նրա լարված հետույքը: Հղի կատուն հակատանկային խանդակների վրայից թռչելով, հաղթահարելով բարիկաղները, դիմակավորման ցանցերի նշանակությունը գուշակելով, հայտնվեց նրան երագում, կառչելով ատամնասեղներով ձվապարկից, եւ ողջ ճանապարհը, որ անցվել էր առ արթանացման պարապուտը, նա դրանով շրջաջարդել էր սյունները, հաջորդ գիշեր օձը կծեց նրա ափը, որը նա բարձրացրել էր մարդկանց ամբոխի վրա, կարգադրելով ծնկի գալ, եւ ափն ընկել էր ամբոխի վրա, ճգնելով նրան հանկարծական ուռուցքի ծանրությամբ:

Ճամփեզրին ապրող պառավը, բուռն առնելով ենթարկվել հրաժարվող մատները, նամակ գրեց կիսակույր կնոջը, որում պնդում է նրա ժամանումը, սակայն կիսակույր կինը չկարողացավ գալ ինչ-որ հիվանդության պատճառով:

Եկավ գնդապետը: Բայց դա արդեն այն գնդապետը չէր, որը մի ժամանակ մարտնչում էր, եւ ոչ էլ այն, որ եկել էր գյուղակ, որպեսզի տաներ կիսակույր կնոջը եւ նրա գլխին տնկեր, նրան հողին կքող, ամուսնական պսակը: Վերջնականապես ծանրացած, ասես կիսով չափ կապված, մարմինը դժվարությամբ քարշ տվող, ինչպես ձի քարշող սայլակը՝ այն, մյուսի, թաքնվածի հետ. դեմքը, մթին, ինչպես գաղտնիքը, երբեմնակի

## Գեղարմ Գարուն 2017

ճեղքում էր երկու մասի կտրուկ ժպիտը, որ պատահում էր ամեն անգամ, երբ նա անսպասելի հիշում էր վարվելակարգի մասին: Գնդապետը ճամպուրակից մի շիշ օղի ու մի քանի բանկա պահածո հանեց, գնդապետը բացեց օղին ու պահածոները, նրանք խմեցին օղին, գնդապետն իր վարորդին փող տվեց, եւ վարորդը եւս երեք շիշ բերեց, նրանք նստել էին սեղանի շուրջ, իսկ վարորդը մեքենայում քնել էր, գնդապետը ծխում էր, մոխիրը թափ տալով խոշոր տրամաչափի թնդանոթի փամփուշտի պարկուճի մեջ: Գնդապետն ասաց, որ կիսակույր կիներ կգա, հենց որ ոտքի կանգնի, եւ ասաց՝ նա շատ կարոտում է. Բեդրլագինն ասաց՝ հաղորդեք նրան, որ ես նույնպես շատ կարոտում եմ: Բեդրլագինը նայում էր գնդապետին ու զգում էր, ինչպես աշխարհի լույսն ու գծանկարը ցաքուցրվում է հյուլենների, եւ հնչյունները ցաքուցրվում են օդում, եւ գնդապետի ձայնը ճիշտ ասես ավազի շրշյուն լիներ: Իսկ հետո գնդապետը ելավ, հագավ շինելը, իսկ Բեդրլագինը նստած էր սեղանի մոտ, եւ գնդապետն ասաց, որպեսզի նա իրեն չճանապարհի եւ որ պառնի քնի, եւ ծանրաշարժ, թվում էր, անասելի ճիգեր գործադրելով, շարժվեց տնից, չհասպաղելով ոչ դռան արանքում, ոչ սանդղամուտքում, ուրկից ընկել էր յոթը տարի առաջ, կոկորդով խախտոց ու արյուն ժայթքեցնելով:

Հաշվի առնելով այն, ինչ ասում էր սովերային գործերի գնդապետն ապրուստի նվազագույնի մասին, ինչպես եւ այն, որ օրինազանց լինելն ու մեմոթյունը փող արժե, Բեդրլագինը որոշ խորհրդածություններից հետո աշխատանքի տեղավորվեց անտառից ոչ հեռու կարմիր աղյուսե հիվանդանոցի ծննդաբերական բաժնում, ուր երկու ամիս եւ չորս օր, ատամները սեղմելով եւ պատուհանի զամասկայով քթածակերը փակելով, լուռ քարշ էր տալիս սովերամած բակով, տակի սավաններով ու բարձի երեսներով, հետպատերազմյան կառավարության կողմից խրախուսվող ծննդկանների ճռճռացող, փսած սայլակը: Դիարանից մի հիսուն մետրի վրայի ցածրամած գորշ շինության լվացքատանը նա հատակին էր դնում կեղտոտ սպիտակաղենի հակը, հանում էր վերնակասավանը, երկու մատով բարձրացնում էր յուրաքանչյուր սավանը, բարձրածայն համրում ու նետում էր չորուկ, ծոված ողնաշարով տղամարդու առաջ, որ այնքան անտարբեր էր վերաբերվում գիտակցությունը քայքայող գարշահոտությանը, ասես օրը օրին սողանցում էր ապրելու այնտեղ, ուրկից լուս աշխարհ էր եկել: Երեկոյան քույր-տնտեսուհին Բեդրլագինին կես բաժակ սպիրտ էր լցնում, իսկ նա նրան ասում էր՝ ապրել պետք է ոչ այսպես եւ ոչ այստեղ: Հուլիսի վերջում, համրելով սավանները ճկված անտարբեր մարդու առաջ, նա ասաց՝ սա իմ վերջին սայլակն է. ճկված մարդը քնծիծաղեց, սավաններն ու բարձրետները խոթեց վերնակասավանի մեջ, զցեց ուսին ու քարշ տվեց լվացարարուհու մոտ: Բեդրլագինը ելավ փողոց եւ երկար քայլում էր գյուղակով, ատամները սեղմելով, զամասկան քթածակերում, հետո հանեց զամասկան, անցավ ուրիշի այգու ցանկապատի վրայով եւ լուռ ընկավ վարդաթմբի վրա:

Նրա կենալը որպես երկաթուղային ապրանքակազմի ուղեկից ավելի քիչ տեսեց, քան կարմիր աղյուսե հիվանդանոցի ծննդաբերական բաժանմունքում որպես տարաբանվոր մնալը, եւ հաշվվում էր այն տասնյոթ օրով, որոնք պահանջվեցին մինչեւ Ռոստով ու ետ գնալու համար, որովհետեւ հենց առաջին գիշերը նրա զուգընկերը նրան առաջարկեց կին դառնալ, միայն թե հետույքն առաջ արած, եւ տասնյոթ օր նա պտուտակամերի բանալիից չէր բաժանվում, սպանություն մտահղանալով, չկամենալով ոչ տղամարդ, ոչ էլ կին լինել, կարծրանալով մոմեջ ցասման մեջ, ասես խխունջ, դեռես հետապնդվող ծնվող կյանքի անողորմ հոտով:

Եվ նա վերադարձավ իր ցուրտ տունը, հաստատապես որոշելով ազատվել իր կյանքի վկաններից, չորս պատի մեջ փակվելով, մոտ քսան տարեկանում պարտություն կրած

## Գեղարմ Գարուն 2017

ու գիտակցած, որի պատկերները, ըստ, ճամփեգրին ապրող պառավի խոսքերի, հայտնվում էին նրան առավոտները, ստվարագծված ջղակծկումների վարդագույն սարդոստայնով, բայց միաձուլվում էին մեկտեղ ու հալչում էին շնորհիվ աղոթքների, ծեսերգերի ու գուշակությունների, եւ նա տեսավ, որ ցախատունը համարյա դատարկ է, իսկ այն տաշեղները, մինչեւ ողնուծուծը ներծծված են խոնավությամբ աշնանային անձրեւների, որ թործել էին կտուրի հին, բարակ տողը, ծածկարանից սրբելով ջրակայուն ձյուրը, եւ կանգնելով այգում սեւ խնձորենու տակ, որի արմատները պարուրել էին իր հույսերի գերեզմանը, նա զգաց, որ հարյուր տարի հետո էլ նորից ու նորից կգա գյուղակ տասներկու տարեկան տղեկ, անվերջ իր կրկնության մեջ, փոշու վերածվել ձգտող ներքին գոտու փողոկով, ցուրտ աշնանը, դաշտի կողմից, այնպես որ գետը միշտ կլինի ձախ կողմում, իսկ անտառը աջ, եւ բոբիկ ոտքերը, անզգա սուր քարերին ու ջարդված ապակուն, կզգան երկրի անփոփոխ ցուրտը:

Եվ նա գնաց ճամփեգրին ապրող պառավի մոտ, եւ հարցրեց՝ ինչպե՞ս եւ ի՞նչ ապրել: Բաց ամեն աշուն պառավի ուղեղը վերածվում էր չոր սառույցի, սիրտը խփում էր օրը մի անգամ, լեզուն չէր պտտվում, մեռյալներից մոռացված, եւ լույսի գետերը պատուհանից լցվում էին հոգու մեջ ակնաթաղանթների միջով, եւ ամեն ինչ, բացի լույսից, այդ աչքերի համար աղբ էր: Մարկիզուհին, որ տարագրվել էր Ֆրանսիայից դարասկզբին, ինչպես եւ ճամփեգրին ապրող պառավը, աշնանը խորհուրդներ չէր տալիս, բայց նրան հուշեց դպրոցի մոտ հնոցապան աշխատել, որովհետեւ,- ասաց նա,- շուտով ձմեռ է, եւ ասաց՝ ծառերն այրելու ժամանակը. նույն բանը նրան ասաց Աննայի հայրը, ում նա օգնեց սղոցել նախապարտեզում գերաճած ուռենին, եւ նա ասաց՝ լավ,- իսկ հետո հարցրեց՝ արդյո՞ք Աննան տուն գրում է. Աննայի հայրը խեթ-խեթ նայեց նրան ու ասաց, որ գրում է, եւ հարցրեց՝ իսկ ի՞նչ. նա ասաց՝ ոչինչ,- եւ հարցրեց՝ արդյոք նա կգա՞ գյուղակ. Աննայի հայրն ասաց՝ չէ, նա հարցրեց՝ ինչո՞ւ, Աննայի հայրն ասաց՝ որովհետեւ ես նրան կսպանեմ:

Մեպտեմբերի վերջին նա եկավ դպրոցի տնօրենի մոտ ու ասաց, որ պատրաստ է կաթսյանոցում հնոցապան աշխատել, դպրոցի տնօրենը հարցրեց, արդյոք նա համաձայն է գիշերն աշխատել, նա ասաց, որ համաձայն է: Տնօրենի կողմից շինության հյոսիսային թեւն ուղարկված, նա աստիճաններով իջավ նկուղ եւ, հայտնվելով, նեղ, հեղձուցիչ կացարանում, երկար, միտոված մի նստարան տեսավ, թեքված սեւ մի աթոռ, բացված չուգունե հնոցն ու խուփը, որ մի հանգույցով էր պահվում, մի մեծ կաթսա եւ ժանգոտած խողովակներ, որոնցով շրջանառվում էր տաք գոլորշին, կաթսայատան մի անկյունը պատնեշված էր երեք լայն տախտակով, որ մնում էին շնորհիվ հողի մեջ խրած ցցերի, իսկ դրանց ետեւում ամխակույտի վրա ընկած էին գոգաթխանման բահերը եւ սեւ տրորված դուլերը, իսկ պատի վրա գլխի մակարդակի վրա խփված էր երկաթուղային հենակը, որից կախված էր կերասինե լամպը, պղնձալարով փաթաթված, խոնավությունից կանաչած, եւ մի կարճ ակնթարթ, նայելով կրակին, նա զգաց, որ հասել է իր ուղեորության վերջնանպատակին: Նստարանի վրա նստել էր շիկահեր մի տղամարդ: Նրա հուժկու ուսերը գրավում էին ողջ տարածությունը՝ չուգունե հնոցից մինչեւ հանդիպակաց պատը եւ սեղանի երկարությունից ավելի լայն էին երեսում, եւ թվում էր, թե շինությունը, ձուլվելով իր մեջքի ետեւի քարացած խավարին, ընկած է նրա ուսերի վրա, եւ, եթե նա մտադրվի բարձրանալ, նրա հետ մեկտեղ կբարձրանա ողջ դպրոցը, հիմքից պոկված. երբ Բեդոլագինը մտավ կաթսայանոց, խոշոր քթով դեմքը, սեղմված շուրթերի աքցաններով եւ զանգվածեղ կզակով, ցցված, ինչպես ծամող ցլի մոտ, ոչ մի շարժում չխախտեց, ասես ամխափոշու կեղեւն ամրապինդ կալանդել էր ճակատի, այ-

## Գեղարմ Գարուն 2017

տերի ու շուրթերի նյարդերը: Աչքերը մի ակնթարթ սեւեռվեցին Բեդրլագինի վրա, իսկ հետո հայացքը հոսեց հեռու, ինչպես եթե գետի մեջ զլաքար նետեիր, հուսալով խոչընդոտել նրա ճանապարհին օվկիանոս: Բեդրլագինը երկար կանգնել էր նրա առաջ, ունակ չլինելով որոշել, կամ նա մահացու հարբած է, կամ թե զարկվել է ծայրահեղ լեթարգիայով, եւ արդեն մտադրվում էր հեռանալ, երբ հանկարծ շիկահեր տղամարդու կզակը դողաց, ասես շերտաթափվեց ապարը, ներքին ցնցման ազդեցության տակ դեմքից անհետեց անշարժությունը, եւ թվում էր, այն անխուսափելիորեն կցաքուցրվի սեւ քարերով, ինչպես տան պատը ներսի հարվածից, եւ ականջների մեջ արյան հստակ գվվոցի միջից Բեդրլագինը լսեց, ինքն իր դեմ ատելությամբ լցված ձայնը՝ դու երբեւէ տեսե՞լ ես վեց մատ մի ոտքի վրա:

Եվ հետո, երբ աշնանային երեկոներին նրանք նստում էին երկար մխտած նստարանի վրա, գունավոր կրակի ցուլերում, բաց չուգնեց հնոցի առաջ, նա այդպես էլ Բեդրլագինին չասաց, թե ցավ է զգում կամ տառապում է թերարժեքությունից, ինչը որ միանգամայն բնական կլիներ, եթե նա չորս մատ ունենար սահմանված հինգի փոխարեն, օժտված լինելով զազանային անհանդուրժողականությամբ եւ հրեշային ուժով, որ հաճախ իր ճշմարտության ապացույցն էր ծառայում, նա կտրականապես հրաժարվում էր իրեն աշխարհի այլանդակ ծնունդ համարել, հոգու խորքում գիտակցելով, որ դա նվաստացնում է մարդուն, այլ բնավ էլ չի արդարացնում նրան, ինչպես ենթադրում էր Բեդրլագինը: Մի տարի առաջ, այն ժամանակ երբ վեցերորդ մատը լոկ նշմարվում էր դժգույն թմբկով ձախ ոտքի մեծ մատի վրա, իսկ կարմիր աղյուսե հիվանդանոցի բժիշկն ասաց, որ դա կոշտուկ է, եւ ավելի ազատ նստող կոշիկ նշանակեց, ճամփեզրին ապրողը խորհուրդ տվեց նրան հիշել բոլոր իր մեղքերն ու ապաշխարել՝ եթե դա չօգնի՝ ասաց նա թունոտ շնորհակալ եղիր Աստծուն այն բանի համար, որ եղջյուրն աճել է քո ոտքի վրա, այլ ոչ թե ճակատի՝ աղբյուրով ակնարկելով, որ նրան դավաճանել են կանայք, ինչով եւ նրան սարսափելի ցասման մեջ զցեց, որի ազդեցության տակ նա նրա առաջ հանեց շավվարն ու խնդրեց բացատրել, թե ինչ է պետք երիցս նզովյալ կանանց, որից հետո պառավը կարողացավ բերանը փակել լոկ երեք ժամ անց, նախապես ասելով իր ականջը ծակելով, որպեսզի հանդարտեցնեի այտուկների ջղակծկումները: Մակայն պառավի խոսքերը, չնայած դրանց ակնհայտ անհեթեթությանը, ամուր նստեցին նրա գլխում, եւ միեւնույն մռայլ մոլեգնությամբ, որով նա փնտրում էր վեցերորդ մատից ազատվելու միջոցները, նա սկսեց փնտրել դրա հայտնվելու պատճառը:

Կարեկցանքից ո վախից դրդված, Բեդրլագինը գնում էր հիվանդանոց, որտեղ խնդրում էր, որպեսզի Կլիշինի մատը կտրեն, որն ավելորդ էր ըստ զինվորական եւ սոցիալիստական օրենքների, քանի դեռ նա չի ցնդել ու չի սկսել սպանել բժիշկներին, բայց նրան ասացին, որ, եթե մի ոտքի վրա աճել է վեցերորդ մատը, օրգանիզմն այդ էր պահանջում եւ որ ոչ մի բժիշկ չի անդամահատի առողջ մատը, թեկուզ այն իներորդը լինի: Կլիշինի համար դա վերջին կաթիլն էր, որը խմելով նա վերջնականապես փակվեց իր մեջ, գլխում ռումբ կրելով, եւ նրա դեմքը ամխափոշու եւ մրի կեղեի տակ սկսեց նմանվել սովերային գորքերի գնդապետի դեմքին, ինչպես նման են գաղտնիքով բեռնված մարդկանց դեմքերը: Հոկտեմբերի ամսամամ ցուրտ օրերից մեկում Բեդրլագինը կաթսայանոց եկավ ավելի վաղ ու դեմ առավ Կլիշինին նկուղ տանող աստիճանների վրա: Նրանք ելան փողոց, եւ նրա, մուժով պատված աչքերից, Բեդրլագինը հասկացավ, որ ռումբը պայթել է: Բռունցքի մեջ սեղմելով սրած գամփորն ու կռանը, Կլիշինը համաչափ քայլեց հիվանդանոցի ուղղությամբ, կարճ ճանապարհով՝ վրեժի կողմնացույցով, որի սլաքը պեծկլտում էր աչքերի առաջ մի երկար անքուն տարի: Եվ դպրոցից մինչեւ հի-

## Գեղարմ Գարուն 2017

վանդանոց ողջ ճանապարհարձնաքցում նա ոչ մի խոսք չասաց, լուռ մտավ հիվանդանոց, անցավ միջանցքով վիրաբույժի գրասենյակի առաջ դրված նստարանների միջով և նույնքան լուռ մտավ գրասենյակ, դուռը բաց թողնելով: Չնայելով վիրաբույժին, երիտասարդ քրոջն ու միշտ ծիծաղող ծերունուն, որ մեխի վրա էր կանգնել, նա իր մոտ քաշեց փայտե աթոռակը, արագ, համաչափ շարժումով, հանեց ձախ ոտքից կոշիկը, քանդեց փաթաթանները, ոտքը դրեց աթոռակի վրա, համաչափ շարժումով դրեց գամփորի սրած սայրը վեցերորդ մատի տակ, և մինչ կհնչեր վիրաբույժի աղիողորմ ճիչը, մինչ քրոջ տեղից պոկվելն ու միջանցք դուրս թռչելը, կարճատև թափ հավաքեց և ուժով խփեց կռանով գամփորի կոթին: Այդժամ նա իջավ աթոռակի վրա, գործիքները ձեռքից վար գցելով, ինքն իրեն հաղթած, որովհետև մարտնչում էր ինքն իր դեմ, ինչպես թշնամու դեմ, վերածելով իր հետպատերազմյան կյանքն անողոք, նպատակաուղղված ինքնաքայքայման, հարուցված թշնամու բացակայությամբ, դեռևս չհասկանալով վեցերորդ մատի հայտնվելու պատճառները, բայց արդեն աղոտ զգալով, որ սրել էր գամփորն այն բանի համր, որպեսզի հատեր վերջին տարվա իր կյանքի իմաստը:

Հատած վեցերորդ մատը հայտնվեց գյուղակում՝ որպես տարվա ամենալկտի ու անաստված իրադարձություն, և, չնայած այն բանին, որ ճամփեզրին ապրող պառավը, ծայրահեղ բացասաբար վերաբերվեց Կլիշինի արարքին, ինչով հիմնավորապես գցեց իր հեղինակությունը, որն անառարկելի էր համարում, չնայած այն բանին, որ շատ կանայք արգելել էին իրենց երեխաներին մոտենալ Կլիշինին, որպեսզի նա նրանց խորհուրդ չտար փորը պատռել, երբ ուտելու բան չլիներ, մարդկանց մեծամասնությունը նրա արարքի մեջ տեսավ մարդկային ոգու հաղթանակը ֆիզիկական ցավի դեմ, իսկ պառավի խոսքերն այն մասին, թե համանման հայացքն իրերին անխուսափելիորեն կհանգեցնի անդամավնասի ու ինքնասպանի հիացմանը, խեղդվեցին անվստահության խորունկ ծովում, որի հատակին դադրում էին լուսին թռչելու նախագծերը, հյուլեի ճեղքման ֆիզիկա-մաթեմատիկական սահմանումները, ինչպես նաև գեներտիկ ժառանգականությանը վերաբերող նյութերը, բացի այդ, լուր տարածվեց, որ հեռավոր քաղաքում, որտեղ գնդապետը գրոհի էր տանում սովետային զորքերը Կեսարի գաղափարի կրողների դեմ, արտասարգանդային էկոնոմիկայի հայրը, որ իրենից ներկայացնում էր լվացված ու ատամները մաքրած Ռուսաստանը, ամբիոնից գուշակում էր, որ հենց գամփորի ու կռանի օգնությամբ հարկ է հաշվեհարդար տեսնել անցանկալի մատներից պետական պարտքերի հարթաթային ոտքերի վրա:

Այնինչ նկարիչ Պալը, որ տարածել էր այդ լուրը, կանգնել էր շուկայում քրքրված լայնեզր դարչնագույն գլխարկով, որի տակից ցցվում էին նոսր, վաղուց չկտրած խարտյաշ մազերը, մարդկային ձայների սուր քանու մեջ, որ բարձրացրած փոշով քշում էր խնամքով դարսած սիմիոնդների կողքերի, զուլպաների, թելերի ու պատեֆոնի ասեղների մնջանքը, ֆաներայի վրա ցուցադրելով փոքրիկ վառ նատյուրմորտները, քնքուշ գարնանային ծաղիկներով, ծնկածալ կավալերների ու սպիտակ պարահանդեսային զգեստներով պլացիկ տիկնանց գունագեղ գծանկարները, և նրա թաց, թավշյա աչքերի կշտամբական հայացքը սահում էր ամբոխի վրայով, իսկ գունատ միսը դեմքը, որ մնացել էր նեղացած տասնհինգ տարեկան տղայի դեմքով, որ պատրաստ էր ամեն պահի արտասվելու, նույնիսկ այն ժամանակ, երբ վրա հասավ նրա երեսուն տարին, համր կշտամբանքով ետ էր գցած մեկուկեսմետրանոց հասակին, այնպես որ հարթ, սուր, անմազ կզակը ցցվել էր ասես քիվ բարակ սպիտակ վզի վրա, որ անհետում էր բարձրացրած օձիքի ետևում երկար, ցեցը կերած վերարկուի, որի փեշերը համարյա քարշ էին գալիս գետնի վրայով, երբ նա քայլում էր, նրա ծուռումուռ կերպարանքին անհանգր-

## Գեղարմ Գարուն 2017

վան, անապաստան, արտասովանեղացած տեսք հաղորդելով: Նա չէր լսում մարդկանց, որոնք ողջունում էին նրան, նրա գծանկարներն առնելու մտադրություն չունենալով, լսում, բայց չէր հասկանում եւ չէր կարող կրկնել կանչող եւ վրդովված ճիչերը, նրա գիտակցության մեջ գոյող հավերժական, ձիգ գվվոցով, որով, բացարձակ լռությունից զուրկ աշխարհում, քամին քշում է կեղտն ու մեղքերը, չէր նկատում, ինչպես բարձրացած փոշին նստում է իր նատյուրմորտների կապույտ ծաղիկների վրա, խորունկ խոհածությունների մեջ թաղված, զգույշ քայլ դնելով առետրական հաշիվների երեքուն ավազներում, հարստանալու ճանապարհ փնտրելով, միասնական մսխման ուղուն, համրորեն հայացքն հառելով թռչող, լողող, տմտմբացնող գլուխներից վեր: Բայց ինչ-որ մի պահի այդ ամենը վերջացավ, եւ ոչ մեկը չտեսավ, թե ինչպես նրա գունատ նիհար դեմքն աղավաղեց ցասման ծամածռությունը, իսկ հաջորդ պահին ֆաներան, որի վրա ցուցադրված էին գծանկարները, շրիկոցով տապալվեց ոտքի հարվածից, սրնթաց դուրս պրծած վերարկուի տակից: Վաճառողը ձախից անհմուտ, ծանրաշարժ կողմ թռավ, սպասելով տեսնել դանակի շողանքը, որ մշտապես հայտնվում էր նկարիչ Պալի ձեռքին անասնձեղի կատաղության բուսկներին, իսկ զանգվածեղ, մեծակուրծք կինը ծանր նստեց, վիթխարի ծնկները տարածելով, որպեսզի վերցներ իր ոտքերի մոտ ընկած գծանկարը, բայց նկարիչ Պալը խեղդված, ֆշշացող ձայնով ասաց՝ ձեռք մի տուր, եւ ասաց՝ ձեռք մի տուր, ասում եմ, գջլոտ շան քած,- իսկ հետո ասաց՝ դեռ կհասցնես, որ գնամ, իսկ հիմա ձեռք մի տուր: Հետո նրա շուրթերը նեղացած ծռվեցին, դեմքը ետ ընկավ, եւ նրանք նայում էին, ինչպես նա մեջքով շրջվեց իրենց կողմն ու լուռ քարշ եկավ գյուղակ, նիհար ոտքերով խճճվելով երկար վերարկուի փոշոտ, քրքրված հետնափեշերում, կարծես ճակատի վրա տանում էր սկահակն իր սրտով:

Նկարիչ Պալն այդ օրը ոչ մեկին ոչինչ չասաց, երբ, իջնելով դպրոցական կաթսայատունը, որպեսզի անվերջորեն չթափառի, Բեդրլագինի մեջ տեսավ հարստանալու ակունքը, եւ նրա գլխում ինչ-որ մտքեր ծնվեցին, եւ շատ երկար ոչ մեկին ոչինչ չէր ասում, նույնիսկ երբ այդ մտքերը բավական հաստատուն հիմք ձեռք բերեցին հաշվարկների ու ստուգումների հետեւանքով, որոնք նա կատարել էր, մասամբ որպեսզի համոզվեր իր գեղարվեստական ընդունակություններում, մասամբ էլ որպեսզի իր աշխատանքները զուր չկորչեն: Նա գնաց հարեւան գյուղակը, որտեղ գործող եկեղեցի կար, պատերազմի ժամանակ տուժած եւ հետզհետե վերականգնած մարդկանցով, խլացած խղճի գիշերային ոռնոցից, հուսահատ ներման ու բարեկամություն ձեռք բերելու կարիք ունեցող: Բայց եթե մարդիկ կարողացան փակել ճեղքվածքներն արկերից քարերով ու աղյուսով, ամրացնել փլուզումները, ծածկել մոտակա ռմբափոսերը, կավապատել, փամփուշտներից քրքրված, հյուսիսային պատը, ինչպես նաեւ կարգի բերել փոքրիկ սրահն ու նախասենյակը, որտեղ փոքրիկ խաչեր ու լուցկու տուփի չափի վզի սրբապատկերներ էին վաճառում, ապա նրանք չէին կարող կտավներ անել սրբերի դեմքերով, տարված, այրած եւ պարզապես գնդակահարված երկու բանակների զինվորների կողմից: Այսպիսով, այն ամենը, ինչը եկեղեցին եկեղեցի էր դարձնում ներսում, համարյա իսպառ բացակայում էր, իսկ եթե չէր բացակայում, ապա փոխարինված էր կուպիտ շինծու բաներով, որոնք, փամփուշտներով խփված մի քանի փրկված դիմաստրբապատկերների մեջ, տազնապ եւ երկյուղ էին հարուցում նրանց, ովքեր գալիս էին խղճի հետ հաշտվելու ու Աստծուն գտնելու հույսով: Եվ նրանք կանգ էին առնում մեջտեղում ցուրտ կոկիկ հավաքած եկեղեցական սրահի, որի փոշու մանրագույն մասերը պահպանում էին բազմամյա հնության մահացու մարտի ցնորական պատկերը, լսում էին կրակոցներն ու ճիչերը, որ դեռ հնչում էին վերից զանգերի դողանջում, տեսնում էին միջան-

## Գեղարմ Գալուն 2017

ցահովից չվնասված ժամանակի թանձրուկները մութ անկյուններում, որ պահպանում էին հենց սպանության պահը, զգում էին վառողի եւ մկնածիքտի չոր հոտն անշարժ օդում, ընդ որում, որ նրանց բոլորին հայտնի էր, որ յուրաքանչյուր հոտ եկեղեցում ունի իր գաղտնի իմաստը, որ որոշում է հենց գոյության իմաստը, եւ աղոթում էին, իրենց աղոթքներն հղելով նրան, ում բարձր սպիտակ ճակատը ծակվել էր, կամ նրան, ով նախում էր իրենց մի աչքով եւ փոսով՝ երկրորդի փոխարեն: Եվ այդժամ նկարիչ Պալը, չկարողացող եւ չցանկացող կարողանալ պատկերել թղթի վրա մարդկային դեմքերը, որոնք, ըստ իր կարծիքի, չարժեին վատնած աշխատանքներին, բայց Բեդրլագինի դեմքի մեջ ինչ-որ մեռյալ եկեղեցական հնազանդություն, ամենաներող խոնարհություն եւ անխուսափելի սնանկության նշան աչքերում տեսած, որ նրան ժառանգություն էր հասել տան, ցախատան ու սեւ խնձորենու մոտի մառանի հետ, կնոջ հետ, որ եկել էր մի անգամ, ու երագներով, որոնցում հղի կատուն կախված է նրանից, ատամնասեղներով կառչած ձվապարկին, վերջապես, հենց դեմքի հետ, մագնիսի պես ձգող, աշխարհի սուտն ու մեղքերը, իր ծառայություններն առաջարկեց եկեղեցուն: Մինչեւ գինը հաստատելը, նա պայմանավորվեց եկեղեցականների հետ կտավների ու ներկերի համար, ինչպես նաեւ խնդրեց ժամանակավորապես վերցնել սրբապատկերների պահպանված շրջանակները, ճարճքած լաքով պատված, այն բանի համար, որ ինքը դրանց մեջ դներ պատրաստի կտավները, որովհետեւ հասկանում էր՝ ինչքան էլ լավ կտավի վրա նկարես, այն միշտ ավելի լավ կերես հիմնավոր շրջանակով, քան ծալովի, իսկ հետո բացված՝ դիտելու համար: Համաձայնություն ստանալով, նա հաստատեց գինը, որը շատ չէր, եւ ոչ էլ քիչ, այլ ավելի շուտ փորձնական: Հետո նա քարշ տվեց կտավները, շրջանակներն ու ներկերը իր տուն եւ, նստելով սենյակում մեջքով պատուհանին ու լույսին, երեք օր շարունակ թուղթ էր խզբզում, առաջին հերթին պատկերելով հերթական թղթի վրա դեղին լուսապսակը, որը, իր կարծիքով, պիտի որ նախօրոք առեղծվածային, հլու իմաստություն հաղորդեր դեմքին, դարեր ի վեր լուսապսակի տակ գոյող, ինչպես նաեւ կանխապես խափանել արատի եւ ունայնության գծերն իր նկարչության մեջ: Եվ երբ երրորդ օրվա ավարտին, գննելով իր վերջին ստեղծագործությունը, գոհ մնաց, նա արեց այն, ինչը որ նա պիտի չաներ եւ երբեք չէր անի, եթե նա պատմաբան կամ քաղաքագետ լիներ, եւ հենց՝ ծածկեց, վերացրեց լուսապսակը եւ, առաջին անգամ նայելով, ոսկե լուսապսակից գուրկ պատկերած դեմքին, զգաց, թե ինչպես ուղեղը լցվում է ցասման հոծ հյութով, իսկ ձեռքերըն ասես փշրվում են անկարողությունից դանակի ապարդյուն խարխափման մեջ: Բայց հետո, երբ կատաղության նույն անցավ, նա հասկացավ, որ դա կարետր չէ, եւ չորրորդ օրը, գալով դպրոցական կաթսայանոց, Կլիշինին եւ Բեդրլագինին ամեն ինչ ասաց, ինչ որ մտքին էր, խոստանալով ստացված գումարի կեսը երկուսին: Իսկ հետո, նստելով սենյակում մեջքով դեպի պատուհանն ու լույսը, ծուռ փայտածողերից դրստած նկարակալն իր առաջ դնելով, նա Բեդրլագինին ասաց՝ մտածիր այն մասին, ինչ դու ունեիր, իսկ հիմա չկա,- եւ Բեդրլագինը մտածում էր այն գերեզմանոցի մասին հույսերի , որոնք պարուրել էին սեւ խնձորենու արմատները եւ որի վրա նա կանգնել էր աշնան նախաշեմին, արդեն այն բանից հետո, երբ նրան առաջարկեցին հետույքն առաջ արած կին դառնալ, դրդելով սպանության, որն այդպես էլ չիրագործվեց, բայց մինչ այն, որ նա ազատվեց ծնվող կյանքի հոտից, այն դուրս մղելով խանձահոտով:

Հետո մթնեց, նկարիչ Պալն ավարտեց աշխատանքը, եւ Բեդրլագինը գնաց տուն: Եվ հենց որ գյուղակի տների մեջ երեսաց նրա տունը, նա պատերի միջից ստվեր տեսավ ու մտածեց, որ տանն ինչ-որ մեկը կա: Համարյա համոզված պատերի միջից տեսնելու իր ունակության մեջ, նա մտավ բակ, բարձրացավ սանդղամուտքի աստիճաններով, բա-

## Գեղարմ Գալուն 2017

ցեց դուռը, անցավ, կիրգե սապոզներ, իսկ հետո բորբոս հոտող, նախասենյակը, եւ սենյակում պատուհանի մոտ տեսավ Աննային: Նա լուռ կանգնել էր դռան արանքում, անհաղթելի մեռած, եւ նրա ծանր, անկամ ձեռքերը տարուբերվում էին ինչ-որ տեղ ներքեւում, ուժը, արյունն ու ոսկորների ամրությունը կորցրած, ասես թաց ճուպաններ, եւ նա նրան ավելի անհրակամ էր թվում, քան այն, որ քայլում էր գիշերները չորցած օշինդրի վրայով ցանկություններում ու երազներում, բայց հիմա նա նրան պետք չէր: Եվ հենց որ նա հասկացավ, որ նա իրոք վերադարձել է եւ որ նրա սովերը նա տեսնում էր տան պատերի միջով, ասես լույսի տակի բարախիկ վարագույրի միջով, եւ որ հենց ինքն է կանգնած պատուհանի մոտ ճիշտ մույնպիսին, միայն նիհարած, ներս ընկած, հիվանդագին գեղեցիկ, բայց ինչպես միշտ, պատրաստ ամրոցներ գրավելու, իր թուլության ուժով բաստիոններ ցաքուցրելու, դռներ ջարդելու, կողպեքներ կոտրելու, իր դյուրաբեկ նիհարությամբ ուղեղներ այրելու, պատրաստ աշխարհը պայթեցնելու, որպեսզի ամեն ինչ վերստեղծի ամենասկզբից եւ դարձյալ սկսել ապրել, բայց իմաստուն եւ անսխալ նա ասաց՝ կորիք, եւ մեկ անգամ եւս ասաց՝ կորիք, հաստատ իմանալով, որ կհիշի նրա գալստյան մասին լոկ մինչ այն պահը, մինչեւ որ քնի, իսկ վաղը կմոռանա, այնպես որ նա ստիպված կլինի նրան տեսնել առավոտյան եւ ասել այն, ինչ նա ասաց այսօր: Բայց, արթնանալով, նա հստակ հիշում էր, որ Աննան տանն էր, հիշում էր արթնանալու առաջին պահին, դեռ չնկատելով, որ նա հանել է նրանից կեղտոտ սապոզներն ու խանձահոտով ներծծված աշխատանքային բաճկոնը: Նա մտել էր սեղանի մոտ ու նայում էր նրան, իսկ հետո, երբ նա ելավ, հագավ մաքրած սապոզներն ու բաճկոնը, նա առանց որեւէ արտահայտության ասաց՝ քեզ մոտ եկել էին քո ընկերները - եւ ասաց՝ այն նկարչին եւ գիտեմ՝ նա խելագար է՝ հետո, դանդաղ, նրա մռայլ լռությանն ուշք չդարձնելով, արտաբերեց՝ եւ նրանց ասացի, որ էստեղ զանազան տականքներն անելիք չունեն: Նա նայեց նրան խոժոռ, բացակայող հայացքով, գիսի ընկնելով, որ նա դա հենց այնպես չասաց, հավանաբար, զայրույթի բռնկման ակնկալիքով, պատրաստվելով տանել նզովքն ու ծեծը, եւ հանկարծ նայելով նրա սպիտակ, լարված դեմքին, մեծ, լայնաբաց աչքերում պաղած պատժված լինելու ցանկությունը, բայց ոչ թե իր վերջին խոսքերի համար, այլ այն բանի, որ հեռացել էր նրանից մի ժամանակ ուրիշ տղամարդու հետ, նա մտածեց, որ իրեն պետք չէ նրա վրա ձեռք բարձրացնել, որովհետեւ նրա հոր ձեռքը վաղուց բարձրացած է եւ սպասում է լոկ հայտնվելուն, որպեսզի նրա հոգին հանի:

Բայց Աննայի հայրը մույնիսկ ճղմից չելավ, երբ Բեդլազինը ասաց նրան նրա վերադարձի մասին, մտել էր, կորացած, կատաղի մեծ անւածաղկի սերմերը չրթելով, տակով անելով ծուռտիկ կարճ ոտքերը, որ նախատեսված էին ոչ թե քայլելու, այլ այն բանի համար, որպեսզի սեղմեին ձիու կողերը, իսկ հետո սառն ասաց՝ դե եւ ի՞նչ,- եւ ասաց՝ դե վերադարձել է,- հետո անվրդով ասաց՝ դե հասցրու նրա մոտքին, ասա, հերդ է կարգադրել: Բեդլազինը շրջվեց, որպեսզի գնա, բայց Աննայի հայրն ասաց՝ կանգնիր՝ եւ ասաց՝ կեցիր, հետո ասաց՝ գնանք տուն օդի խմենք: Նրանք օդի խմեցին ու խմեցին խունացող տերեւով գունավորված թրմօդին, եւ այդժամ Աննայի հայրն ասաց՝ նրանից երեխա բեր,- եւ ասաց՝ բեր, ասում եմ. Բեդլազինն ասաց՝ լավ,- եւ ասաց՝ կանեմ,- եւ ասաց՝ անպայման,- իսկ հետո ասաց՝ մեկ, երկու, երեք, չորս երեխա. Աննայի հայրը հարցրեց՝ դու ի՞նչ ես դուրս տալիս. Բեդլազինն ասաց՝ քսան, երեսուն, քառասուն երեխա, հարյուր երեխա, մինչեւ որ նա չբղավի, որ բավական է. Աննայի հայրը քմծիծաղեց ու ասաց՝ չի բղավի. Բեդլազինն ասաց՝ կգոռա, Աննայի հայրն ասաց՝ չէ՛ եւ հարցրեց՝ գիտես ինչո՞ւ: Բեդլազին ասաց՝ ինչո՞ւ. Աննայի հայրն ասաց՝ նա երեխա չի ունենա,- եւ ասաց՝ ընդհանրապես. Բեդլազինը հարցրեց՝ ինչո՞ւ. Աննայի հայրն ասաց՝ իրենից



## Գեղարմ Գարուն 2017

հարցրու՝ եւ ասաց՝ նա քեզ կասի, Բեդրլագինն ասաց՝ դե լավ՝ եւ ասաց՝ լավ,- իսկ հետո ասաց՝ գիտե՞ս ես ինչի եմ քեզ մոտ եկել. Աննայի հայրն ասաց՝ գիտեմ, Բեդրլագինն ասաց՝ չէ, չգիտես, Աննայի հայրը հարցրեց՝ ինչի՞. Բեդրլագինը ելավ ու ասաց՝ որպես-զի դու գնաս ու սպանես նրան: Հետո նա գնաց:

Եվ Աննան անցավ նրան, դեն նետելով կանացի ծամածռությունները, աստիճանա-բար մոտեցումները, հողն հետագոտելը, անցավ ոչ թե հետզհետե, ոչ էլ աննկատ, այլ մե-կեն, ասես այլ կերպ չէր էլ կարող լինել, ասես քաղաք է գնացել փոխադարձ համաձայ-նությամբ, որպեսզի նշանակված ժամին վերադառնա, եւ այդ ժամանակը եկել է՝ չջա-նալով ավելորդ բան ասել, չջանալով լռել, երբ դա անհրաժեշտ էր՝ հայտնվեց տանը որ-պես ճակատագրի սիրուհի, նախաճաշի, ճաշի եւ ընթրիքի շուրջ ինչ-որ ծխական խո-սակցությունների պես բան էր ներմուծել, եթե Բեդրլագինը տանն էր լինում, կարծես ամեն ինչ վաղուց որոշված եւ պայմանավորված էր դեռ այն ժամանակ, երբ դեռ նրանք երեխաներ էին, եւ այլես խոսելու բան չկա: Նա նամակ գրեց կիսակոյր կնոջը, հե-տաքրքրվելով նրա առողջությամբ, եւ նրան Նոյեմբերյան տոների աթիվ շնորհավորա-կան բացիկ ուղարկեց, մակագրելով իր եւ Բեդրլագինի անունով. Նա Կլիշինին եւ նկա-րիչ Պալին շեմից ներս չէր թողնում, որոշելով չարի ակունքը, եւ ասում էր, որպեսզի նրանք կորչեն գրողի ծոցը. նա կասյի տեղային բաժանմունքում ախատանքի տեղա-վորվեց եւ նամակներ ու թերթեր էր բաժանում, իսկ երբ նրա հայրն ասաց, որ նա փոս-տատար է դարձել լոկ այն բանի համար, որպեսզի քաղաքային որձից իրեն հասցեագ-րած նամակներքոցնի ու իրենով անի. նա ասաց, որպեսզի նա քիթն ուրիշի գործերի մեջ չխոթի: Նա անխորտակելի համբերությամբ ու համառությամբ տոգորվեց, որի առջեւ Կլիշինի համառությունը քմահաճ երեխայի, որ այլես չէր ուզում միզամանի մեջ միզել, համառություն էր թվում, մահվան պատյանը սառույցի պատյանի տեղ դնելով, զինվել էր հորատանման բանով մտադրվելով շաղափել ճանապարհն առ սիրտը ցանկացած գնով, եթե նույնիսկ սիպված լինի կողերը ջարդել: Եվ խաբվեց՝ խաբվեց այն լուռ, հան-գիստ համաձայնությունից, որով նա նրա հետ կիսում էր տեղաշորը, այն լռելյայն անվը-ղությունից, որով նա ընդունում էր ամեն բան, ինչ էլ նա ասեր, այն ձայնից, որով նա ողջունում ու հրաժեշտ էր տալիս նրան, որովհետեւ շատ քիչ ժամանակ էր անցել, որ-պեսզի նա կարողանար հասկանալ, իսկ հետո անդարձ հավատար, որ ժամանակները փոխվել են, չջանալով արդարացնել, իր վարկը վերականգնել, թաղելով իր անցյալն այնքան խորը, ինչպես չեն թաղել եւ ոչ մի մեռյալի, բայց եւ չձեւացնելով, թե մի շաբաթ առաջ է ծնվել, որովհետեւ պիտի գործի դներ, տարիների ընթացքում կուտակած իր փորձը, մարդկանցից իր մտադրությունները չէր թաքցնում եւ հանդուգն, սպառնալիքով ասում էր՝ հա,- ասում էր նա,- ինձ մարդ է պետք,- եւ ասում էր՝ փորձեք նրան ինձնից խլել, եւ աչքերը նրա նորբ, գեղեցիկ դեմքի վրա շողում էին այնպես, կարծես նա արդեն գնում էր ողջ աշխարհի դեմ, միհար, համարյա թափանցիկ ձեռքերով սեղմելով թրիքով կեղտոտված փոցխը:

Նկարիչ Պալը շատ կարճ ժամանակում երեք նկար նկարեց, նա Բեդրլագինին հա-յելու բեկոր էր տալիս, եւ Բեդրլագինը նայում էր բեկորին, իսկ հետո նայում էր կտավին եւ տեսնում էր զարմանալի, իսկ երբեմն ընկճող մնացությունը, մտապահում էր իր դեմ-քը, որը տեսել էր հայելում լոկ մեկ անգամ, մեկեն պատերազմից հետո, երբ նա հազիվ տասնչորս տարեկան էր, եւ վաղուց մոռացել էր: Նկարիչ Պալը, սակայն, հասկանում էր, որ կտավները վատ են նկարված, բայց ասում էր, որ դրանք ավելի լավ են արված, քան եկեղեցում կախվածները: Նա կտավները տարավ եկեղեցի մեկը մեկի ետքից հինգ օր-վա ընդմիջումով, իսկ երբ եկեղեցականները, չափազանց զարմացած, հարցրին, թե որ-

## Գեղարմ Գարուն 2017

քան ժամանակ է նա ծախսում մի կտավի վրա, նա պատասխանեց, որ էսփիզների վրա աշխատել է մի տարվա ընթացքում, իսկ կտավների վրա նկարում է լոգարիթմական քանոնի օգնությամբ, ինչով հիմնավորապես նրանց շեղեց: Հետո նա սկսեց նկարել պատվիրածներից չորրորդն ու կտավներից վերջինը, բայց այդպես էլ չավարտեց, իսկ դրա պատճառը Բեդլազիհնն է, ում տիրանալու անունակությունը թունավորված արյան մուր ուժին, որ լիովին իրեն էր ենթարկեցրել նրա ուղեղը, նրան լիովին անմեղսագիտակ էր դարձնում հարբած խելառացման ժամերին, դրդում էր արարքների, որոնց կործանարար հետեւանքները նա կարող էր կանխատեսել մանկուց, բայց ոչ հիմա, երբ նրան արգելված էր կանխագուշակել, այլ կարգադրված էր գործել: Եվ երկու օրից, այն բանից հետո, որ նկարիչ Պալը եկեղեցուն վաճառեց երրորդ կտավը, դրված հիմնավորց շրջանակի մեջ, եւ աշխատում էր չորրորդի վրա, Բեդլազիհնը, խոզի պես հարբած, ելավ կաթսայանոցից ու գնաց հարեւան գյուղակի եկեղեցին ընդարձակ, անձրեւներով ողողված ճանապարհով. ընկնում ու ելնում էր, ոտքերը չզգալով, բայց զգալով դանդաղ սահանկումները եւ փափուկ, դյուրասահ հողը, իսկ մարմինը, ցավ զգալու ընդունակությունը կորցրած, շուռուճուռ էր գալիս, ելնում ու կրկին շտկվում էր, ենթարկվելով միեւնոյն ուժին, որը տանում էր միձեռնանի տղամարդու յուրաքանչյուր բջիջը դեպի վերացումն ու մահը: Եվ նա օրը ցերեկով մտավ եկեղեցի, մեռածի պես հարբած, կեղտոտ, թաց բաճկոնով եւ հոծ կեղտով պատված շրմփացող սապոզներով: Ծանր ոտքերը քարշ տալով, նա անցավ եկեղեցու սրահը եւ կանգ առավ այնտեղ, ձեռքով պատից բռնվելով, եւ նայում էր հին շրջանակներով նկարիչ Պալի կտավներին պղտոր, մեռյալ, անթարթ աչքերով, ճանաչելով իրեն, եւ լոկ հինգ թույն անց, ոչ մի անգամ չթարթելով, նա նայեց շուրջը որովհետեւ լսեց, թվում էր, հեռավոր, համաչափորեն ահագնացող աղմուկը, եւ աղմուկը հանդարտեց, եւ տեսավ, ընդարմացումից կաշկանդված մարդկանց: Նա լուռ նայում էր նրանց, եւ նրանց շուրթերն անհունչ շարժվում էին, բառեր արտասանելով, բայց կարելի էր գոռալ, հիստերիկայի մեջ ցնցվել, մոլեգնել՝ այդ ամենն անհետ, չթողնելով կազմավորվել կենդանի ձայնի մեջ, կկլլեր մնջանքը, այդ ամենը ոչ մեկը չէր նկատի, որովհետեւ ինչ-որ բան, մախկինում նկատված, մարդկանց կթաղեր փրկարար մոռացության մեջ, միակ բանը որ ընդունակ էր պահպանելու նրանց բանականությունը: Եվ այդ-ժամ Բեդլազիհնը բարձրացրեց ձեռքը երկարած ցուցամատով, եւ ձեռքը կախվեց օդում, երբ մատն ուղղվել էր սրբապատկերներից մեկի վրա, իսկ հետո ձեռքը կողմ գնաց, մատնացույց անելով մյուս երկուսը, եւ նա հանգիստ, ցածր, բայց հստակորեն ասաց՝ հանեք այդ,- ճիշտ նույնպես պատից բռնվելով, ասաց՝ հանեք,- իսկ հետո, ոտքերը ծանր շարժելով, ելավ եկեղեցուց, իսկ ձեռքը դեռ կախված էր եկեղեցում եւ կախված էր այնքան ժամանակ, մինչեւ որ սրբապատկերները, որոնց այն մատնացույց էր անում, չհանվեցին:

Այն ողողված ճանապարհով, ընկնելով ու ելնելով, նա հասավ տուն եւ, Աննայի վրա չնայելով, թաց կեղտոտ բաճկոնով ու սապոզներով փռվեց մահճակալի վրա եւ օրվա մնացուկն ու ողջ գիշեր քնեց, իսկ արթնացավ արդեն առանց բաճկոնի ու սապոզների: Հազավ դեռ խոնավ մաքրած սապոզներն ու ելավ շեմ:

Աննան կանգնած էր բակի մեջտեղում, գետնին դնելով հնամաշ, կերոսինով լցված գերմանական բալոնը, փայտը միհար, համարյա թափանցիկ ձեռքին, եւ նրա աչքերը գունատ նրբին դեմքի վրա շողում էին հուսահատությամբ ու չարությամբ, եւ տան շեմից Բեդլազիհնը լսեց, ինչպես է նա գոռում՝ կորեք էստեղից գրողի ծոցը, անիծյալ սրիկաներ, կորեք էստեղից - եւ նա տեսավ որ նրանք կանգնած են ցանկապատի դռնակի մոտ, եւ տեսավ, ինչպես նկարիչ Պալը ողջ գյուղակին ծանոթ շարժումով, որն անհնար է որ-

## Գեղարմ Գարուն 2017

սալ, ինչպես անհնար է որսալ պիրկ ձգած եւ հանկարծ հատած ճուպանի ծայրերի թռացրիվ գալը ճանկեց դանակը երկար, նեղ վերարկուի գրպանից, երբ Աննան փայտը բարձրացրեց գլխավերեւում ու զնաց նրանց վրա, որոշելով, հավանաբար, մեռնել կամ այս ամենից հանգստանալ, պառկելով հիվանդանոցում բացած փորով, որը նա չէր պահպանում այն ժամանակվանից, երբ իմացավ որ չի կարողանա երեխա ունենալ: Եվ այդժամ նկարիչ Պալը կանգնեց մարդ սպանելու անհրաժեշտության առաջ. շվարածությունը, հարուցված անհավատությամբ առ այն, որ ինչ-որ մեկը կխիզախի գնալ նրա վրա դանակի առկայությամբ, նրան, սակայն, հաջողվեց արագ հաղթահարել, որովհետեւ նա հասկացավ, որ հենց այդպես, այլ ոչ այլ կերպ էր կատարվում սպանությունը կյանքի ծագման ժամանակներից, եւ հասկացավ, որ եթե ինքն արդեն սովորություն է դարձրել ամեն մի սխալ խոսքի ժամանակ կողքից ճանկել դանակը ավելի բարձրահասակ լինելու սպարոյուն ձգտման մեջ, ապա վաղ թե ուշ նա սիպված կլինի այն օգտագործել: Աննան ամեն ինչ տեսնում էր, եւ ամեն ինչ հասկացավ նրա աչքերից, եւ, մի վայրկյան կանգ առնելով, դարձյալ զնաց նրա վրա, եւ ուզում էր ինչ-որ բան ասել, բայց չկարողացավ, հուսահատություն ու հետաքրքրություն սպրելով, ինչպես տղամարդու հետ առաջին ֆիզիկական մերձեցման ժամանակ, շատ վաղուց, այն միակ անգամ, երբ դա իսկապես ինչ-որ բան նշանակում էր: Եվ այդժամ Բեդրլագինը նետվեց նրանց վրա շեմից, բերանը բացելով անհուն ճիչի մեջ, եւ, սայթաքելով, փոկեց բակի մեջտեղում: Այդժամ Կլիշինը քայլեց Աննային ընդառաջ, եւ նա թափով խփեց նրան, բայց նա ձեռքը դեմ տվեց եւ, փայտը ձեռքից պոկելով, կողմ նետեց: Հետո նա դանդաղ շրջվեց նկարիչ Պալի կողմը, ով լուռ սպասում էր Աննային, ժամանակ առ ժամանակ բարակ մատներով սեղմելով դանակի կոթը, կկոցեց մի աչքն ու խուլ, հանգիստ ասաց՝ դու ինչ իրո՞ք որոշել ես նրա վերջը տալ,- եւ լռելով, շողոքորթաբար հարցրեց՝ հա՞. կամացույց, ֆշալացող ձայնով Պալն ասաց՝ հա, որոշել եմ,- եւ ասաց՝ ոչ մի լեշի չեմ թողնի նձ վրա գոռալ,- իսկ հետո ասաց՝ մի խցկվի: Նա համառորեն նայեց Կլիշինի դեմքին եւ հանկարծ տեսավ այն, ինչը որ միշտ թաքնված էր անխափոշու ու մրակեղեւի տակ, տեսավ ոչ թե դեմքը, այլ կեսճամփին պաղած սեւ քարերի հրազանգվածը, կանգնեցված եւ սառեցրած կամքի ուժով, տեսավ մարդուն, ում չի կարող ինչ-որ բան դուր գալ կամ դուր չգալ, գրգռել կամ անտարբեր թողնել, վշտացնել կամ զվարթացնել, տեսավ մի մարդու, ով ունակ է լոկ սիրել կամ ատել առանց բացառության, հոգի, որ հյուսված է երկու, այլ ոչ թե բյուրավոր զգացմունքներից, բաղկացած բացառապես լուռ սիրուց եւ լուռ ատելությունից՝ ամբողջական, առանց որեւէ նպատակի, անշրջադարձելի նույնիսկ շրջադարձերում, ստեղծված ծայրահեղության մեջ եւ ծայրահեղությամբ սնվող: Եվ ընդարմացման մեջ նա թույլատրեց Կլիշինի սարթ մատներին իլել իրենից դանակը եւ հոգում դեսուդեն էր ընկնում շարժվելու անընդունակ, եւ վերջապես, երբ շարժունակությունը վերադարձավ նրան, նա ուզում էր Կլիշինին հարվածել, բայց նույնիսկ նրա դեմքին չհասավ, իսկ հետո ցատումնալից նետվեց նրա վրա, բայց դա միեւնույնն էր, թե շյուղով ճեղքես չուզուներ դարպասները, եւ երբ Կլիշինի բռունցքը ճոթոցով բախվեց նրա գլխին, ինչպես եթե թռչող ինքնաթիռը կպչեր նրան թեով, Պալը, կանխագուշակելով այդ պահը, հասցրեց մտածել, որ ավելի լավ է այդպես, քան նորից ու նորից առանց որեւէ հույսի նետվել նրա վրա: Եվ այդժամ Կլիշինը, բառ անգամ չարտասանելով, ոչ մեկին չնայելով, բարձրացրեց, ուսին բարձեց նկարիչ Պալին եւ լուռ, ոչ մեկի վրա չնայելով, նրան տարավ ողջ գյուղակով, նույնիսկ չկաղալով, քայլելով նույնքան թեթեւ ու կենտրոնացած, ինչպես այն անգամ, երբ գնում էր հիվանդանոց, որպեսզի հատեր վեցերորդ մատը, եւ, զցեց նրան միայն տանը, սենյակի անկյունում, ուր դրված էր ծուռ փայտածողերից դրստած

## Գեղարմ Գարուն 2017

նկարակալը, Բեղովագինի անավարտ դեմքով կտավի վրա, որն այլևս պետք չէր ավարտել, որովհետև անհնար էր վաճառել:


Նոյեմբերի վերջին Աննայի մոտ դաշտանը չսկսվեց: Երկու շաբաթվա ընթացքում նա քայլում էր տնով եւ անում էր այն ամենը, ինչ միշտ անում էր, ասես ոչինչ չէր պատահել: Նա իրեն ասում էր՝ ես չեմ փոխվել,- ասում էր իրեն՝ ոչինչ չի փոխվել: Նա ասում էր իրեն՝ ինչո՞ւ նրանք ասացին, որ դա անհնար է,- ասում էր՝ ինչու նա, որեւէ բանի անընդունակ, արեց այն, ինչ ոչ մեկը չկարողացավ անել: Իսկ հետո ասում էր՝ դե ինչ իմանաս՝ ինչու այն կորավ՝ փնտրելով գաղտնի նախագուշացման պատճառները, սնահավատորեն քշելով հույսը, ասես մեն միայն դրա հայտնվելը անհուսություն էր խոստանում եւ անհավատություն մինչեւ գետին: Եվ երկու շաբաթն անցավ ասես խորը ջրի տակ, բթացնելով նրա շարժումների նախկին արագությունը, բայց օժտելով չղջիկի լսողությամբ ոչ այն բանի համար, որ փրկվեր, այլ այն բանի համար, որպեսզի լսեր կյանքի շրշյունը նույնիսկ տերեւի անկման մեջ:

Նա նստել էր մահճակալի վրա եւ, հաստատ հակառակում համոզված, ասում էր իրեն՝ չէր կարող դա պատահել,- նայելով՝ ինչպես է Բեղովագինը հագնում աշխատանքային բաճկոնը, հագնում սապոգները, իսկ հետո հանգիստ, անվրդով նայում է նրան, ձեռքերը գրպանները խոթած, եւ ասում է՝ ես էսօր չեմ գա, ասում է, ինչպես ասում էր միշտ, եթե նա նրա ձայնի հասանելիության սահմաններում էր, իսկ գուցե, այն ժամանակ էլ, երբ նա չէր կարող նրան լսել, հետո շրջվում ու ելնում է. նա նայում էր նրա ետքից, արդեն հաստատ իմանալով, որ հենց այսօր երագում կտեսնի նրան, նստում էր, չնկատելով, ինչպես է երկարում գիշերը, ձեռքերը ծնկների վրա ծալած, լույսը մարելով, մտածում էր կիսամութ լռության մեջ, լուսաբացից երկու ժամ առաջ առանց հանվելու պառկեց, եւ հագիվ աչքերը փակելով, մնջեց:

Եվ մեկեն՝ ոչ մի տեղից, նա գնաց կեղտոտ բաճկոնով ե ծանր սապոգներով, անադմուկ քայլելով երկրի վրայով, անկենդան, անմարմին, իր մեջ ներկլանելով գիշերվա մթին դատարկությունը, ասես սպանած գազանի թարմացրած մորթի, չենթարկվելով ոչ մեկին եւ ոչ մի բանի, կործանելով իր մեջ բոլոր զգացմունքները ընդհուպ մինչեւ կենդանական բնագոյները, անցավ նախապարտեզով ու ընկավ տերեւների կույտի մեջ, որ կուկիկ ժողվել էին երեխաները վառելուց առաջ, եւ նրա երագը ներծծվեց աշնան բույրով, լցվեց չոր սաղարթի բարձր շրշյունով, երբ նա թաղվում էր նրա մեջ ողջ մարմնով, որպեսզի թափտեր, հենց մատները դիպչեին հողին: Իսկ նրանք արդեն վազում էին, փոքրիկ, մուգ, նիհար, արդար, որպեսզի սաղարթը վառեին, որն հավաքում էին ողջ աշնան ընթացքում, սեպտեմբերի սկզբից մինչեւ դեկտեմբերի սկիզբը, եւ նրանց ձեռքերում բռնկվում են կրակները:

Եվ արթնանալով, Աննան մահճակալից վեր թռավ, եւ առանց կոշիկները հագնելու տնից դուրս թռավ, եւ վազում էր գյուղակով նոր օրվա խավարում, բորիկ ոտքերով հագիվ դիպչելով պաղ, սառած հողին, իսկ երբ վերջապես երեսաց դպրոցի շենքը եւ նախապարտեզը դրանից աջ, սեւ ծառերի վրա նա տեսավ տերեւածուխը, որը դանդաղ ելնում էր երկինք: Այդժամ նա կանգ առավ ու կանգնել էր, նայելով սպիտակ ծխին, իսկ հետո ասաց՝ Տե՛ր,- եւ ասաց՝ Տե՛ր,- իսկ հետո ասաց՝ պահպանիր:

Ռուսերենից թարգմանեց  
Վարդան ՖԵՐԵՇԵԹՅԱՆԸ



**Ջիդի ՄԱՋԻԱ**  
/Չինաստան/

**ՍՈՒՐԲ ՎԱՅՐ, ՕՐՀՆՅԱԼ ԵՐԿԻՐ**

Այնտեղ՝ Յինխայ լճի արևելյան մասում,  
Քամին փչում է ու փչում, անցնում են փառատոներ,  
Որոնք կրում են տարվա չորս եղանակների գեղեցկությունը:  
Չեմ կարողանում հասկանալ, թե որտեղ են չվում թռչունները,  
Բայց ցանկացած դիտակետից կարող եմ տեսնել գյուղակներ՝  
Լճի շուրջն ընկած, ասես համաստեղություններ՝ խաղատախտակի վրա:  
Ես նաև տեսնում եմ երկու ձյունաճերմակ աղավնիներ՝  
Կարծես երկու սիրահարված հրեշտակ,  
Որոնք ժամանակ առ ժամանակ սուզվում են ժամանակի խորքերը:  
Այդ վայրում երկինքը յուրօրինակ է արարված՝  
Շերտագծված փետրագրչով, ինչպես նկարագարդ խեցեղեն,  
մեզ շատ մոտ շինծու քայլողների պատկերներ ասես,-  
Այս տոնական էկրանն արդեն դարձել է հազարամյա ծես:  
Ովքե՞ր են տերերն այստեղ:  
Այս կտոր հողում  
Վայրի յակերի աչքերում թրթռող արյունն  
Անաչառ շողացող արևի  
Համն է ճաշակում:  
Որքան հանգիստ են շողում այստեղ լուսինն ու աստղերը.  
Լեզենդն ասում է՝ նրանք այնքան են մաքրվել,  
Որ դարձել են բյուրեղի հատիկներ:  
Ահա այն արբազան վայրը, այն օրինյալ հողը,  
Որ ընտրել է Մարդ արարածը:  
Այս վայրում լույսով ողողված գետի հորձանուտը  
Գրում է հավիտենական անունները նրանց,  
Ովքեր վերածնվել են այստեղ:  
Մա հաստատուն ճակատագիր չէ,  
Այլ լույսից ծնված օրհներգ:  
Անհամար ցեղեր են բնակվում այստեղ՝  
Ծնունդն ու մահը գրանցելով առասպելներում:  
Այս բարձրավանդակում ու նրա անցումային գոտում

## Գեղարմ Գարուն 2017

Կյանքը շարունակելու համար օրհներգերը պետք է անցնեն  
Ոչնչության խրամի վրայով, որպեսզի հասնեն պտղաբերության:  
Այս հողում ցորենի բույրը փչում է հեռվից,  
Ու տարածվում է կրակի վրա խորոված կարտոֆիլի ջերմությունը:  
Այստեղ երիտասարդներն ու ծաղիկները ծննդյան օրից մինչ մահ երգում են,  
Իսկ հետո մահից մինչև ծնունդ, ու երգն այդ աշխարհի ձայներից  
ամենահուզիչն է:

Ով գիտի՝ քանի սիրային պատմություններ են կրում իրենց մեջ՝  
Ներծծվելով մինչև հոգին ու ոսկրածուծը:  
Այս հողում գուցե քիչ էին պատերազմները,  
Բայց անհամեմատելի է  
Դարերի կողմից երկրին պարգևած խաղաղության հետ:  
Հարգված սովորույթներն ու հարուստ պատմությունը տալիս են նրանց  
Ճիշտ ապրելու գիտության պաշար:  
Այս հողում՝ Յինխայ լճի արևելյան մասում,  
Ինչ-որ գտել ես այսքան ժամանակ  
Կարող է մի օր դառնալ ոչ այլ ինչ, քան հիշողություն:  
Այնուամենայնիվ, այս հողում կյանքն առավել լավ է,  
Քանի որ մոլորակում այս մինչև այսօր  
Մարդասպանությունը դեռ չի վերացել:  
Այս հողում՝ Յինխայ լճի արևելյան մասում,  
Մարդկության դասը ոսկուց թանկարժեք է,  
Այն մեզ տանում է պարզ մի ճշմարտության՝  
Հավիտենական խաղաղություն ու անդորր կարող ենք ունենալ միայն  
Շնորհիվ հանդուրժողականության ու հավասարության,  
Շնորհիվ պատվավոր կյանքի.  
Այլ ճանապարհ չի կարող լինել:

### ՄԵՐ ՀԱՅՐԸ

#### *Ձոն Նելսոն Մանդելային*

Կարոտելով նրան՝ բարձրացնում են գլուխս:  
Հայացքս հառում եմ անծայր աստղազարդ երկնքին, ու  
Այդ հավերժական խավարից բացակայող արձագանքը  
Ստիպում է անհանգստությանը գողանալ ինձ.  
Քամին անգամ չի շրշում,  
Միայն հեռավոր ամպերի միջից լավում է ծովի համաչափ շունչը,  
Որ առկայծում է տխուր լույսերի հետ:  
Թերևս կարճատև ընդմիջումից հետո, անցողիկ մի պահ,  
Երբ հագիվ էի ուշադրությունս կենտրոնացրել,  
Տեսա նրա ոտքերը երկինք տանող խաչողիներին:  
Կարծես նա շրջվեց մի պահ ու ձեռքը թափահարեց մեզ,  
Ժպիտ հայտնվեց նրա դեմքին,

## Գեղարմ Գարուն 2017

Ժպիտ, որ պատկանում էր միայն նրան,  
Բայց նրա մարմինը շրջվեց  
Դեպի հոգիների հանգստյան վայրը:  
Այժմ Յգունու գյուղը պատրաստվում էր ընդունել տուն վերադարձող  
Նելսոն Մանդելային՝ մեր հորը:  
Երբ առաջին անգամ նա լքեց այդ վայրը, սևամորթ մի երեխա էր:  
Ու ոսկեշող արևի տակ սկսվեց նրա երկար ու հապճեպ ճամփորդությունը:  
Ու հենց այդ մանուկն էլ վերադարձավ արդեն հասակ առած՝  
Շողացող աչքերով, հայացքով դեպի անհայտ ապագա:  
Մանկությունը նրա շատ կարճ էր տևել՝ հիշողության մեջ մի քանի բեկոր,  
Հիշում է միայն, որ ժամերով քայլել էր ոտաբոբիկ բաց երկնքի տակ,  
Ու արևի շողը նրա գլխին պսակ էր դարձել:  
Հսկայական տարածքից մի աստղ ընկավ ու  
Նրա այցը դարձավ գազաթնակետը օրհներգի:  
Գուցեև մոռացվել է անմեղությունը, ու ձեռք է բերվել վստահություն.  
Ուրեմն նախահայրերին կարելի է մատուցել փառաբանություն, որպես գատիկ:  
Բոլոր ցանկությունները կպարփակվեն գիշերային խավարի մեջ,  
Ու մինչ կկարողանան անցնել կյանքի ու մահվան սահմանից այն կողմ,  
Ճակատագիրը նրան ձեռնադրեց այստեղ,  
Ու այսուհետ նա պետք է կապեր իր սեփական կյանքը  
Միլիոնավոր սևամորթների կյանքերի հետ:  
Նա իր համար երբեք չի ապրել, պատրաստ էր միշտ  
Զոհաբերվել հանուն ռասայի ազատության:  
Զեռնադրված լինելով այստեղ՝ նա ստիպված էր  
Ընտրել մահը, որովհետև գոյատևումը մի պատահական հնարավորություն է,  
Ընտրել բաժանումը, որովհետև միասին լինելը պատկանում էր անցյալին,  
Ընտրել աղյուսե պատ, որովհետև ծիտը կարող է թռչել միայն երազում,  
Ընտրել աղմուկը, որովհետև լռությունը սպանում են փողոցներում,  
Ընտրել ձեռնաշղթաները, որովհետև այլ բազուկներ կարիք ունեն ազատ լինելու,  
Ընտրել գերություն, որովհետև օդի կարիք ունեցող շատերի համար  
Այսպիսի ընտրությունը կնշանակեր հետդարձի ճանապարհ այլևս չկա.  
Այս ընտրությունը, որ նա ստիպված էր կատարել, նրանից պահանջել է  
Ոչ թե մեկ օր կամ մեկ տարի, այլ երկար ու ձիգ տարվա եղանակներ:  
Նրա մտքով անգամ չէր անցել,  
Որ իրոք կգա այն օրը, որ նա երազել էր:  
Ո՞վ կպատկերացներ, որ տոհմի առաջնորդի որդին  
Կընտրեր այդ ճանապարհը, այդ վայրից, այդ օրը:  
Նա կլիներ այն մեկը, որ կփոխեր 20-րդ դարի պատմությունը:  
Այո, նա ամուր կանգնեց այդ ճանապարհին,  
Չնայած բանտին, խոշտանգումներին ու վերահաս մահվան՝  
Նա հետ չկանգնեց իր ճանապարհից, նա միշտ լսում էր  
Օվկիանոսի փրփրաբաշ ալիքների ձայնը բանտի պատուհանից այն կողմ  
Եվ շարունակում երազել ազատության ու հավասարության մասին,  
Որ նա փնտրում էր մարդկության համար:

## Գեղարմ Գարուն 2017

Ո՞վ կպատկերացներ: Սևամորթ մի գանգրահեր տղա  
Կհեռանար այդ վայրից՝ ունենալով լոկ մի նպատակ,  
Որը պետք է համախմբեր բոլորին նրա շուրջ  
Ու բացեր ծանր դռները ազատության:  
Տասը կյանքից իննը կորցրեց, բացի մեկից՝ երբեք չշեղվել իր նպատակից:  
Ո՞վ կիմանար, որ սևամորթ ռասայի այս սիրված որդին,  
Ով, իհարկե, մենակ չէր կարող պայքարել մի ամբողջ ռասայի համար,  
Կօզներ մեզ հասկանալ սիրո ու ներման ճշմարտությունը,  
Ուրիշ ոչինչ չէր կարող հալեցնել ատելության սառույցը:  
Նա, միայն նա կարող էր տեսնել աքսորավայրից՝  
Ինչպես են տանում իր ժողովրդին ու օգտագործում որպես ստրուկներ  
Ուրիշ ռասայի պետությունները՝ ընդունելով իրենց սեփական  
գերազանցությունը:  
Նա, միայն նա՝ ձևավորված լինելով մման պայմաններում,  
Կարող էր իր մեղմ ու հանգիստ ձայնով մարդկությանն ասել.  
- Ներողամիտ եղեք ատելության հանդեպ:  
Ես բարձրացնում եմ իմ գլուխը, եւ իմ աչքերը ողողված են արցունքներով:  
Դեպի աշխարհի որ կողմն էլ սևեռում եմ հայացքն իմ,  
Ես գիտեմ, որ նա՝ մեր հայրը, շուտով կիջնի երկիր  
Ու հավիտյան կհանգչի Յգունու գյուղի հողում:  
Նա ինձ տալիս է հավատալու մի լավ պատճառ - այս պահից,  
Երկրի տարբեր անկյուններից մարդիկ կայցելեն այդ գյուղը,  
Ու այն կդառնա մարդկության խղճի մի սրբավայր:

Թարգմանություններն անգլերեն տարբերակից՝  
Քրիստինե ԲԱԼԱՅԱՆԻ



**Ինգերորգ ԲԱԽՄԱՆ**  
**/Ավստրիա/**

**ՄԱՐԴԱՍՊԱՆՆԵՐԻ**  
**ԵՎ**  
**ԳԺԵՐԻ ՄԵՉ**  
**(հատված վիպակից)**



Օղի մեջ ծուխն ավելի էր խտացել, և մենք հագիվ կարողացանք մեր սեղանը տեսնել: Երբ ծխի միջով ավելի մոտ էինք և դուրս էինք եկել մոլորվածությունից, Մալերի կողքին նստած մի մարդ տեսա, որին ես չէի ճանաչում: Երկուսով լռել էին, իսկ մնացածները խոսում էին: Ես ու Ֆրիդլին կրկին տեղավորվեցինք, և Բերթոնը մի անորոշ հայացք նետեց: Անձանոթը վեր կացավ և ձեռքը մեկնեց մեզ: Նա քթի տակ մրթմրթաց իր անունը: Միրալի-ուքյան նշույլ անգամ չկար նրա մեջ, բնավ անմիջական չէր: Հայացքը սառն էր ու մեռած, և ես հարցական նայեցի Մալերին, որը պիտի որ ճանաչեր նրան: Նա շատ բարձրահասակ էր, երեսունին մոտ, չնայած առաջին հայացքից տարիքով ավելի մեծի տպավորություն էր թողնում: Նա վատ չէր հագնված, բայց այնպիսի տեսք ուներ, ասես որևէ մեկից իր կոստյումը նվեր էր ստացել, եւ որն իր չափսերին համեմատ դեռ մի քիչ էլ մեծ էր: Որոշ ժամանակ անցավ, մինչև որ կարողացա գրույցից ինչ-որ բան հասկանալ, և որին չէին մասնակցում ոչ Մալերը և ոչ էլ անձանոթը:

Հաղերերը դիմեց Հութերին.  
-Բայց, իհարկե, դուք ճանաչում եք նաեւ գեներալ Յվիրլին:- Հութերը ուրախացած պատասխանեց.  
-Իհարկե, իհարկե: Գ-րացից:  
-Շատ գրագետ մարդ էր: Հունարենին փայլուն տիրապետողներից մեկը, նաեւ՝ իմ հին լավագույն ընկերներից:  
Հիմա պետք էր վախենալ, որ Հաղերերը հունարենի և լատիներենի մեր՝ իմ եւ Ֆրիդլիի, թույլ իմացությունն ի ցույց կդնի, չնայած, որ ինքն էր մեզ խանգարել մեր գիտելիքները ժամանակին ձեռք բերելու մեջ: Բայց ես տրամադրություն չունեի Հաղերերի նախընտրած թեմաներից որեւէ մեկի վրա կանգ առնելու կամ էլ նրան մարտահրավեր նետելու, այլ կռա-

## Գեղարմ Գարուն 2017

ցա դեպի Մալերը, կարծես ոչինչ չէի լսում: Մալերն անձանոթին ինչ-որ բան էր ասում կամաց, և վերջինս պատասխանում էր բարձր ու առաջ նայելով: Ամեն մի հարցին նա պատասխանում էր մի նախադասությամբ: Ես համարեցի նրան Մալերի հիվանդներից մեկը, համենայդեպս՝ ընկերներից, որին նա բուժում էր: Մալերը միշտ ճանաչում է բոլոր հնարավոր անհատներին ու անում էր ընկերություններ, որոնց մասին մենք ոչինչ չէինք իմանում: Մի ձեռքում մարդը պահում էր ծխախոտի տուփը, իսկ մյուսով ծխում էր: Այդպիսին նրան երբեք չէի տեսել: Նա ծխում էր մեխանիկորեն, ներծծում գլանակի միանգամայն հավասարաչափ մասերը, ասես դա միակ բանն էր, որ կարողանում էր անել: Ծխախոտից մնացել էր մի փոքրիկ կտոր, որով իրեն վառեց՝ առանց դեմքը ծամածռելու, ապա դրանից կպցրեց հաջորդ գլանակը եւ կորավ ծխի մեջ:

Հանկարծ նա կանգ առավ ծխի մեջ, ծխախոտը դողդողալով պահեց իր հսկայական, տզեղ ու կարմրած ձեռքերի մեջ և գլուխը կախեց: Չնայած դռները փակ էին, միջանցքի այս կողմից հասնում էր մեծ սրահի աղմկոտ երաժշտությունը: Ես լսում էի դա, ինչպես կլսեի «In der Heimat, in der Heimat, da gibt's ein Wiedersehen»-«Հայրենիքում, հայրենիքում, այնտեղ կտեսնվենք»:

Նա արագ ու ջղային ներս քաշեց ծուխը և բարձրաձայն, ինչպես պատասխանում էր Մալերին, դիմեց մեզ. «Նրանք դեռ կշարունակեն վերադառնալ տուն: Նրանք դեռ բոլորը չեն հետ եկել»:

Հաղերերը ծիծաղեց ու ասաց. «Ես չգիտեմ՝ ինչպես կարող եմ Ձեզ հասկանալ, բայց անհավատալի է. ինչպե՞ս կարող էր իմ հարգարժան ընկերը՝ գնդապետ Վինկլերը թույլ տալ այսպես խանգարել ու իր մարդկանց չհանգստացնել: Եթե այսպես շարունակվի, ստիպված կլինենք մեկ այլ տեղ փնտրել»:

Բերթոնը մեջ ընկավ, ասելով, որ խոսել է տիրոջ հետ: Իբրև դա բացառություն էր՝ հանուն հոբելյանի ու ճակատային ընկերների մեծ հանդիպման: Ավելի մանրամասն նա չգիտեր...:

Հաղերերն ասաց, որ ինքը ևս ոչինչ մանրամասն չգիտի, սակայն իր հարգարժան ընկերն ու նախկին գործընկերը..

Իմ ուշադրությունից վրիպեց, թե անձանոթը, որը շարունակում էր գրուցել, երբ Հաղերերն ու Բերթոնը նրան լռեցնում էին, մեր հասցեին ինչ ասաց: Միայն Ֆրիդլին կարող էր լսած լինել: Եվ ինձ պարզ չէր, ինչու՞ նա հանկարծակի ասաց, թե ինքն, իբր, մարդասպան է:

«...Ես քսան տարեկան չեմ, դա ես գիտեմ»,- ասաց նա այնպիսի տոնով, ասես առաջին անգամը չէր ձեռնամուխ լինում իր պատմությունը ներկայացնելուն, կարծես ունկնդիրների կարիք չունի և համաձայն է ցանկացած լսողի հետ:- Ես գիտեի, որ ստեղծված եմ մարդասպան լինելու, ինչպես շատերը հերոս կամ սուրբ, կամ էլ միջին մարդիկ: Եթե դուք այդպես եք ուզում, ուրեմն իմացեք՝ սպանելու համար ինձ ոչինչ չէր խանգարում, ամեն ինչ ես ծառայեցնում էի այդ նպատակին՝ սպանել: Ինձ միայն զոհ էր պետք: Այդ ժամանակ ես գիշերները վազվզում էի այստեղ»:- Վերջին բառից հետո ծխի միջով նա առաջ պարզեց ձեռքը և Ֆրիդլին արագ հետ գնաց, որպեսզի չկայներ իրեն: -«Այստեղ ես վազվզում էի նրբանցքներով, որտեղ բուրում էին շագանակի ծաղիկները, այստեղ օդը միշտ լեցուն էր նրանց բուրմունքով՝ լայն փողոցների ու նրբանցքների վրա: Միրոսս պոկվում էր տեղից, թոքերս աշխատում էին ինչպես վայրի թռչունների՝ գոռով կպցրած թևեր, շունչս դուրս էր գալիս որսվող գայլի շունչի պես: Ես դեռևս չգիտեի, ինչպես սպանել ես ում պետք էր սպանել: Ես ունեի միայն իմ ձեռքերը, բայց արդյո՞ք դրանք կգոռեին՝ որևէ վիզ սեղմելու: Այդ ժամանակ ես շատ թույլ էի ու

## Գեղարմ Գարուն 2017

վատ էի սնվում: Ես ոչ մեկին չէի ճանաչում, որին պետք է ատեի, միայնակ էի այս քաղաքում: Եվ այսպես ես ոչ մի գոհ չգտա և այդ մտքից գիշերները գժվում էի: Դա միշտ գիշերն էր լինում, ես ստիպված էի լինում վեր կենալ, իջնել ցած, կանգնել քամոտ, մութ, դատարկ փողոցների անկյուններում ու սպասել: Այդ ժամանակ փողոցները դատարկ էին, ոչ ոք չէր մոտենում, ոչ մեկը չէր դիմում ինձ, և ես սպասում էի, մինչև որ սկսում էի դողացնել, թուլությունից նվնվալ, մինչև վրա էր հասնում խելացնորությունը, եւ դա կարճ էր տևում: Հետո ինձ տարան ոստիկանություն: Երբ ես հրացանը ձեռքս առա, իմացա, որ կորած եմ: Սի անգամ պիտի դա անեի: Ես ինձ հանձնեցի հրացանի փողին, այն լիցքավորեցի փամփուշներով, որոնք, համոզված էի, այնքան հեշտ հնարեցի, ինչպես վառողը: Վարժություններ անելիս ես կրակեցի, բայց վրիպեցի, եւ դա ոչ թե նրա համար, որ նշան բռնել չէի կարող, այլ գիտեի, որ այդ Սև կետը՝ նշանացույցը, ոչ մի անգամ չէր համար չէ. այն միայն տեղ էր ցույց տալիս, մարգումի նշանակետ էր ու մահաբեր չէր: Դա ինձ ջղայնացնում էր, դա միայն մի հրապուրիչ նմանություն էր և ոչ իրականություն: Ես վստահ կրակեցի նշանակետին ու վրիպեցի: Այդ վարժություններն անելիս քրտնում էի սարսափելի, որից հետո դեմքս կապտում էր, փսխում էի և ստիպված պառկում: Ես կամ խելագար էի կամ մարդասպան: Դա ստույգ գիտեի և այդ մասին խոսում էի մնացածների հետ իմ վերջին դիմադրությամբ, որպեսզի նրանք ինձ պաշտպանեն, որպեսզի նրանք զգուշանային ինձանից և իմանային, թե ում հետ պետք է գործ ունենան: Բայց գյուղացի ուսանողները, արհեստավորները և ծառայողները, որոնք գտնվում էին իմ աշխատասենյակում, կարևորություն չէին տալիս դրան: Նրանք կարեկցում էին ինձ կամ էլ ծաղրում էին, բայց ինձ մարդասպանի տեղ չէին դնում: Կամ էլ իրոք դնում էին: Ես չգիտեմ: Փոստային մի ծառայող, մի խորամանկ մարդ, որը շատ էր կինո գնում և շատ ընթերցում, ինձ ասում էր «Jack the Ripper» /19-րդ դարի անգլիացի մարդասպան, ով գազանաբար սպանել է վեց մարմնավաճառուհիների մեկտեղ: Իրավաբանները այդ անունը տալիս են այն մարդուն, ով հայտարարում է իր մարդասպան լինելու մասին, բայց գործերը մնում են մութ/»: Բայց ես հավատում էի, նա հոգու խորքում համամիտ չէր դրան»:

Անձանոթը հանգրեց ծխախոտը, արագ ցած նայեց, ապա բարձրացրեց հայացքը: Ես զգում էի նրա սառը երկար հայացքն ինձ ուղղված եւ չգիտեի՝ ինչու էի ցանկանում այդ հայացքը պահել: Ես այն հանդուժում էի, բայց այն ավելի երկար էր տևում, քան այն հայացքը, որ փոխանակում են բարեկամներն ու թշնամիները: Դա շարունակվեց այնքան, մինչև ես այլևս չէի մտածում կամ որեւէ բան ասում: Այնքան դատարկ էր ամեն ինչ, որ ես սարսափից վեր թռա, երբ կրկին լսեցի նրա բարձր ու համաչափ ձայնը:

-Մենք եկանք Իտալա: Դա ամենամեծ սպանդանոցն էր, որ կարող եք պատկերացնել: Այդտեղ մարմինն այնպես են տալիս ու սպանում, որ մարդասպան լինելը մեծ հաճույք էր թվում: Բայց դա այդպես չէր, չնայած ես միանգամայն վստահ էի, որ մարդասպան եմ և նույնիսկ կես տարի բացահայտ շրջել էի հրացանով: Երբ ես եկա Մոնտե Կասինո, կենդանության ոչ մի նշույլ չկար ինձ վրա: Ես շնչում էի դիակների հոտը, բունկերների և հրդեհների ծուխը՝ ինչպես լեռնային ամենաթարմ օդը: Ես չէի զգում ուրիշների վախը: Իմ առաջին սպանությամբ ես կկարողանայի հարսանիք անել: Այնպես որ, ինչ ուրիշների համար պատերազմի թատերաբեմ էր, ինձ համար սպանությունների բեմահարթակ էր: Բայց ես ուզում եմ ձեզ ասել, թե ինչ եղավ հետո: Ես չկրակեցի: Առաջին անգամ ես լարել էի, երբ մի խումբ լեհեր էին մեր առաջ: Այդտեղ, իհարկե, ընկած էին տարբեր երկրներից եկած զորամասեր: Եվ ես ինձ ասացի. «Ոչ մի լեհ»: Ես չէի ընդու-

## Գեղարմ Գարուն 2017

նում խոսակցական լեզվի մեջ այդ մականունները... ինչպես, օրինակ՝ Polacken, Amis, Schwarze/խոսակցական ձեւեր՝ լեհեր, ամերիկացիներ, սեւեր՝ նեգրեր/։ Այսինքն՝ ոչ մի ամերիկացի, ոչ մի լեհ։ Այո, ես մի սովորական մարդասպան էի, ես պատրվակներ չէի փնտրում և իմ լեզուն հնչում էր պարզ, ուրիշների լեզվի նման ոչ գունեղ. «Ձնջել, ոչնչացնել, դուրս քշել»։ Նման բառերն ինձ զգվանք էին պատճառում, ես դրանք պարզապես չէի էլ արտասանում։ Ես ինձ ասում էի. «Քո լեզուն պարզ է, դու պետք է դա իմանաս ու ցանկանաս մարդ սպանել»։ Այո, ես դա ուզում էի եւ արդեն մի տարի է, ես վառվում էի սպանելու մոլուցքով։ Մեկի՛ն։ Բայց Դուք հասկացեք, ես չկարողացա կրակել, իսկ արդյո՞ք կկարողանամ Չեզ ամեն ինչ բացատրել, չգիտեմ։ Ուրիշները դա հեշտ էին անում, նրանք կատարում էին իրենց առաջադրանքները եւ հիմնականում չէին իմանում՝ արդյո՞ք խփեցին եւ քանի՞ հոգու խփեցին, մեկի՞ն, թե՛ մի քանիսին։ Նրանց դա ամենեւին չէր հետաքրքրում։ Այդ մարդիկ ընդհանրապես մարդասպաններ չէին։ Նրանք ցանկանում էին ողջ մնալ, շքանշաններ վաստակել ու դժվար թե մտածեին ընտանիքի, հաղթանակի կամ էլ հայրենիքի մասին։ Այո, նրանք թակարդի մեջ էին։ Բայց ես անընդհատ մտածում էի սպանության մասին ու չէի կրակում։ Սի շաբաթ անց, երբ ճակատամարտը թեժացել էր, երբ դաշնային զորքերը չէին երեւում, երբ միայն ինքնաթիռներ էին փորձում մեզ ոչնչացնել, եւ երբ դեռ երկար ժամանակ մարտը շարունակվում էր, ինձ հետ կանչե՞ծջՖ Հռոմ, եւ ես կանգնեցի ռազմական դատարանի առաջ։ Ամեն ինչ անձամբ պատմեցի, բայց չցանկացան հասկանալ եւ ինձ բանտ ուղարկեցին։ Ինձ դատապարտեցին թշնամուց վախենալու և մարտական ուժերի քայքայման մեջ։ Կային նաև մի քանի այլ կետեր, որոնք ես արդեն չեմ էլ հիշում։ Հետո հանկարծ ինձ կրկին դուրս հանեցին և բերեցին հյուսիս՝ մի հոգեբուժարան։ Ըստ իս, այդտեղ ինձ բուժեցին, եւ կես տարի անց եկա մի նոր գունդ, որովհետև հնից ոչինչ չէր մնացել։ Ովքեր մնացել էին՝ գնացել էին արեւելք, դեպի թիկունքային մարտեր»։

Հուրերը, որը տանել չէր կարողանում երկար ճառելը, եւ հաճույքով մեկ ուրիշին կտար պատմություններ ու երգիծական զրույցներ անելու իրավունքը, կտրեց քաղցրահացը՝ ասելով.

-Դե, պարոն, ստացվե՞ց Ձեր կրակելը։

Տղամարդը նրան չնայեց և փոխանակ մի անգամ ևս խմելու, ինչպես բոլոր մնացածներն այդ պահին, հրեց բաժակը դեպի սեղանի կենտրոն։ Նա նայեց ինձ, հետո Մալե-րին, ապա նորից ինձ ու այս անգամ ես հայացքս հեռացրի։

-Ոչ,- վերջապես նա ասաց,- ես, ճիշտ է, բուժվեցի, եւ դրա համար չստացվեց։ Դուք դա կհասկանաք, պարոնայք։ Մեկ ամիս հետո ես կրկին ձերբակալվեցի, եւ մինչև պատերազմի վերջը գտնվում էի ճամբարում։ Հասկացեք, ես չէի կարող կրակել։ Եթե ես դա չկարողացա անել մեկ մարդու վրա, ինչքանո՞վ էր հնարավոր դա անել ռուսների վրա... Ընդհանրապես ես ոչինչ չէի պատկերացնում։ Բայց դա պետք էր պատկերացնել։

-Ինչ կոմիկ տիպ է,- կամաց փսփսաց Բերթոնին Հուրերին։ Ես նրա ասածը լսեցի ու վախեցա, որ անձանոթը ես կլսի։ Հաղերերը ձեռքով արեց ավագ մատուցողին եւ մեկնեց հաշիվը։

Մեծ դահլիճից գալիս էին տղամարդկանց երգչախմբի ուժեղացող ձայները։ Այն նման էր բեմից հեռացված եւ կուլիսների հետեւում երգող օպերային երգչախմբի։ Նրանք երգում էին. «Հայրենիք, քո աստղերը...»։

Անձանոթը լսում էր գլուխը կախ։ Ապա նա ասաց. «Կարծես երեկ էր»։ Հետո նա բարի գիշեր մաղթեց, վեր կացավ ու հսկայական քայլերն ուղղեց դեպի դուռը։ Մալերը նույնպես կանգնեց և ձայնը բարձրացնելով՝ ասաց. «Լսեք Դուք»։ Դա նրա սովորա-

## Գեղարմ Գարուն 2017

կան արտահայտություններից էր, բայց ես գիտեի, որ նա այս անգամ իրոք ցանկանում էր բոլորին դա լսելի դարձնել: Այնուամենայնիվ, ես նրան առաջին անգամ տեսա այդքան անվստահ: Նա նայեց ինձ ու Ֆրիդրիխին, ասես խորհուրդ հարցնելու: Մենք նայում էինք նրան, բայց մեր հայացքներում խորհուրդ չկար:

Մենք կորցրել էինք ժամանակի զգացողությունը, Մալերը՝ խոժոռ, մտքերի մեջ ճնշված այս ու այն կողմ էր գնում: Հանկարծ նա պտտվեց դեպի դուռը, թափով բացեց, եւ մենք էլ հետևեցինք նրան: Որովհետև երզն ու երաժշտությունը հանկարծ ընդհատվեցին: Միայն մի քանի ձայներ էին լսվում՝ մեկը մյուսից անջատ: Եվ, միաժամանակ, միջանցքում անցուդարձ կար, որը մատնում էր որևէ դժբախտություն կամ վեճ:

Միջանցքում մենք բախվեցինք մի քանի տղամարդկանց, որոնք գոռում էին իրար վրա, մնացածները լռում էին հուզված: Անձանոթը ոչ մի տեղ չէր երեսում: Ինչ որ մեկը համառորեն համոզում էր Հադերերին, հավանաբար Մեծն գերագույնը՝ գույնը զցած, կակազելով: Ես լսեցի կցկտուր նախադասություններ. «անհասկանալի պրովակացիա... խնդրում եմ ձեզ... ճակատային հին ընկերներ»։ Ես գոռացի Մալերին՝ ինձ հետևել, վազեցի դեպի սանդուղքը, մի քանի ցատկով իջա մութ, խոնավ եւ քարե աստիճաններից, որոնք կարծես բովանցքից բարձրանալով՝ սուզվում էին գիշերվա մեջ, դեպի դուրս: Մառանից ոչ հեռու ընկած էր նա: Ես կռացա նրա վրա: Նա արնաքամ էր լինում վերքերից: Մալերը ծնկի եկավ իմ կողքին: Հեռացրեց ձեռքս մարդու կրծքից ու հասկացրեց, որ նա արդեն մեռած է:

Գիշերը արձագանքում էր իմ մեջ, ես զառանցում էի:

Առավոտյան, երբ անխռով տուն հասա, մնացել էի կանգնած իմ սենյակում՝ առանց որևէ շարժում անելու, առանց անկողինս գտնելու, գունատ ու ցրված, ափիս մեջ արյան հետքեր: Ես չաբարափեցի: Ինձ թվաց՝ այդ արյան միջոցով մի պաշտպանություն ստացա, բայց ոչ թե անխոցելի լինելու համար, այլ որպեսզի իմ կասկածի, իմ վրիժառության, իմ զայրության արտաշնչումը չկարողանա դուրս մղվել ինձանից: Ոչ՝ հիմա, ոչ՝ երբեք: Եվ թող դրանք, այդ մահացու մտքերը, որոնք զարթնել էին իմ մեջ, ինձ կոչնչացնեն: Երանի դրանք երբեւէ ոչ մեկին չսպանեն, ինչպես այդ մարդասպանը չսպանեց, և միայն մեկ գոհ կար՝ ոչնչի համար: Բայց ո՞վ գիտե դա: Ո՞վ կհամարձակվի դա ասել:

Թարգմանությունը գերմաներենից՝  
Սիրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

**Իտալո ԿԱԼՎԻՆՈ**  
**/Իտալիա/**  
**(1923-1985)**

**ԹԵԹԵՎՈՒԹՅՈՒՆԸ**



Պատկերների եւ սյուժետային զարգացումների անսպասելիության, կոմպոզիցիայի յուրահատկության, առիրական եւ փոխաբերական պլաններն ուղղված խաղի հանդեպ հակվածության համար էլիո Վիտորինոն Իտալո Կալվինոյին կոչել է «Գրչի սկյուռ»: Այնուհետեւ «Երկատված վիկոնտը» վեպի հայտնությունից հետո (1952թ.), ուր գործում են, ընդհուպ մինչեւ վերամիավորումը, թնդանոթի արկով բզկտված հերոսի առաքինի եւ չար կեսերը, նրան կատակով շնորհեցին «Երկատված գրող» տիտղոսը: Երկատված՝ երկակի: Այն պատճառով, որ ձգտում էր երկու, թվում էր, թե՛ այնքան տարբեր, բայց նրա ստեղծագործություններում այնքան ներդաշնորեն միաձուլվող «օվիդիոսական» եւ «լուկրեցիոսական» ակունքներին, իր երեւակայության ծնունդները (նա կարող էր, օրինակ, հերոսին բնակեցնել ծառի վրա, մարդեղացնել տիեզերաբանական պրոցեսները), նա ենթարկեցնում էր խստորեն հաշվարկված ռացիոնալ պլանի, ինչպես դա երբեմն անում էին սյուրռեալիստները, ամենացնորական ֆանտազիաները պարփակելով հստակ կոմպոզիցիոն ձեւի մեջ:

Լինելով Ռայմոն Կենոյի հիմնադրած «Պոտենցիալ Գրականության Արվեստանոցի», այսպես կոչված՝ «Ուլիպո» խմբավորման անդամներից մեկը, Կալվինոն միշտ նորանոր ուղիներ էր փնտրում իր սիմետրիկ սյուժետային կառուցվածքներից եւ պատկեր-հակադրություններից, որ բնորոշ էին նրա վաղ շրջանին, անցնելով «մակրոտեքստերի», որոնք բաղկացած էին աստիճանակարգաբերված «միկրոտեքստերից» (հայտնի գրականագետ Մ. Կորտիի բնորոշումը): Այդպիսիք են՝ «Անտեսանելի քաղաքները» (1972թ.) եւ «Պալոմարը» (1983թ.): Իր իսկ հռչակած «հիպերվեպերը»՝ պոտենցիալ բազմազա-

## Գեղարմ Գարուն 2017

նության մոդելները, որ զուգակցում են կառուցվածքի տրվածությունը պատումային հնարավորությունների անվերջության գաղափարին: Դրանց ամենավառ օրինակներից են՝ «Խաչասերվող ճակատագրերի դրակը» (1970թ.) եւ «Եթե մի անգամ ձմեռվա գիշերով անցորդը» գլուխգործոցը (1970թ.), որտեղ իր հերոսն է դարձնում նաեւ ընթերցողին եւ բովանդակում է «տասը վեպ վեպի մեջ», ուր Կալվինոն իրեն դրսեւորում է որպես աննման ռճաբան, բազմիցս փոխելով պատումային ռեգիստր-

ները:

Վերջին բանը, որ գրել է, այսպես կոչված՝ «Ամերիկյան դասախոսություններն են» (1988թ), վեց մտահղացված դասախոսություններից հինգը՝ Թեթելությունը, Արագությունը, Ճշգրտությունը, Ակնառությունը, Բազմաքանակությունը /եւ վեցերորդը՝ Կապակցությունը, որն այդպես էլ չհասցրեց ոչ գրել, եւ ոչ էլ կարդալ/: Ահա հենց դրանցից առաջինն էլ ներկայացնում ենք ընթերցողին:

Թարգմանիչ



Ծանրության վերացումը միշտ եղել է իմ աշխատանքի մեթոդի անկապտելի մասը: Երբեմն ես ձգտում էի թեթևացնել մարդկանց, երբեմն՝ երկնային մարմինները, երբեմն՝ քաղաքները, բայց առաջին հերթին ես ձգտում էի թեթևացնել պատումի կառուցվածքն ու լեզուն: Այս դասախոսության մեջ կփորձեմ բացատրել, թե ինչու են ես համարում թեթևությունը արժեք, այլ ոչ թե արատ, օրինակներ բերել անցյալի ստեղծագործություններից, որոնք ես համարում եմ թեթևության նմուշներ, ինչպես նաեւ ցույց տալ, թե ինչ տեղ են ես հատկացնում այդ արժեքին ներկայումս եւ ինչպիսին են ես տեսնում դրա տեղն ապագայում:

Ես կսկսեմ վերջին կետից: Երբ ես նոր էի սկսել գրել, յուրաքանչյուր երիտասարդ գրողի համար կատեգորիկ իմպերատիվ էր սեփական ժամանակը նկարագրելը: Բարի մտադրություններով լի՝ ես ջանում էի նույնացնել ինձ անողորմ մղումներին, որոնք ղեկավարում էին իմ դարի իրադարձությունները, ինչպես ընդհանրական, այնպես եւ անհատական մակարդակով: Ես ջանում էի հավասարակշռություն գտնել խարդա-

խության, որն ինձ դրդում էր գրելու, եւ աշխարհի մոլեգնության միջուկ՝ երբեմն դրամատիկ, իսկ երբեմն՝ գրոտեսկային:

Շատ շուտով ես գիտակցեցի, որ կենաց ճշմարտության /որը պիտի ինձ նյութ ծառայեր/ եւ սրընթաց թեթև ոճի /որը ես փորձում էի մշակել/ միջուկ վիթխարի անդունդ է ընկած, որն հաղթահարելը ինձանից ավելի ու ավելի մեծ աշխատանք էր պահանջում:

Յնարավոր է, որ ես միայն այդժամ սկսեցի նկատել աշխարհում ժանրությունն ու իներցիան՝ հատկանիշներ, որոնք ակնթարթաբար դրոշմվում են գրի վրա, եթե դրանցից խուսափելու միջոց չգտնես:

Ժամանակ առ ժամանակ, ասես քարացման պրոցեսը ներթափանցում էր առանց բացառության կյանքի բոլոր կերպերի մեջ, եւ ոչինչ չէր կարող խուսափել Մեդուզայի անողորմ հայացքից: Միակ հերոսը, որ ունակ էր նրա գլուխը կտրելու՝ դա ոտքերին թեւավոր սանդալներով Պերսեսն է: Պերսեսը, ով Գորգոնային ուղիղ չի նայում, այլ միայն նրա արտացոլանքին՝ իր բրոնզե վահանի վրա:

Մեդուզային գլխատելու համար քա-

## Գեղարմ Գարուն 2017

րի չվերածված Պերսելը դիմում է ամենաթեթև բաների օգնությանը՝ քամու եւ ամպերի, եւ նայում է այն բանին, ինչը կարող է բացվել միայն ոչ ուղղակի հայացքին, այսինքն՝ արտացոլանքին հայելում: Իմ մեջ մեկեն գայթակղություն է առաջանում այդ առասպելի մեջ աշխարհի հանդեպ վերաբերմունքի եւ գրելու դասի այլաբանություն տեսնել: Բայց ինձ հայտնի է, որ ցանկացած մեկնություն աղքատացնում է առասպելը: Առասպելների հետ փութալու հարկ չկա: Ավելի լավ է նրանց թույլատրել նստվածք տալ եւ խոհածել յուրաքանչյուր մանրամասնի վրա, տեսադաշտից չկորցնելով պատկերների լեզուն:

Պերսեսին եւ Մեդուզային կապում են շատ բարդ հարաբերություններ, որոնք չեն ավարտվում հրեշի գլխատմամբ: Մեդուզայի արյունը ծնում է թեւավոր Պեգաս մուլգին, որում քարի ծանրությունը փոխակերպվում է իր հակադրության: Ինչ վերաբերում է հատած գլխին, ապա Պերսեսն այն չի նետում, այլ թաքցնում է մախաղի մեջ եւ տանում է իր հետ:

Երբ թշնամիները մոտ են այն բանին, որ հաղթեն, նրան բավ է լոկ ցուցադրել այն, բռնելով նրա օձանման խոպրպներից, եւ այդ արյունոտ ավարը հերոսի ձեռքին հուժկու զենք է դառնում, որը նա գործածում է սոսկ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում եւ միայն նրանց դեմ, ովքեր արժանի են փոխակերպվելու քարի: Անկասկած, առասպելը ձգտում է ասել մեզ այն, ինչը ոչ մի այլ կերպ հնարավոր չէ արտահայտել, քան միայն պատկերների օգնությամբ: Պերսելը իշխանություն է ձեռք բերում այդ սարսափելի դեմքի վրա, թաքցնելով այն նույնպես, ինչպես նա ավելի վաղ հաղթեց նրան, նայելով հայելուն:

Պերսեսի ուժը ուղիղ նայելուց հրաժարվելու, բայց ոչ իրականությունից

հրաժարվելու մեջ է, որում նրան վիճակված է ապրել՝ նա իրականությունը կրում է իր հետ եւ ընդունում է այն՝ ինչպես իր անձնական բեռը:

Ավելին իմանալ Պերսեսի եւ Մեդուզայի փոխհարաբերությունների մասին մենք կարող ենք Օվիդիոսի «Կերպարանափոխություններից»: Պերսեսը հաղթանակում է եւս մի մարտում՝ նա իր սրով հատում է ծովահրեշին կտորների եւ ազատում է Անդրոմեդային: Այնուհետեւ նա պատրաստվում է անել այն, ինչը կաներ մեզանից յուրաքանչյուրն այդպիսի արյունալի առաքելությունից հետո. նա ուզում է ձեռքերը լվալ: Բայց նոր խնդիր է առաջանում՝ ո՞ր դնել Մեդուզայի գլուխը:

Եվ այստեղ Օվիդիոսը ցուցադրում է հոգու նրբությունը, որով օժտված է Պերսեսը՝ հրեշներից հաղթողը.

*Եվ որպեսզի կոշտ ավազը չքերի  
գլուխն օձակիր,  
Տակը տերեւ եւ ջրում աճած  
եղեգնացողուն է փռում,  
Եվ դրանց վրա է դնում գլուխը  
Ֆորկինիդ Մեդուզայի:*

Ինձ թվում է, որ Պերսեսի թեթևությունն անհնար էր ավելի լավ պատկերել, քան այդ հարգալից ժեստի օգնությամբ առ էակը, միաժամանակ՝ զազրելի ու փխրուն: Բայց ամենամասնասեւիին՝ դա հետո հաջորդող հրաշքն է՝ Մեդուզայի գլխի հետ շփվելուց հետո փոքրիկ ծովաբույսերը վերածվում են մարջանների, եւ ջրահարսերը, որ բուստերն օգտագործում են որպես զարդարանքներ, փութում են բերել ջրիմուռները եւ դնել հրեշի գլխին:

Նրբին մարջանների եւ Գորգոնայի սարսափելի գլխի պատկերների համակցումն ինքնին բազում մտքերի է մղում, եւ ես չեմ կամենա փչացնել այն



## Գեղարմ Գարուն 2017

մեկնության փորձերով: Շատ ավելի լավ կլիներ համեմատել Օվիդիոսի տողերը ժամանակակից բանաստեղծ Էուջինիո Մոնտալեի տողերի հետ: Նրա «Փոքրիկ պատգամ» բանաստեղծության մեջ մենք նույնպես գտնում ենք նրբին տարրեր, որոնք կարող են նրա ողջ պոեզիայի սիմվոլները ծառայել:

*Ոչ այն է խխունջի սաղափե արա  
հետ, ոչ այն է տրորված*

*ապակու զմռնիտ:*

Այդ պատկերը հակադրված է սարսափազդու արջնաթեւ Լյուցիֆերին, Արեւմուտքից քաղաքների վրա իջնող:

Այդ բանաստեղծության մեջ, ինչպես եւ ոչ մի ուրիշում, Մոնտալեին հաջողվել է արտահայտել հայտնութենական պատկերը՝ մանրագույն պարզ նրբագծերի օգնությամբ, մռայլ արհավիրքի ֆոնի վրա:

*Դիմափոշամանի մեջ պահպանիր  
լույսի հատիկներն այնժամ,  
երբ կմարեն ջահերը, եւ դժոխապարի  
կվերածվի սարդանան:*

Այս բանաստեղծությունը՝ հավատի հաստատումն է առաքինության հավերժության, որն առաջին հերթին թվում է կործանման դատապարտված՝ «չրիկացող այնտեղ ցածում, թույլ փայլը՝ պարզապես ծծմբալուցկի չէ»:

Նախքան մեր ժամանակին դիմելը, ես երկար ճանապարհ կտրեցի՝ Օվիդիոսի փխրուն Մեդուզայից եւ Մոնտալեի սեւ Լյուցիֆերից: Վիպագրին դժվար է թեթեւության օրինակներ քաղել առօրյա կյանքից, չվերածելով դրանք անվերջանալի որոնման անհասանելի օբյեկտի: Հենց դա է ապշեցուցիչ պարզությամբ արել Միլան Կունդերան: Նրա «Կեցության անտանելի թեթեւությունը» վեպը՝ դա իրոք խոստովանությունն է կենաց անխուսափելի ծանրության, ինչը նրա համար բաղկացած է հասարակական եւ անհատական սահմանափա-

կումների մեզ ավելի ու ավելի պարուրող մանրացանցով: Նրա վեպը ցուցանում է մեզ, որ այն, ինչ մենք գնահատում ենք կյանքում որպես թեթեւություն, շատ շուտով դրսեւորում է իր անտանելի ծանրությունը: Գուցե թե, միայն մտքի կայտառությունն է խուսափում այդ ճակատագրից՝ հատկանիշ, որի օգնությամբ գրվել է ինքը վեպը եւ որը պատկանում է այն աշխարհին, որ տարբեր է այն բանից, որում մենք ապրում ենք:

Երբ մարդկությունը թվում է ծանրության դատապարտված, ես կամենում եմ անցնել, Պեգասի նման, այլ տարածություն: Ես նկատի չունեմ փախուստն առերազանքները կամ իռացիոնալությունը: Ես նկատի ունեմ, որ ես պիտի փոխեմ իմ մոտեցումը, աշխարհին նայեմ այլ անկյան տակ, այլ տրամաբանությամբ եւ իմացության նոր մեթոդներով: Թեթեւության պատկերները, որոնք ես փնտրում եմ, չպիտի չքանան ինչպես երազները, բախվելով ներկայի եւ ապագայի իրողություններին...

Գրականության անծայրածիր տիեզերքում միշտ ուսումնասիրման նոր ուղիներ կան: Բայց եթե գրականությունը չի բավում, որպեսզի ինձ համոզի այն բանում, թե ես պարզապես ընկնում եմ պատրանքների ետեւից՝ ես դիմում եմ գիտության օգնությանը, որն իմ տեսիլքներն ազատում է ծանրությունից: Այսօր թվում է, թե գիտության յուրաքանչյուր ճյուղը ձգտում է ցույց տալ, որ աշխարհի հիմքում ընկած են մանրադիտակային բաներ՝ ԴՆԹ-ն, նյարդային խթանները, կվարկներն ու մեյոզոմները, որ ի սկզբանե սուրում են տարածության միջով...

Լուկրեցիոսի «Իրերի բնության մասին»-ը՝ առաջին մեծ բանաստեղծական գործն է, որում գիտելիքներն աշխարհի մասին ասես տրոհում են նրա հոծու-

## Գեղարմ Գարուն 2017

թյունը, հայացքի առաջ բանալով անվերջորեն փոքրը, թեթևն ու շարժունը: Լուկրեցիոսը նպատակ է դնում պոեմ գրել մատերիայի մասին, բայց նա ամենասկզբից մեզ նախագգուշացնում է, որ այդ մատերիան կազմված է անտեսանելի մասնիկներից: Նա՝ ֆիզիկական կոնկրետության բանաստեղծն է նրա մշտատեսու ու անփոփոխ էության տեսանկյունից, բայց նա առաջին հերթին հաղորդում է մեզ, որ դատարկությունը նույնքան կոնկրետ է, որքան հոծ մարմինները: Լուկրեցիոսի գլխավոր նպատակն է՝ չթուլատրել մատերիայի ծանրությանը ճգմել մեզ:

Ես արդեն հիշատակել եմ Օվիդիոսի «Կերպարանափոխությունները»՝ եւս մեկ հանրագիտարանային պոեմ /գրված Լուկրեցիոսի պոեմից հիսուն տարի առաջ/, որը սակայն սկիզբ է առնում ոչ թե ֆիզիկական իրականության մեջ, այլ՝ առասպելաբանության եւ առակների: Օվիդիոսը նույնպես համարում է, որ ամեն ինչ կարելի է կերպափոխել ինչ-որ այլ բանի, իսկ աշխարհի ճանաչումը նշանակում է նրա հոծության հաղթահարումը: Բացի այդ նրա համար ողջ գոյողը հավասար է՝ ի հակադրություն առ իշխանություն ու արժեքների հիերարխիկ հայացքի: Եթե Լուկրեցիոսի աշխարհը բաղկացած է անփոփոխ հյուլներից, ապա Օվիդիոսի աշխարհը՝ հատկություններից, ատրիբուտներից ու ֆորմաներից, որոնք գոյավորում են իրենց բազմազանությունը: Սակայն դրանք բոլորը՝ լոկ արտաքին նշաններն են միասնական էության, որը, եթե ալեկոծվի խորը զգացողությամբ, ապա ինչի ասես կվերածվի:

Ինչպես Լուկրեցիոսի, այնպես էլ Օվիդիոսի մոտ թեթևությունը՝ դա աշխարհին նայելու միջոց է, հիմնված փիլիսոփայության եւ գիտության վրա՝ Լուկրեցիոսի մոտ՝ Էպիկուրոսի ուսմունքի,

իսկ Օվիդիոսի մոտ՝ Պյութագորասի /որի նկարագրության մեջ Պյութագորասը շատ նմանվում է Բուդդային/: Երկու դեպքում էլ թեթևությունը նույնպես ծնվում է հենց գրից, բանաստեղծի լեզվի հզորությունից, անկախ փիլիսոփայական ուսմունքից, որը նա դավանում է:

Ինձ թվում է, որ այս պահի դրությամբ, ելնելով այն բանից, ինչ ես ասացի, թեթևության հասկացությունը սկսում է հստակ ուրվագծեր ստանալ: Յուսով եմ, ինձ հաջողվեց ցույց տալ, որ գոյություն ունի այնպիսի բան, ինչպես մտախոհության թեթևությունը, նույնպես՝ ինչպես եւ գոյություն ունի թեթևամտության թեթևությունը: Ավելին, մտախոհ թեթևության կողքին թեթևամտությունը թվում է տաղտկալի ու ծանր: Այդ գաղափարը ցուցադրելու ավելի լավ եղանակ չկա, քան «Դեկամերոնի» մի պատմության օգնությամբ, որում հայտնվում է ֆլորենտացի բանաստեղծ Գվիդո Կավալկանտին: Բուկաչոն պատկերում է Կավալկանտինին որպես ճգնակյաց փիլիսոփայի, մտախոհ մարմարյա դամբանաքարերի կողքով զբոսնող: Ֆլորենցիայի ոսկե երիտասարդությունը ամբոխով անցնում է քաղաքով մի երեկոյից մյուսը եւ նոր հրավերների որոնումներում: Կավալկանտին նրանց մոտ ճանաչում չի վայելում, չէ որ, չնայած նրա հարստությանն ու նրբաճշակությանը, նա հրաժարվում է միանալ իրենց զվարճանքին, եւ այն պատճառով, որ նրա առեղծվածային փիլիսոփայությունը նրանց թվում է անաստվածությանը մերձ:

Պատահեց մի անգամ, որ, ելնելով Օրտո Սան Միկելեից եւ անցնելով Կորտո դեյի Ադիմարիով, ուր նա հաճախ էր քայլում, դեպի Սան Ջիովանի, ուր շուրջբոլորը մարմարյա դամբարաններ էին, որ այժմ Սանտա Բեպարատայում են, եւ շատ այլք, Գվիդոն հայտնվեց

## Գեղարմ Գարուն 2017

այնտեղ գտնվող ծիրանաքարե շարասյուների, Սան Զիովանիի դամբարանների ու դռների միջեւ, որոնք փակ էին, երբ մեսսեր Բետտոն եւ հասարակությունը, ձի հեծած անցնելով Բեպարատայի հրապարակով, նկատեցին Գվիդոյին այդ դամբարանների միջեւ եւ ասացին՝ «Գնանք, նրա հոգու հետ խաղանք»: Ձիերին ասպանդակելով, նրանք, ասես զվարճալի հարձակման մեջ, համարյա սուրացին նրա վրա, մինչեւ նրա նկատելը, եւ սկսեցին նրան ասել՝ «Գվիդո, դու հրաժարվում ես լինել մեր հասարակության մեջ, բայց ասա, երբ դու բացահայտես, որ Աստված չկա, ապա դրանից ի՞նչ դուրս կգա»: Դրան Գվիդոն, իրեն շրջապատված տեսնելով, տեղնուտեղն ասաց. «Պարոնայք, դուք կարող եք ինձ ասել ձեր տանը այն ամենը, ինչ կամենաք», եւ ձեռքով հենվելով դամբարաններից մեկի վրա, իսկ դրանք բարձրադիր էին, լինելով շատ թեթեւ, նա թռչք գործեց, անցավ մյուս կողմ, եւ նրանցից ազատվելով, հեռացավ:

Առաջին հերթին մեր ուշադրությունն այստեղ գրավում է ոչ թե Կավալկանտիի սրամիտ պատասխանը, այլ, Բոկաչչոյի ստեղծած տեսողական պատկերը՝ մի թռչքով ազատվող թեթևոտն Կավալկանտին:

Եթե հարկ լիներ համապատասխան պատկեր ընտրել հաջորդ հազարամյակի համար, ես կընտրեի այս՝ բանաստեղծ-փիլիսոփայի անակնկալ հմուտ ցատկը, աշխարհի ծանրությունից ազատվող եւ դրանով ցուցանող, որ աղմուկը, ազրեսիան, արագությունն ու վայնասունը, որոնք շատերը համարում են մեր ժամանակի կենաց ուժի հատկանիշը, պատկանում են մահվան արքայությանը, համանման հին ժանգոտ մեքենաների գերեզմանոցին:

Ես ուզում եմ, որ դուք մտապահեք այս պատկերը, քանի դեռ ես կխոսեմ

Կավալկանտիի մասին՝ որպես թեթևության բանաստեղծի: Նրա բանաստեղծությունների գործող անձինք այնքան մարդիկ չեն, որքան հոգոցները, լույսի շողերը, օպտիկական պատրանքները եւ առաջին հերթին բոլոր այն աննյութական մղումները եւ ուղերձները, որոնք նա «ոգիներ է» անվանում: Այսպիսի ամենեւին էլ ոչ «թեթեւ» թեման, ինչպես սիրո տվայտանքը, վերածվում է անշոշափ մասնիկների, որոնք շարժվում են զգացող հոգու եւ ինտելեկտուալ հոգու միջեւ, մտքի եւ սրտի միջեւ, հայացքի եւ ձայնի միջեւ: Յուրաքանչյուր դեպքում մենք գործ ունենք ինչ-որ թեթեւ, շարժվող, ինֆորմացիա անցկացնող բանի հետ:

Որոշ բանաստեղծություններում այդ գուժկանի եւ ուղերձի դերը միատեղ կատարում է ինքը տեքստը: Դրանցից ամենահայտնիում՝ «Քանզի ես հուսում եմ վերադառնալ», բանաստեղծը տարագրության մեջ դիմում է բալլադին, որը նա գրում, եւ ասում է՝ «Թռիր թեթեւ ու քնքուշ, ուղիղ իմ տիրուհու մոտ»:

Մեկ այլ սոնետում Կավալկանտին բերում է հիանալի բաների թվարկումը, որոնք, այդուհանդերձ, խամրում են սիրեցյալի գեղեցկության կողքին.

*Գեղուհիների գերող հայացքները,*

*Շքեղազարդ շողշողուն*

*հեծելաշարը,*

*Ջրույցները վասն սիրո եւ*

*թռչնաերգչախմբերը,*

*Ծովալիքի վրայով սահանցող նավը:*

*Լուսայգից առաջ, որ կշողա շուտով,*

*թափանցիկությունը,*

*Յուշիկ երկրի վրա իջնող ծյունը,*

*Նախշերը մարգագետինների, գետի*

*խոխոջյունը,*

*Ոսկե շրջանակում քարերի փայլը,*

*Ի՞նչ է ամենն այդ իմ տիրուհու*

*Գեղահրաշ գեղեցկության ու*

*վեհության առջեւ:*

«Յուշիկ երկրի վրա իջնող ձյունը», աննշան փոփոխություններով օգտագործում է իր «Դժոխքում» Դանտեի՝ «Յանց ձյունը լեռնաքերձերի անհողմության մեջ»: Երկու բանաստեղծների տողերը պրակտիկորեն նույնական են, բայց դրանք միանգամայն տարբեր գաղափարներ են արտահայտում: Երկու դեպքում էլ ձյունն անքամի օրը ենթադրում է կամացուկ, անաղմուկ շարժումը: Բայց այդտեղ նմանությունն ավարտվում է: Դանտեի մոտ տողն ավարտվում է կոնկրետ տեղը մատնանշելով՝ լեռնաքերձերը, որ մեր երեակայության մեջ լեռնաբնակար է հարուցում: Իսկ Կավալկանտիի մոտ «սպիտակ» մակդիրը «ընկնում է» կանխատեսվող բայի հետ, միահյուսվելով, բնանկարը վերածում է անշարժ վերացականության: Կավալկանտիի մոտ ամեն ինչ այնքան արագ է շարժվում, որ մենք չենք գիտակցում մշտակայությունը, միայն հետեւանքները: Դանտեի մոտ ամեն ինչ հաջորդականություն ու կայունություն է՝ իրերի քաշը ճշգրիտ հաստատված է:

Կարելի է ասել, որ դարերի ընթացքում գրականության մեջ գոյություն են ունեցել երկու հակամարտող միտումներ՝ մեկը ձգտում է լեզուն վերածել անկշիռ տարրի, որը ճախրում է, ինչպես ամպը, կամ ավելի ճիշտ՝ մագնիսական դաշտը, մյուսը ձգտում է հաղորդել իրերի կշիռը, հոծությունն ու կոնկրետությունը: Առաջին միտումը սկզբնավորեց Կավալկանտին, երկրորդը՝ Դանտեն: Դանտեն հոծություն է հաղորդում նույնիսկ ամենավերացական ինտելեկտուալ կառույցների, այնինչ Կավալկանտին շոշափելի իրերի կոնկրետությունը լուծում է հստակ ռիթմում, հանգը հանգի ետքից, կարծես թե միտքը փայլատում է խավարում կայծակի ակնթարթային առկայծումներով:

Կավալկանտիի քննարկումը նպա-

տակ ուներ /համեմայն դեպս ինձ համար/ պարզաբանելու, թե ես ինչ եմ ենթադրում «թեթևության» տակ: Ինձ համար թեթևությունը զուգորդվում է նպատակաուղղվածությանը, այլ ոչ թե անպարզությանն ու անփոփոխությանը: Պոլ Վալերին ասում էր՝ «Յարկ է լինել թեթև, ինչպես թռչունը, այլ ոչ թե ինչպես փետուրը»: Ես օգտագործեցի Կավալկանտիի օրինակը, որպեսզի ցուցանեմ թեթևության նշանակությունը երեք զանազան ասպեկտներում: Առաջինը, դա լեզվի թեթևությունն է, որի միջոցով իմաստը հաղորդվում է, անկշիռ թվացող, բանավոր տեքստուրայի միջոցով, մինչև որ ինքը իմաստը նույնպիսի նոսր կազմություն է ընդունում: Երկրորդ, դա մտքի ընթացքի կամ հոգեբանական պրոցեսի լուսաբանումն է, որտեղ աննկատ տարրեր են գործում, կամ էլ ցանկացած տեսակի նկարագրություն, որը վերացականության բարձր մակարդակ է ենթադրում: Երրորդ, դա թեթևության տեսողական պատկերն է, որ սիմվոլիկ նշանակություն է ձեռք բերում՝ ինչպես, օրինակ, քարի վրայից թռչող Կավալկանտին:

Տրամադրության տակ ունենալով այս երեք բնորոշումները, ես կարող եմ սկսել թերթել գրքերն իմ գրադարանում թեթևության օրինակների որոնումներում: Շեքսպիրի մոտ ես առաջին հերթին դիմում եմ այն պահին, երբ բեմի վրա է հայտնվում Մերկուցիոն:

*Սիրահարները Կուպիդոնի թելերի վրա*

*թռչում են անճիգ կտուրից էլ վեր:*

Մերկուցիոն հակաճառում է Ռոմեոյին, ով հենց նոր ասել էր՝ «Յոգիս ճնշել է արճիճն ու գամել գետնին»: Մերկուցիոյի աշխարհի հետ փոխհարաբերության միջոցը պարզ է առաջին բայերից, որոնք նա կիրառում է՝ պարել, վեր սլանալ, խոցել: Յենց որ նա հայտնվում է

## Գեղարմ Գարուն 2017

բեմի վրա, նա մեկեն շարադրում է իր փիլիսոփայությունը՝ բայց ոչ թե տեսական շրջաստության օգնությամբ, այլ երազի օրինակով: Մաք թագուհին՝ փերիների տատմերը, հայտնվում է «սնամեջ ընկույզից» սարքած կառքում.

*Մաքի կառքը հուսալի է ու թեթև  
Եվ շարժվում է սարդի տոտիկների  
վրա.*

*Թափանցիկ ծածկոցը՝ թելերից  
մորեխի,*

*Սանձերը՝ շողերը լուսնային,  
Պիրկ մտրակում քամիներ են*

*պտտվում*

*Մոծակի տեսքով կառապանի մոտ:*

Եվ չմոռանանք, որ կառքը «քարշ է տալիս ճատիկ էակների խմբիկը»՝ ինչպես ինձ թվում է, սա առանցքային մանրամասն է, որը թույլ է տալիս Մաք թագուհու մասին երազին միավորել Լուկրեցիոսի հյուլեականությունը, Վերածննդի նորպլատոնականությունն ու կելտական բանահյուսությունը:

Շեքսպիրյան դարաշրջանն ընդունում էր մակրոտիեզերքն ու միկրոտիեզերքը միավորող նրբին ուժերը՝ նորպլատոնականների տիեզերքի ուժերից մինչև մետաղի ոգիները ալքիմիկոսների հալքանոթում: Դասական առասպելները հավերժահարսերի, դրիադների լայն ընտրություն են առաջարկում, բայց կելտական դիցաբանությունն իր էլֆերով ու փերիներով նույնիսկ ավելի հարուստ է բնության ուժերի պատկերներով: Դա բացատրում է, թե ինչու Շեքսպիրը այդքան հաճախ է դիմում դրան: Եվ ես խոսում եմ ոչ միայն Պակի, Արիելի եւ «Միջամառային երազի» ողջ ցնորատեսիլի մասին: Ես խոսում եմ, առաջին հերթին, յուրահատուկ էքզիստենցիալ մոտեցման մասին, որը թույլատրում է Շեքսպիրի պերսոնաժներին հեռանալ սեփական կյանքի դրամայից, դրանով իսկ վերածելով այն մեկամաղ-

ձության ու հեզմանքի:

Անկշիռ լրջությունը, որի մասին ես խոսում էի Կավալկանտիի դեպքում, նորից հայտնվում է Սերվանտեսի ու Շեքսպիրի դարաշրջանում: Ինչպես եւ մեկամաղձությունը՝ այդ թեթևացած տրտմությունը, ինչպես եւ հումորը՝ այդ, ծանրությունը կորցրած, կատակերգությունը: Մեկամաղձությունն ու հումորը, անխախտելի կապված, բնորոշում են Դանեմարքայի ինտոնացիաները՝ ծայներանգները, որոնք մենք սովորել ենք ճանաչել Շեքսպիրի համարյա բոլոր պիեսներում, Յանլետի բազում ավատարների խոսքերում: Դրանցից մեկը՝ ժանը, «Ինչպես դա ձեզ դուր կգա»-ից հետեւյալ կերպ է բնորոշում մեկամաղձությունը.

«Իմ մեկամաղձությունը՝ միանգամայն առանձնահատուկ է, ճիշտն ասած՝ ինձ պատկանող, բազում գոյացություններից կազմված եւ քաղաքերված շատուշատ առարկաներից, եւ իսկապես խոհածությունների արդյունքն է իմ ճանփորդությունների մասին խոհածությունների, որոնց մեջ ես հաճախ եմ թաղվում եւ որոնք ներծծվում են իմ մեջ ամենազվարճալի տրտմությամբ:

Յետեւաբար, դա հոժ, ծանր մեկամաղձոտությունը չէ, այլ զգացողությունների մանրիկ մասնիկների շղարշը, հյուլեների մանրափոշին, ինչպես եւ ամենը, որ կազմում է բազում իրերի էությունը:

Առաջին ժամանակակակից գրողը, որ բացահայտորեն պաշտպանում էր աշխարհի հյուլեական պատկերը, հայտնվեց շատ ավելի ուշ, Ֆարանսիայում. դա Սիրանո դե Բերժերակն էր՝ արտասովոր գրող, ով արժանի է ավելի մոտիկից ծանոթանալու, ոչ միայն այն պատճառով, որ նա գիտական ֆանտաստիկայի առաջին նախակարապետն է, այլ նաեւ նրա ինտելեկտուալ

## Գեղարմ Գարուն 2017

ու բանաստեղծական արժանիքների համար: Գասենդիի «սենսիզմի» եւ Կոպերնիկոսի աստղագիտության հետեւորդը, բայց ամենից առաջ ոգեշնչված իտալական Ռենեսանսի բնափիլիսոփայությամբ՝ Կարդանոյով, Բրունոյով, Կամպանելայով, Սիրանոն ատոմիզմի առաջին բանաստեղծն էր, Սիրանոն գովերգում էր բոլոր իրերի միասնությունը, կենդանի եւ մեռյալ, ինչպես նաեւ հաղորդում է կենաց հիմքում ընկած պրոցեսների փխրունության զգացողությունը:

Սիրանոն հասնում է այն բանին, որ մարդկանց ու բանջարեղենին եղբայրներ է հայտարարում եւ պատկերացնում է կաղամբի վրդովմունքը, որին պատրաստվում են գլխատել:

«Մարդ, իմ քնքուշ ընկեր, այդ ի՞նչ են ես քեզ արել, որպեսզի մահվան արժանանամ: Ես աճում եմ հողից, ես ծաղկում եմ, ես ձեռքբերս մեկնում եմ քեզ, ես քեզ եմ ընծայում իմ երեխաներին սերմերի տեսքով, եւ որպես պարգեւ իմ սիրալիրության՝ դու ուզում ես գլուխս կտրել»:

Այդ խոսքն ի պաշտպանությունն հիւրավի համընդհանուր եղբայրության, գրված Ֆրանսիական հեղափոխությունից հարյուր հիսուն տարի առաջ, ցույց է տալիս, թե ինչպես մարդկային գիտակցության դանդաղկոտությունն իր մարդակենտրոն սահմանափակության մեջ կարող է մի ակնթարթում վերացվել բանաստեղծի գործով: Թեթեւության իմ քննարկման մեջ Սիրանոն հանդես է գալիս առաջին հերթին այն բանի համար, որ նա Նյուտոնից առաջ գիտակցեց ծանրության ուժի խնդիրը: Ավելի ճիշտ, ծանրության ուժի հաղթահարումն այնքան է ձգում նրան, որ նա լուսնին հասնելու միջոցների մի ողջ շարք է հայտնաբերում, մեկը մյուսից ավելի հնարամիտ. օրինակ, արեւի տակ

գոլորշիացող ցողով լեցուն փորձանոթի միջոցով, գոնջացլի, որ սովորաբար գրավվում է լուսնով, ոսկրուղեղը վրան քսելու օգնությամբ, կամ փոքրիկ նավակից մագնիսացված գունդը բազմիցս դուրս նետելով:

Ինչ վերաբերում է մագնետիզմի տեխնիկային, ապա դրան վիճակված էր մշակվել եւ կատարելության հասցվել Ջոնաթան Սվիֆթի կողմից այն բանի համար, որպեսզի օդում պահեր Լապուտա թռչող կղզին: Լապուտան հայտնվում է այն պահին, երբ Սվիֆթի համակվածության երկու առարկան կարծես թե փոխվերացվում են կախարդական հավասարակշռության պահին: Ես խոսում եմ ռացիոնալիզմի անմարմին վերացականության մասին, որ նրա երգիծանքի, եւ մարմնի ծանրության օբյեկտ է ծառայում:

«Շուտով, սակայն, նա մոտեցավ ինձ, եւ ես կարողացա զննել, որ իր կողմերը շրջապատված են մի քանի պատկերասրահներով, տեղակայված ելուստներով ու միմյանց միացված որոշակի տարածություններում սանդուղքներով, որ թույլատրում էին մի պատկերասրահից մյուսն անցնել: Ամենաներքեւի պատկերասրահում ես մի քանի մարդ տեսա, որոնցից ոմանք երկար կարթերով ձուկ էին բռնում, իսկ մյուսները նայում էին այդ որսին»:

Սվիֆթը Նյուտոնի ժամանակակիցն ու հակառակորդն էր: Վոլտերը, օրինակ, հիանում էր Նյուտոնով եւ ստեղծեց Միկրոմեգաս անվամբ հսկային, ով, ի տարբերություն Սվիֆթի աժդահակների, բնորոշվում է ոչ թե իր մեծությամբ, այլ թվերով արտահայտված տարածական ու ժամանակային բնութագրերով, թվարկված գիտական տրակտատների խստությամբ ու սառնասրտությամբ: Այդ ոճի շնորհիվ Միկրոմեգասին հաջողվում է թռչել տիեզերքի միջով՝ Սիրիու-

## Գեղարմ Գարուն 2017

սից մինչեւ Սատուրն եւ Երկիր: Կարելի է ասել, որ Նյուտոնի տեսություններում գրական երեւակայությանն ամենից շատ ապշեցնում է ոչ թե յուրաքանչյուր իրի կախվածությունը սեփական քաշից, այլ ավելի շուտ ուժերի հավասարակշռությունը, որ թույլատրում է երկնային մարմիններին կախվել տիեզերքում:

18-րդ դարի մարդու երեւակայությունը լեցուն է օդում կախված ֆիզուրներով: Եվ դա պատահական չէ, չէ որ այդ դարի սկզբում «Հազար ու մի գիշերվա» ֆրանսիական թարգմանությունը, որ իրագործել էր Անտուան Գալանը, Արեւմտեքի երեւակայության համար բացեց արեւելյան հրաշալիքները՝ թռչող գորգերը, թեւավոր նժույզները եւ լապտերների ջիները:

18-րդ դարի ձգտումը՝ ստիպել երեւակայությանը հաղթահարել ցանկացած սահմանափակում՝ իր բարձրակետին հասավ թնդանոթի ռմբագնդի վրա Մյունհաուզենի թռիչքում, ընդմիջտ դրոշմված մեր ուղեղներում՝ Գյուստավ Դորեի հիասքանչ նկարագրումների շնորհիվ:

Մյունհաուզենի արկածները, որոնք, ինչպես եւ «Հազար ու մի գիշերվա» հեքիաթները, կարող էին մի հեղինակ ունենալ, շատերին կամ ընդհանրապես ոչ մեկին, մշտապես մարտահրավեր են նետում գրավիտացիայի օրենքին. բարոնին օդ են հանում բաղերը, նա իրեն ու իր ձիուն դուրս է քաշում ճահճից իր կեղծամի պոչով, նա իջնում է Լուսնից պարանով, որը իջնելիս մի քանի անգամ կտրում ու նորից հանգուցում է:

Այդ բանահյուսական պատկերները, ինչպես եւ ավելի վաղ դիտարկված օրինակները ավելի լուրջ տեքստերից՝ Նյուտոնի տեսության գրական հետեւանքներն են: Տասնհինգ տարեկանում Ջակոն Լեոպարդին գրեց անհավանական

խորագիտությամբ առանձնացող «Աստղագիտության պատմությունը», որում նա, մնացյալ բաներից զատ, ամփոփում է Նյուտոնի տեսությունները: Գիշերային երկնքի զննումը, որ ներշնչանք է ծառայել Լեոպարդիի ամենահիասքանչ տողերի համար, միայն քնարական թեմա չէր. խոսելով լուսնի մասին, Լեոպարդին հաստատ գիտեր, ինչի մասին էր ինքը խոսում: Կենաց անտանելի ծանրության մասին իր անվերջանալի դատողություններում նա թեթեւության բազում սինվոլներ է օգտագործում անհասանելի երջանկության նկարագրության համար՝ թռչունները, պատուհանի մոտ երգող աղջկա ձայնը, օդի մաքրությունը եւ ամենից առաջ՝ լուսինը:

Ամեն անգամ, երբ լուսինը հիշատակվում է պոեզիայում, նա իր հետ թեթեւության, կախված լինելու եւ լռիւն դյութանքի զգացողություն է բերում: Երբ ես սկսել էի խորհրդածել այդ դասախոսությունների շուրջ, ես ուզում էի դրանցից մեկը լիովին նվիրել լուսնին, որպեսզի հետեւի նրա հայտնվելուն տարբեր երկրների ու դարերի գրականություններում: Բայց այնուհետեւ ես որոշեցի, որ լուսինը պետք է թողնել Լեոպարդիին: Չէ՞ որ ամենաարտասովորը նրա պոեզիայում՝ դա այն է, որ նա լեզուն ազատում է ծանրությունից, անպես որ խոսքը սկսում է հիշեցնել լուսնի լույսը: Լուսնի նկարագրությունները նրա պոեզիայում շատ տողեր չեն գրավում, բայց դա բավ է, որպեսզի դրանց լույսը սփռվի ողջ բանաստեղծության վրա:

Լուկրեցիոսի համար տառերը մշտական շարժման մեջ եղող հյուլներ են, որոնք տեղաշարժերի շնորհիվ զանազան բառեր ու հնչեղություններ են ծնում: Այդ գաղափարը շարունակություն գտավ ստեղծագործություններում մի շարք մտածողների, որոնց համար

## Գեղարմ Գարուն 2017

աշխարհի գաղտնիքները պահպանվում էին գրանշանների համակցումներում: Այստեղ միտս են գալիս Ռայմոնդ Լուլիի «Ars Magna»-ն, իսպանացի ռավիների Կաբալան եւ Պիկո դելա Միրանդոլայի աշխատությունները: Նույնիսկ Գալիլեյը այբուբենի մեջ տեսնում էր մանրագույն տարրերի ամենատարաբնույթ զուգակցումների մոդելը:

Ես սովորել եմ գրականությունը համարել գիտելիքի որոնում:

Էքզիստենցիալ շրջասության անցնելու համար հարկ է մտածել գրականության մասին մարդաբանության, ազգագրության եւ դիցաբանության միջոցով: Բախվելով ցեղային կյանքի վտանգներին՝ երաշտին, հիվանդությանը եւ չար ոգիներին, շամանն ազատվում էր սեփական մարմնի ծանրությունից եւ տեղափոխվում էր այլ աշխարհ, ընկալման այլ մակարդակ, որ նա ուժեր էր քաղում, որպեսզի իրականությունը փոխի: Մեզ ավելի մոտ դարերում եւ քաղաքակրթություններում, երբ սահմանափակումների ծանրությունը ընկնում էր մեծ մասամբ կանանց վրա, վիուկները գիշերները թռչում էին ցախավելներով կամ նույնիսկ ավելի թեթեւ իրերի վրա, ասենք, ցորնահասկերի եւ ծղոտի ցողունների վրա: Մինչեւ ինկվիզիցիայի կողմից արգելվելը, այդ պատկերները բանահյուսական ավանդույթի կամ նույնիսկ կենաց փորձի մասն էին: Այդ օդում ցանկալի սավառնումի եւ իրական դժբախտությունների կապը՝ մշտական մոտիվն է գրականության կողմից հավերժացված մարդաբանության մեջ:

Ես կուզեմայի այս դասախոսությունն ավարտել Կաֆկայի «Դույլ հեծած» պատմվածքով, որ գրվել է 1917 թվականին, առաջին դեմքով, եւ որի հիմքում իրական իրավիճակ է, որ գոյա-

ցել էր պատերազմի ժամանակ, ծննանը ածուխի անբավությունից: Պատմողը դատարկ դույլը ձեռքին ուղեւորվում է վառարանի համար ածուխ որոնելու: Դույլը նրան ձի է ծառայում եւ նրան բերում է տան երկրորդ հարկը: Ածխավաճառի կրպակը գտնվում է նկուղում, իսկ հեծյալը դույլի վրա շատ բարձր է գտնվում: Նա մեծ ջանք պիտի գործադրի, որպեսզի գոչունով հասնի ածխավաճառի ականջին, ով անկեղծ ցանկանում է արծագանքել խնդրանքին, բայց նրա կինը հերոսի հետ գլուխ դնել չի կամենում: Նա պաղատում է նրան՝ դե թեկուզ մի բուռ վատորակ ածուխ տալ, թեպետ եւ նա չի կարող մեկեն վճարել: Ածխավաճառի կինը հանում է գոզնոցն ու ճանճի պես քշում է անկոչ հյուրին: Դույլն այնքան թեթեւ է, որ այն տանում է իր հեծյալին հեռու այնքան ժամանակ, մինչեւ որ նրանք կորչում են սարերի ետեւում:

Կաֆկայի կարճ պատմվածքներից շատերը չափազանց առեղծվածային են, եւ սա՝ առանձնապես: Հնարավոր է՝ Կաֆկան պարզապես ուզում էր ասել, որ ածուխի որոնումները ցուրտ գիշերով պատերազմի ժամանակ վերածվում են ճամփորդող ասպետի արկածի՝ անապատով քարավանի անցման կամ թռիչքի՝ կախարդական գորգով: Սակայն դատարկ դույլի պատկերը որպես զրկանքների ու որոնումների սիմվոլ, որ մարդուն բարձրացնում է մարդկանցից կախվածությունից ու նրանց էզոիզմից վեր եւ դնում է մի իրավիճակի մեջ, որում համեստ խնդրանքը չի կարող կատարվել՝ այդ ամենը անվերջանալի հղումների համար հնարավորություններ է բացում:

Թարգմանիչ՝  
Վարդան ՖերեՇեթՅԱՆ





## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԼՈՎԵՆԱԿԱՆ ՊՈԵԶԻԱ

### ԱԴԱ ՄԿԵՈՒ

#### ՔԱՂՅՐ ԿՅԱՆՔ

«Կարոտում եմ քեզ, թեև ինձ չես սիրում»,  
Այս գիշեր քնքշորեն մի բան ասացիր - մի բան, որ ուրիշ ոչ ոք չգիտի:  
Դու ինձ ստեցիր, բայց քո ստերը ինձ թե եմ տալիս,  
Գիտեմ, սիրելիս, որ դա երբեք չի լինի:

Իմ սրտի միջից ուրախության ճիչ լսեցի հանկարծ,  
Ու լռեցի, որ այն արագ չմարի,  
Ամեն բացվող օր փողոցի միջով քո քայլերի հետքով կզնամ -  
Ախ, ինչ բերկրանք էր, ինչ երանի էր, երբ դու կողքիս էիր:

Թեև դու երբեք ինձ չես կարոտել:

#### ՔԵԶ ՀԱՍԱՐ

Իդձերս ամեն տվել եմ մենությանը.  
Արցունքներիս մեջ խեղդված՝ նրանց կրակը մարում է անդարձ.  
Քանի- քանի անգամ խոհերս քո անունն են մրմնջացել,  
Բայց դատապարտված էին արձագանքել իրենց իսկ լացին:

Մթության մեջ գերեզմանային հանգիստ ես առել:  
Այդ երկար տարիների միջով որդերը քո միակ հյուրերն են եղել:  
Երեսդ կրծել են, ճակատդ ծվատել:  
Այդ ժամանակից ի վեր խեղճ իմ ձեռքերը գուր քեզ են սպասել:

Այլևս դառը արցունք չեմ թափում: Երբեմն միայնակ ժամերի միջով  
ձեռքերս սահում են իմ հոգնած դեմքով:  
Ես մի ծաղկաման եմ, ջարդված ու դեմ նետված....

Բայց թորշոմած ծաղիկների միջից սերը լսելի է դեռ:

## Գեղարմ Գարուն 2017

### ԿԻՐԻԼ ՋԼՈՔԵԿ

#### ՍԵՐ ԵՐԿՈՒՄԸ՝ ՄԵԿՈՒՄ

1.

Մենք՝ սիրահարներս, միշտ մեր հավատը դնում ենք անուրջների մեջ՝ թեպետ հայրենաբաղձությունն է մեզ իր ազդեցության գիրկն առնում,- հարուստ Ամերիկան՝ այս խոստումնալից երկիրը, հազվադեպ է լինում, որ խոտորում է այդ ճանապարհից:

Միջօրեին ճամփորդը կարող է ստվեր տենչալ,  
բայց ոչ երեկոյան՝ բացատի եզրին, երբ գիշերվա մեջ  
լուսնի լույսը լցնում է բացատը, եւ նրա ողջ ճամփորդության  
նպատակների իմաստը փոխել է տալիս:  
Ու դրա համար նույնպես սիրում եմ ես քեզ. անդադար  
գլխով ինձ նշան ես անում, հստակ մի երազանք ես դու ինձ ցույց տալիս  
ու պահում կայտառ քո ուժի ներքո:

Դու արեգա՞կ ես: Կայծոռի՞կ գիշերում:  
Եղիր՝ ինչ ուզում ես. ես, միեւնոյն է, կանդրադարձնեմ լույսդ:  
Ինձ համար էլ հոգ չէ, թե ինչն է իրական:

2.

Փորձելով բուժել սերը մենությամբ, զու՞ր,  
տեսնում ես մեկին՝ սիրահարված իր տրտում վիճակին,  
եւ ցավն իր տեսնում է կարծես ցուցահանդեսում,  
եւ ստվերն իր կորցնում է նրա շվաքում:

Այն ամենն, ինչ ապրում է, դանդաղ սահում է ցավի միջով,  
ցավի հետ մեկտեղ ամպերն է ելնում,  
նրանց նվիրական ցանկությունն է՝ լուռ սիրո տոն կերտելն է,  
լսելի միայն բարձր շշուճով:

Սպիտակ վերքեր ես չեմ սիրում, դրանք վերքեր չեն,  
արյունը դրանց վիրակապի միջով ճամփա չի գտնում,  
որ սրտերը նուրբ լցնի հարատեւ կարեկցանքով:

Բայց վերքից հետո չես կարող տեսնել,  
այնտեղ երբեմն մի սարսափելի սպի է մնում.  
ամենագոր ցավը գալիս է սիրուց, որ այնտեղ չկա:

3.

Ամենախոր ցավը գալիս է սիրուց, որ այնտեղ չէ էլ,

## Գեղարմ Գարուն 2017

քանի որ այն կար ու եղել է չքնադ,  
եւ հիշողությունը կառչում է դրանից՝ ինչպես խոստումից -  
գերագույն խոստում -  
մինչ ավարտը մեր ժամանակի:

Երկու մարնիմների ձուլումը մեկում  
տվեց այն ամբողջ սերը, որ կարող էր երբեւէ լինել. մեկս մյուսին ավելի շատ քան  
որեւէ պինդ կապ, մենք երկուսով դարձանք մեր անփոփ հավերժությունը:

Մենք հեշտությամբ բարձրացանք բարձրաբերձ լեռը,  
մեկս մյուսին քաջալերելը, որ արիացնում է թույլին,  
մութ ձորում վազող կայտառ մի գետ է:

Մենք մեր սեփական փակ շրջանակն էինք  
լրիվ, ամբողջական, լույսը որ վառվում է  
ներքուստ եւ նման է Աստծո  
երրորդության առեղծվածին:

### ՔԱՋԵԹԱՆ ՔՈՎԻԿ

#### ԳՈՒՇԱԿԸ

Հավատում էի՝ դու տերն էիր տերերի, ով ոչնչից աշխարհն էր գերել,  
արեւին ու լուսնին տիրել, արարողների միջից մի բանաստեղծ որպես՝  
երկար ժամանակ ծառայել եմ քեզ, հնազանդորեն ու հավատարիմ,  
հիմա ես փշրում եմ նավերը քո,  
դու գուշակն էիր թովիչ-կախարդական հեքիաթների,  
դու եփում էիր կեղծ ոսկի, ինչպես դա քեզնից առաջ  
անում էին քեզ նման արծաթեփներն ու ոսկեեղծները:  
Ես, աշակերտս գուշակիդ,  
կախարդական հեքիաթներ չեմ սիրում:  
Դու չարիք էիր ինձ համար:  
Իմ լեզուն լռությունից հաշմանդամ է դարձել:  
Բայց հոգ մի անի,  
այն կրկին կխոսի  
ես քերելով դուրս կհանեմ նեխումն ու կմաքրեմ խոսքերն այն:  
Հետո դու էլ ինձ կլսես սիրով:  
Իմ աշակերտության վերջը եկել է:

#### ՍԵՎ ԱՂՈԹՔ

Արի, սեւ խոսք, վերջին  
հուսահատ կրքոտ ձայնը

## Գեղարմ Գարուն 2017

Իմ խղճի ծայրին,  
երկչոտ ու խիզախ ձայնը  
սիրո ու զայրույթի, խոսքը մաքուր որպես կրակ, խոսքն անելի, լսիր,  
դրանք հարձակման նշան են տալիս:

Մենակ եմ ես մտահոգ գիշերվա անդունդի եզրին: Ոսկե նիզակ կամ  
ոսկե վահան այլևս չունեմ:

Հորդանների բազմությունը  
գրոհում են ինձ  
ազահ ու մռայլ:  
Ահա թե ինչու կոչ եմ անում քեզ, խոսք վիատության,  
ու դուրս եմ քաշում քեզ իմ պատյանից,  
Իմ վերջին սայր,  
ահա թե ինչու համբուրում եմ քեզ,  
մերկացած սեւ սուր:

Սեւ խոսք, մենք զինվում ենք  
սեւ աստվածների դեմ:  
Ես հանգիստ կնայեմ նրանց երեսին:

Ես քեզ կթողնեմ նրանց ճակատին, կթողնեմ համր այնտեղ:  
Որովհետեւ այլևս երբեք չեմ խոսի նրանց հետ, որ արժանի չեմ եւ ոչ մի խոսքի՝  
լինի սպիտակ թե սեւ:

### ԻՈՍԻՖ ՕՍՏԻ

ՄԵՐ ՍԻՐՈ ՊԱՐՏԵՁ , ԻՄ ՍԵՐ, ԻՄ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԼԵՁՎԻ  
ԲԱՌԱՐԱՆ ՈՒ ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր սիրո պարտեզը, իմ սերը, իմ բանաստեղծական լեզվի բառարանն ու  
քերականությունն է... պարտեզ ես լուռ մտնում ու քայլում եմ իմ կողմը,  
ասես լույսն արշալույսի գույների ու բուրմունքի իմ բառարանն է:  
Երբ դու բոկոտն ճեմում ես նրա միջով, զգուշորեն որ ծիղը  
խոտի չվնասես որ կորացել է վաղորդյան ցողի ծանրության տակ,  
ծաղիկների ողջ ծաղկաթերթերը քո կողմն են թեքում գունագեղ

գլխիկներն իրենց

ասելու ողջույն իրենց բուրմունքով:

Ինձ մոտենալիս աչքերում քո ես տեսնում եմ վաղենիկի արտացոլումը... Քո  
աչքերը, ինչպես կվակայեին բանաստեղծներից շատերը, կապույտ չեն հանց  
երկինքը ջինջ կամ հիրիկի պես, բայց փոխարենը, ինձ համար հիրիկներն ու  
երկինքը ջինջ կապույտ են քո աչքերի պես: Ու ինձ համար, մարմինը քո մերկ  
ծաղիկների պես չի բուրում, այլ փոխարենը ծաղիկներն են բուրում քո բաց  
մարմնի պես... Մեր սիրո պարտեզը, իմ սերը բառարանն է ու

## Գեղարմ Գարուն 2017

քերականությունը իմ պոետիկ լեզվի... Նրա գոյականներն են ծառերը, թփերն ու ծաղիկները, որ տնկել ենք միասին: Նրա ածականներն են դրանց ձեռքերն ու գույները: Իսկ դերանուններն են նրանց մյուս, թաքնված դեմքերը: Բայերն ամպերն են, որ ձգվում են երկինքն ի վեր, կատունները, որ վազում են պարտեզի միջով ու չղջիկները, որ երեկոյան թռչում են մեր գլխավերեւում: Իսկ թվական անունները աստղերն են, մրջյունները... Ստորակետը՝ քո արտեսանունքները:

Հարցական նշանը օձն է արեւահարվող: Բացականչականը գերեզմանոցի մոտ խոյացող անուշահոտ կիպարիսն է: Բազմակետը՝ էլեկտրական լարի վրայի երեք ծիծեռնակները: Միջակետը՝ քո աչքերի բիբերը: Վերջակետը մահն է, որին առերեսվում ենք... Մեր սիրո պարտեզ, իմ սեր, բանաստեղծական լեզվի իմ բառարան ու քերականություն, որ կրում է ռիթմը մեր բաբախող սրտերի, մեր արագացված շնչառություն ու մեր անդադար քրտնող մարմինների արագ շարժումներ, որ գրկախառնվում ու համբուրում են իրար:

### ՆԻԿՈ ԳՐԱՖԵՆԱՈՒԵՐ

#### ՍԱՐՍԱՓ

Ձայները քուն են մտնում անջրանցիկ ջրերի սեւ փայլությամբ: Ժամանակ առ ժամանակ նրանք ծփալով աղմուկ են հանում ասես մարդ է քնից արթնանում: Սովերները գժտությամբ իրար են խառնվում:

Դու կռանում ես մտքերիդ վրա ինչպես երակների արյունահոս: Վարսերդ քամուց խոտի պես ծլում են երբ դու ձեռքերդ շփում ու ծանր հետում ես սարսափի սերմնարանում որ բռնկվում է գիշերվա կեսին:

Դու միայնակ ես եւ ժամանակը օղակում է քեզ ոնց օղակներ ծառի:

Խոր արձագանքի պես աշխարհը կանգնում է քո դեմ:

Դու գնում ես ու քո երեկոյան պատկերը

կամաց-կամաց մթնում է՝ սուզվելով մռռացության մեջ:

Լռությունը խորտակվում է մեր հպումից:

Փռչին ոտնամատների տակի սեղմում է նրա բռունցներն անհաշիվ:

Յասուսը լիզում է այդ ցցվող իժին որ սպառնում է քեզ

ասես տանդ մեջ մատն աստծո:

#### ԳՅՈՒՂ

Իմ առջեւ, բայց անորոշ, ցավոտ մի գյուղ է բացվում:

Խշշացող անտառի եզրին երեսում է ջահել հնձվորուհին:

Ինչպես դադարից հետո իմաստն է իրերի սրվում:

Ամառը կկվի կանչի շուրջ է նվազում տավիղն իր:

## Գեղարմ Գարուն 2017

Աչքերը կրկնում են ամենն այն չնչին, ինչ որսում են մոռացության մեջ:  
Թռչունները նրանց բախվելիս հրաժարվում են իրենց անուններից:  
Նրանց աղաղակները մնում են կախված լռության մեջ հանց ճոճանակ:  
Սեւագրության մեջ ընդօրինակում են աշխարհն այդ անասելի իր էությամբ:

Չի կարող մահվան հետ ընկերացած ձեռքն սանձել քամիները այդ:  
Տարածված հոտերը գուշակում են նվազ բերքի մասին:  
Ով դուրս է գալիս այս տնից նսեմանում է անամոթի պես:  
Այս գյուղում ստվերը հոր նգովքի պես հետապնդում է մարդուն:

### ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱԲԿՈՎԻՉ

#### ՄՈՒՅԼ ԶՐԱՂԱՑՊԱՆԸ

1

Ես ծարավ եմ: Ճահճի ջուրը դառն է:  
Ուռին աչքն իր տնկել է ինձ վրա:  
Մեզը շարժվում է: Ժամանակն է ճահճի կրակը վառել  
որ այրի ոտքերն իմ մերկ, աչքերն իմ մրմռացնի:  
Ջուրը կուլ է տալիս ճղավոցը, ես խմում եմ այդ ջուրը:  
Շատ տարիներ առաջ դրանք խեղդեցին ինձ, երբ ես  
անհավատարիմ էի ամուսնուս:

2

Մռայլ ջրաղացպանը դառնը հնգագիծ է գծում ու քուն մտնում: Ներս գալ ոչ որ  
չի կարող:  
Ներսում, տաքությունը խավարն է խառնում.  
չարիք դրոշմ-աղացը պտտվում է, ամբողջ  
գիշեր դրսում աղացի անիվն են հեծնում,  
թաց մամռից թիկնոց են հյուսում:  
Շատ վաղուց ես դադարել էի ապրել: Հիմա, ասա ինձ, մռայլ ջրաղացպան,  
ի՞նչ ես երագում:

3

Երբ ջրի քնած մակերեսին առավոտը  
իր ճիչն է ճոճում, մտրակով խփում, խելակորույս փախչում են  
ջրառնետի միջով, ճչացնելով նրան, ուռենու միջով  
դողացնելով նրան, ես վագում եմ մացառների միջով,  
ես ջուր եմ, ես ուլունք եմ, պղպջակ եմ, գոլորշի եմ  
- ի վերջո, ես միտքն եմ արտառոց որ ջրաղացպանը խոժոռ  
ճակատամուտքին ոտքը դնելիս ավլում թափում է իր ձեռքերով:

## Գեղարմ Գարուն 2017

### ՍԵՐՍԵՐ

1

Մի լղար զագան բացատի միջով իր որսն է անում:  
Նա ձագ է կրում  
որ չի ծնվելու:  
Խատուտիկը բացատում  
շառագունում է վառ  
կաթնային սերմերով:  
Արտատվոր աչքերով մի աղջիկ նստած է բացատում  
- նրա աչքերը այլ կերպ են տեսնում, նրա աչքերը  
ուրիշ ինչ-որ տեղ են նայում: Նա փչում է  
մոլախտտերին ու ծիծաղում է, ծիծաղում ու իր  
հագարավոր չծնված երեխաներին քամուն է տալիս:

2

Քամի է բարձրանում, կակաչը փչում է,  
թողնելով առէջները սեւ:  
Դաշտը սեւ է: Կեսօրվա հոտ է գալիս:  
Երկարավուն, սեւ թռչունները քայլում են արահետով  
սպաղուն կոկ փետուրներով:  
Ամեն մեկը իր փետուրների մեջ  
մի մեռած սերմ է տանում  
որ տնկի նոճու կողքին:  
Հետո նրանք այիտ թառեն քարերի մեջ  
ու երկար ժամանակ սպասեն:  
Գարնանը քամին ամենուր կափռի  
նրանց երկար սեւ փետուրները:

3

Երեկոն բացվում է դանդաղ:  
Լուսինն այդ գիշերվա համար մի արքայադուստր է վերցնում:  
Ձեռքը նրա իրանն ի վեր է պարզում:  
Թափանցիկ մի սերմ կաթում է նրա մատից,  
որը գոց աչքերի տակ ուռճանում դառնում է  
պաղ շողշողացող մի քուն:  
Դրսում դարավոր նզովքը փողոցների վրա  
գրգռված սերմեր է ցանում:  
Այստեղից հեռու խավարի ամենախոր  
քարայրում անհայտ սեւ սերմեր են ծլում:

# Գեղարմ Գարուն 2017

## ԱԼԵՇ ԴԵԲԵԼՅԱԿ

### ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԷԼԵԳԻԱՆԵՐ

Հող: Կարմիր հող: Ու բարձր խոտ որչափ որ կարող ես տեսնել: Դու սեղմված ես գետնին: Թաքնված անցանկալի հայացքներից:  
Կատարյալ հանգիստ: Ականջիդ մոտ՝ լոր: Քա՞ր ես դու դառնում:  
Ոչ. պարզապես դու լսում ես, թե ինչպես են ստվերներն ընկնում ցորենի արտերին: Քրտինքի մի կաթիլ - մի արցունք - սահում է քո այտերն ի վար:  
Հեռվում լեռն է խոյանում քնկոտ: Լերկ: Առանց ծառ կամ ծաղիկ: Դրոշմված սրածայր հորիզոնում: Ամպերի մեջ թաղված նրա գագաթին արու եղջերու որսող որսկան շների ցեղերը թափառում են դարեդար: Մայր մտնող արեւը փայլատակում է: Բոլոր այս նշաններն ասում են՝ հնդկական ամռանը հրաժեշտ է տալիս: Եթե ես լավ եմ լսում, քո շուրթերից ոչինչ դուրս չի գալիս: Դու հա՞մը ես: Կու՞յր: Գուցե հիշողությունների միջոցով դու փնտրում ես ձեռքը բոլոր արտատիպերի - ոտնահետքեր ձյան մեջ, հին երգեր ու կոնյակ երեկոյան, փոքր սպիտակ քաղաքներ՝ ամրոցներով ու փոքրիկ աշտարակներով, կիրակնօրյա կեսօրվա հոտ, գետակներ գրանիտ կամուրջների տակ հոսող: Այստեղ, հնագույն ցեղերի ազատ երկնքի տակ, որի մասին դուք երբեւէ չեք լսել, կավարտեք ձեր ճանապարհը:  
Ես, անշուշտ, միշտ վերադառնում եմ: Դուք՝ չեք վերադառնա: Ու դա է հենց տարբերությունը:

### ԱՐՅՈՒՆՔՆԵՐԻ ԼՈՐԴԵՐԸ

Թող լինի ինչ լինելու է. թող ականջներդ երբեք չլսեն ագռավների թեւերի թափահարումը որ տարածվում է աշտարակի տանիքի խողովակի վրայով՝ երկնային սրգի նման: Որը փտում է լռության մեջ: Քայլավորները քո թող չափեն անհատակ խորքը ակադեմիայի նախասենյակի. այստեղ հեռավոր դեսպանատներից լրտեսների շունչը աճեցնում է հնագույն դրախման: Երազանքն անսահման հողերի մասին, ուր նույն անունը արտասանվում է նույնանման ահով: Թող թուրդ չորանա բյուրեղ դառնա: Թող ձեռքերը քո ոչ որի չփաղաքչեն: Թող հերոսները որ կտրել-անցել են բարձունքներն Իլիրիան ու պառկած են տաք ծովի մոտ ավազաթմբի մեջ գուշակեն քո սպազան:  
Անխուսափելիորեն մենակ: Բարձրացող ալիքը թող սրբի տանի ավերակներն այն որ թողել են գորքերն իրենց ետեւից: Հրամանատարները թող մահացու լրջությամբ լսեն հիշողության արձակած հրամանները որ մոմի պես խտանում են: Դուք դրանք կգործադրեք, որ դրոշմ դնեք ցավի ժառանգության վրա, որ մշտապես աճում է արքունական պոետների աշխատություններում: Նրանք ձեզ հետ կալանան դեպի բաժանած կղզու ծովեզրը: Շատ ուշ կլինի երբ դուք չոքեք դաժան աստղի տակ:

Թարգմանությունները անգլերեն տարբերակից՝  
Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆԻ



**Բորխեսի անունը**

**Անդրեյ ԿՐԱՄՆՅԱՇՉԻՆ**

/Ուկրաինա/

**ԷԿՈ-ԼՈԳԻԱ,  
ԷԿՈ-ՆՈՍԻԱ**

**Ու՞մ է թաքցնում Բորխեսը  
Ումքերտո էկոյի  
«Վարդի անունը» վեպում**



Առաջին հայացքից «Վարդի անունը» վեպի կերպարներից ամենակարևորը կույր գրադարանավար Խորխեսի կերպարն է: Դա վեպի դետեկտիվ ու առասպելաբանական կողմի՝ գրադարան-լաբիրինթոսի Մինոտավր-մարդասպանն է, դա բնագրի աստվածաբանական հարթության Սատանան է (Վիլհելմ Բասկերվիլսկու ներշնչմամբ), դա ազելաստն է (եթե օգտագործենք բախտինյան ամենաօգտագործվող բառը) ու «ծիծաղ ու մեղք» կոչված գաղափարական լեյտմոտիվի ծիծաղի երդվյալ թշնամին:

Իմաստների բոլոր այդ խտացումը չափազանց շատ է մեկ տեքստային կերպարի համար ու չափազանց քիչ, որպեսզի այն կրի Բորխեսի անունը: Խորխես: Իսպանացի: Գրադարանավար: Կույր: Մի տեսակ չափազանց կշռոտ, կոպիտ ու տեսանելի է ամեն ինչ: Այն դեպքում, երբ էկոն ցանկանար կրել կամ նմանակել լաբիրինթոսների ու գրադարանների չափազանցումը Բորխեսի մոտ, նա կաներ դա էկոյավարի տնտեսելով, նրբանկատորեն, երկու-երեք բնորոշ մանրամասնով, ակնարկով:

Սակայն ակնարկի փոխարեն վեպում ճչացող ցուցիչներ են, և տպավորություն է ստեղծվում, որ դրանք ոչ այնքան մատնանշում են Բորխեսին, որքան թաքցնում են մեզնից մեկ ուրիշին: Ընդ որում, ինքը՝ Բորխեսը, էկոյին վեպում պետք չէ: Նրա նովելների միջով չի կարդացվում «Վարդի անունը»: Չի նշմարվում բորխեսյան ավանդույթը: Բորխեսը բացակայում է նաև էկոյի գրական ուսուցիչների մեջ. Մանձոնի, Ջոյս, Դոստոևսկի, Ռաբլե, բայց ոչ Բորխես:

## Գեղարմ Գարուն 2017

Եվ ոչ միայն ընթերցողները, տարակուսում է և մասնագետ-բանասերը. «Վեպի մեկնաբանները գրադարանի խորհրդանիշերը կապում են անունների ու ատրիբուտների զվարճալի խաղի հետ (խոստովանեմ, ըստ էության, ինձ ոչ այնքան հասկանալի), որը ստիպում է ինչ-որ կերպ համադրել խորխեին մեծ գրող Բորխեսի հետ: Յնարավոր է՝ այդ (տվյալ դեպքում ավերից դուրս եկող ու ցանկացած քննադատական մեկնաբանություններ հանդուժող) խաղը Էկոյին պետք եկավ, որպեսզի առավել հստակությամբ բացահայտի խորխեի իսպանալեզու սկիզբը» (Վյաչեսլավ Վ. Իվանով. «Յուր և վարդ»):

Սակայն «խորխե-Իսպանիա-Բորխեսի իսպանական արմատներ-Բորխեսը» չափազանց երկար զուգակցական շղթա է: Ընդ որում, խորխեն ամենատարածված իսպանական անունը չէ: Լավ չէ, եթե տարակուսում է ընթերցողը, ավելի վատ, եթե տարակուսում է ուսումնասիրողը, բայց շատ ավելի վատ է, եթե տարակուսանք է հայտնում ինքը՝ հեղինակը, ինչպես Էկոն «Վարդի անունի» լուսանցքային գրառումներում. «Բոլորն ինձ հարցնում են, թե ինչն է իմ խորխեն և արտաքնապես, և անունով իսկը Բորխեսը, և ինչն է իմ Բորխեսն այդքան վատը: Ես ինքս էլ չգիտեմ: Ինձ կույր էր պետք գրադարանը հսկելու համար: Դա շահեկան վիպական իրավիճակ էր թվում ինձ: Սակայն գրադարանն ու կույրը միասին, որ կողմից էլ նայես, ստացվում է Բորխես»:

Դե, հա, ճիշտ այնպես, ինչպես կույրն ու դաշնամուրը միասին ստացվում է Սթիվի Ուանդեր, իսկ կույրն ու բաղը՝ Պանիկոլսկի: Ըստ երևույթին, զգալով, որ այլանդակության աստիճան պարզունակ է դարձնում իրավիճակը, Էկոն տեղնուտեղը բացականչում է. «Եվ խնդրում եմ իմ բառերը չփոթեք այն ոգով իդեալիստական դա-

տարկախոսության հետ, որ իբր կերպարները ապրում են ինքնուրույն կյանքով, իսկ հեղինակը միայն պայծառատեսորեն արձանագրում է այն ամենը, ինչ որ նրանք կատարում են: Դա ավարտական շարադրությունից բարբաջանք է: Խոսքն ուրիշ բանի մասին է: Կերպարները պարտավոր են ենթարկվել այն աշխարհի օրենքներին, որում ապրում են: Այսինքն՝ հեղինակը սեփական նախապայմանների գերին է»:

Գուցե տեքստը զանգվածային և էլիտար ընթերցողներին ուղղելու հետմոդեռնիստական սկզբունքներին համաձայն, Էկոն որոշեց մտավորական ընթերցողին ուրախացնել ճանաչողության ինսայտով: Բայց ինչո՞ւմ է ուրախությունը խորխե-Բորխեսից:

Էկոն խորամանկում է, խաղանենգում, ծաղրում: Լաբիրինթոսի կույր գրադարանավարի միայն անունն է Բորխես, նա ինքը Բորխեսը չէ, ի տարբերություն «Վարդի անվան» խորխեի, ոչ ոքի չի սպանել ու գրադարան չի հրդեհել: Բորխեսի հումորի զգացումն էլ էր տեղը:

Յետևաբար, խորխե-Բորխեսը հենացնում է մեզ մեկ ուրիշից: Վեպի ոգուն, նրա միջոցով փոխանցված XIV դարի գաղափարական մթնոլորտին, որտեղ մի բևեռում սուր աստվածաբանական կառույցներ են, իսկ մյուսում՝ պարահանդես, իսկապես հարազատ մեկից:

### Վարդի անունը

Իսկն ասած, արդեն նրա անվանումը պիտի զգուշացներ, որ Բորխեսն առանց հաղթաթղթերի խաղի ջոկեր է: Ծավալուն վեպը, որում վարդի մասին ոչ մի անգամ չի հիշատակվում, կոչվում է «Վարդի անունը»: «Լուսանցքային գրառումներում...» էկոն պարզաբանում է. «Վերնագրի «Վարդի անունը» գրեթե պատահամբ է ծագել, և ինձ

## Գեղարմ Գարուն 2017

հարմար էր, որովհետև վարդը, որպես խորհրդանիշ, այնքան հազեցած է իմաստներով, որ գրեթե իմաստ չունի. վարդն առեղծվածային է, եւ քնքուշ վարդն ավելի երկար չապրեց, քան վարդը, Կարմիր ու Սպիտակ վարդերի պատերազմը, վարդը վարդ է, ռոզենկերեյցերներ, վարդը վարդի բուրմունք ունի, անգամ եթե նրան վարդ չկոչես. *Rosa fresca avtentissima*. Անվանումն, ինչպես և նախատեսված էր, ապակողմնորոշում է ընթերցողին»:

Վեպուն վարդի մասին խոսք անգամ չկա: Իրականում միայն ընթերցողին ապակողմնորոշելու համար ծառայող վարդի փուլիչկ-նշանի հետևում կանգնած է գրադարան-լաբիրինթոսը:

Սովոր այն բանին, որ բնագրի իմաստը վերնագրի մեջ է, կսկսի վարդ փնտրել ամբողջ վեպով մեկ, մերթնդները էվրիկա հայտնաբերելով այնտեղ, որտեղ այն չկա, եւ ուրախանալով սեփական հնարամտությամբ: Նույն կերպ կխաբվի նա, ով կփորձի կարդալ վեպը Բորխեսի միջոցով. նրա դեմ կհառնեն լաբիրինթոսներ, հայելիներ, այգիներ ու մինոտավրներ, սակայն Էկոն անխոչորեն կխաբի նրան, քանզի ասված է. «Եթե մեկը ձեզ ասի՝ «ահա այստեղ է Բորխեսը» կամ «ահա այնտեղ» - մի՛ հավատացեք»:

Սակայն հավատում ենք, հավատում: Անգամ «Иностранная литература» ամսագրի խմբագրությունը վեպի առաջին հրապարակման ժամանակ՝ 1988 թվականին, նույն համարում տեղադրել էր վեպի ավարտը եւ «Վարդի անունի» լուսանցքային նշումները Բորխեսի տարբեր տարիների հարցազրույցների հետ, որտեղ նա խոստովանում էր. «Ես անչափ հոգնել եմ լաբիրինթոսներից, վագրերից, հայելիներից... Մանավանդ, երբ դրանք օգտագործում են ուրիշները»: Եվ այսպես, կան Բորխեսի անունը, բորխեսյան բնորոշ

հատկանիշները, սակայն չկա գեղարվեստական աշխարհի ու գաղափարների զարգացման ժառանգորդությունը: Կա կարծրատիպերի ու մականունների խաղը, բայց չկա զուգորդավորման դաշտը: Կան *կոնոտացիոն* նշաններ, սակայն բացակայում է առանցքը:

Արդյոք, ո՞վ է թաքնված Բորխեսի նշանակալի կերպարի հետևում: Ու՞մ է թաքցնում Էկոն, խաղալով ընթերցողի հետ: Նրան, ում աշակերտն է իրեն համարում Էկոն: Նրան, ումից սովորել է պարահանդեսային գեղագիտությունը: Նրան, ով պարահանդեսայնացրել է հոմերոսյան էպոսը ու իր վեպն անվանել «մարդկային մարմնի էպոս»: Նրան, ով XX դարի գրականության համար մշակել է իր իսկ կողմից «հսկայաբանություն» անվանված նմանակման տեխնիկան, և ով հետմոդեռնիզմի ի հայտ գալուց 30 տարի առաջ գրել է «Ուլիսը»՝ կառուցված «բարձր» գրականության կողմից «ցածր» ժանրերի շահագործման սկզբունքի վրա: Նրան, ում ինքը Էկոն նվիրել է «Ջոյսի պոետիկան» տրակտատը (1966):

### Բախտին

Եթե վարդի անունը Էկոյի վեպում լաբիրինթոս է, ապա ազգանունը՝ հաստատ կառնավալ է: Ե՛վ ծիծաղի աստվածաբանական կարգադրվածության մոտիվը, և՛ բեմեդիկտականների, ֆրանցիսկյանների, դոմինիկյանների, մինորիտականների, առաքելականների, կիսաեղբայրների, բոգոմիլականների *danse macabre*-ն, և «ապոկալիպսյան» սպանությունների սյուժեն, և՛ Ռաբլեի ու «Կապրիանյան խնջույքի» մեջբերումները, ինչ-ինչ, բայց Էկոյի մոտ կառնավալը չի թաքցվում ու չի ծածկագրվում:

Վլաչեսլավ Վս. Իվանովը Էկոյի հետաքրքրությունը կառնավալի հանդեպ

## Գեղարմ Գարուն 2017

բացատրում է Բախտինի «Ֆրանսուա Ռաբլեի և Միջնադարի ու Վերածննդի ժողովրդական մշակույթի» իտալերեն թարգմանությամբ, որ լույս էր տեսել Էկոյի վեպի ավարտից մեկ տարի առաջ: Այո, Էկոն ամենայն հավանականությամբ կարդացել էր Բախտինին, բայց ինչո՞ւ այդքան հեռու գնալ կառնավալի փնտրտուքներում:

Ձոյսի թարգմանիչ և ուսումնասիրող Սերգեյ Խորոժին խոսում է որպես ապացույցներ չպահանջող փաստի մասին. «Ինչ վերաբերում է ուշ շրջանի Ձոյսին, ապա, անկասկած, բախտինաբլեական կառնավալային աշխարհին նրա մերձության նկատառումները լիովին հիմնավորված են... «Ուլիսի» ուշ դրվագներում պատկերվող իրականությունը հարուստ է կառնավալային միջավայրին բնորոշ գծերով, իսկ այդ դրվագների պոետիկան խորապես կառնավալացված է: Դժվար չէ վեպում գտնել կառնավալային օրինակելի տեսարաններ, որտեղ իսկորեն, ըստ Բախտինի վերարտադրված են կառնավալային իրականության դասական տարրերը»: Սակայն անգամ դա չէ «Ուլիսի» արխիտեկտոնիկայի էությունը, այլ այն, որ բնագիրը փոխանցում է կառնավալի և ոգին, և նրա տառը:

Ձոյսը, պարզ է, ծանոթ չէր Բախտինի հայեցակարգին, իսկ ահա Բախտինը կարդացել էր Ձոյսին: Ձոյսի մասին հիշատակություն կա Բախտինի ամենահայտնի՝ «Դոստոևսկու պոետիկայի խնդիրները» գրքում, որտեղ ոչ մի կերպ չդրսևորելով իր դիրքորոշումը եւ չմեկնաբանելով ուրիշի խոսքերը (կամ «ուրիշ խոսքը», որպեսզի լրիվ ըստ Բախտինի լինի), հեղինակը մեջբերում է Վալերի Կիրպոտինի «Ֆ.Ս.Դոստոևսկի» գրքից. «Ի տարբերություն այլանդակված դեկադենտական պսիխոլոգիզմի, ինչպես Ձոյսի և Պրուստի մոտ, որը նշանավորում է բուրժուական գրական

նության մայրամուտն ու վախճանը, Դոստոևսկու պսիխոլոգիզմը նրա դրական ստեղծագործություններում իրական է և ոչ թե սուբյեկտիվ»:

Իհարկե, Բախտինը հազիվ թե Ձոյսին համարեր այլանդակ, ավելի շուտ Կիրպոտինի մեջբերումը նրան էր փաթաթվել առավելս *no lens*, քան *volens*, հակառակ դեպքում ինչու պիտի «Ֆլոբերի մասին» (թվագրվող մոտավորապես 1944-1945թվականներով և առաջին անգամ լույս ընծայված 1996թ., այսինքն Խորոժին այն չէր կարող կարդալ 1995թ.) աշխատության մեջ գրեր. «... կգտնենք և այն երկու ուղղությունների տարրերը, որոնցով վեպը հասել է իր բարձունքներին՝ Պրուստի ու առանձնապես Ջեյմս Ձոյսի գիծը և Տոլստոյի ու Դոստոևսկու՝ ռուսական մեծ վեպի գիծը»:

Սակայն «Ձոյս և Բախտին» խնդրին ուղղակի անդրադարձից՝ այսինքն Ձոյսի մասին հենց Բախտինի բառերից բացի, գոյություն ունի և անուղղակի անդրադարձ, որն իրավունք է տալիս պնդելու, թե Բախտինը քաջածանոթ էր իռլանդական վիպասանի ստեղծագործունեությանը: Պահպանվել է Ձոյսի մասին ծավալուն գիրք գրելու վերաբերյալ Բախտինի ընկեր Լև Պունայանսկու 1932թ. պատվերը: Իսկ 1930 թվականին Պունայանսկին «ժամանակակից Արևմուտքի և Ամերիկայի գրականությունը» գիրքը տպագրելու մերժում ստացավ, այն վերամշակման ենթարկելու անհրաժեշտության պատրվակով:

### Ձոյսի անունը

«Վարդի անունը» վեպի կառնավալը ոչ միայն գաղափարական լեյտմոտիվ է, այլև խոսքի կազմակերպման միջոց, դիսկուրս: Արդյոք կարո՞ղ էր Էկոն կառնավալային վեպում ընդհանրացնել

## Գեղարմ Գարուն 2017

կառնավախին բնորոշ բոլոր հատկանիշները կոնկրետ պատմողական ատյանում: Եվ եթե այո, ո՞ր պատմողական ատյանն է առավելապես հարմար Ջոյսին ու նրա գեղարվեստական աշխարհին:

Վեպում Ջոյսի դերը, առաջին հայացքից, հարմար է բոլորին. և լոգիկ-դեդուկտիկ ինկվիզիտոր Վիլիելմ Բասկերվիլսին, և նարատոր Ադսոն Մելսկին (կառնավախ-հետաքննությունը փոխանցված են նրա աչքերով ու շուրթերով), և իմաստուն Ուբերտին Կազալսկին, և ոչ այն է խելառ, ոչ այն է ձևացնող Ալինարդ Գրոտաֆերադսկին, բոլորն էլ արժանի կերպարներ են: Սակայն մութ սենյակի ո՞ր անկյունում մենք առաջին հերթին կփնտրեինք սև կատվին: Ճիշտ է, ամենուրեք: Ներկայացուցչական ո՞ր բնութագրերը պետք է ունենա Ջոյսի կերպարի կրողը: Երևի նույնը, ինչ որ Ջոյսը. մեծագույն գիտակը, մանրագնին ոճաբանը, արհեստավարժը, վարպետը (արձակի գրոսմայստերը), կառուցվածքների ու կոմպոզիցիաների տրամաբանը, պոլիգլոտը: Լավ կլիներ: Իսկ ավելի լավ կլիներ, որ նրան կոչեին Ջեյմս, ծագումով լիներ Իբերնիայից (այդ բնութագիրը համընկնում է Վիլիելմ Բասկերվիլսցուն, սակայն «ցուրտ է, ցուրտ»), հոգեհանգստի ծիսակարգային խորհուրդի մասին տրակտատ կգրեր կամ գոնե հոմերոսյան էպոսը կուսումնասիրեր: Բայց ուղղակի ցուցիչները, մենք հիշում ենք, Էկոն արդեն օգտագործել է Խորխեի խաբուսիկ կերպարում: Իսկ նրա համար ամենաթանկ կերպարը, ըստ ինվերսիայի՝ կառնավախին աշխարհվերաբերմունքի կարևորագույն կանոնի, պետք է մարմնավորվի վեպի ամենազազրելի, անբարո, տգետ ու մութ կերպարի մեջ: Եվ այսպիսինը կա «Վարդի անունը» գրքում. «Մեր հետևում կանգնածը նման էր վանականի, չնայած նրա

հագի շորերը թափառականի շորերի պես կեղտոտ ու հին էին, ինչ վերաբերվում է դեմքին, ապա այն խզբզված մռութ էր հիշեցնում... Անմազ գանգ, սակայն ոչ թե ապաշխարհելու, այլ ինչ-որ թարախածոր ցանի հետևանք: Ճականտն այնքան նեղ էր, որ եթե գլուխը ճաղատ չլիներ, թավ, վայրենի հոնքերը կմիանային մազերին: Փոքրիկ, շարժուն բիբերով կլոր աչքեր, իսկ հայացքը մեկ միամիտ, մեկ չարագուշակ՝ կախված պահից: Քիթ, ես կասեի, ընդհանրապես չկար: Այնուամենայնիվ, աչքերի միջև ինչ-որ կռճիկ կար՝ թեթևակի դեպի առաջ ցցվելով ու անմիջապես վերջանալով: Դրա տակ՝ հարթ տեղում երկու սև անցքեր կային՝ թավ մազերով խոշոր քթանցքները: Այդ անցքերից դեպի բերանը տանող սպի կար: Անճոռնի, ծուռ երախը թեքված էր դեպի աջ և բացակայող վերին շրթունքի ու ներքևին՝ մսալի, դուրս ցցվածի միջև երևում էին անհարթ սև ատամները, սուր, ինչպես շան ժանիքները»:

Սալվատորը՝ իսկը անասուն՝ տոփանքի, վախի ու քաղցի բնագրների այդ կծիկը, անցյալում հանցագործնարդասպան, ապագայում՝ վեպի սահմաններից դուրս կախաղանված: Վեպի ամենանողկալի ու գարշելի կերպարը, նա, ինչպես սատանան ծխատուփից (կամ եթե, ըստ թեմայի. կառնավախին ծաղրածու և հիմար), հայտնվում է ամենամանպատեհ ժամին ու անտեղի, ինչի համար էլ հալածվում է, կնոջ համար մրցակցում է վիպասացի՝ վանական Ադսոնի հետ, և վերջապես, բոլորովին անհեթեթորեն այդ նույն կնոջ հետ ընկնում է ինկվիզիցիայի ձեռքը: Նրանից ալիքվում են դառնություններ. նրա բոլոր արարքները կործանում, ավերածությունների, ոչնչացումների սկիզբ են (որոնք, ըստ Բախտինի, դեպի վերածնունդ տանող առաջին քայլերն են), արդյունքում՝ նրա հիմարության ու վա-

## Գեղարմ Գարուն 2017

վաշտության հետևանքով վիժվում են միջդավանաբանական բանակցությունները եւ հրդեհ է բռնկվում՝ վանքը կործանվում է: Սալվատորը նպաստում է և պատանի, անմեղ Ադսոնի մեղսավոր դառնալուն:

Վեպի սյուժետային տարածության մեջ Սալվատորի կերպարը առանձնահատուկ և հսկայական է. դա միակ կերպարն է, որը կառնավալային աշխարհավերաբերմունքը միացնում է կառնավալային բառագործիքին: Եթե ուրիշների խոսքը քիչ թե շատ միօրինակ է ու ոճով հարմարեցված միջնադարյան լատիներենին, ապա Սալվատորը խոսում է սեփական լեզվով՝ սինթեզված տասնյակ լեզուների ու բարբառների բառերից: Ու չնկատել, որ նրա խոսքը հիշեցնում է ջոյսական լեզվամշակույթը, անհնար է: Վյաչեսլավ Վս. Իվանովը գրում է. «Սալվատորի խոսքում առանձնապես դժվար է փոխանցել ռոմանական լեզուների խառնուրդի յուրահատկությունը, որտեղ ես ուրվագծում եմ Էկոյի վրա ամբողջ ժամանակակից հետավանգարդի սիրած ստեղծագործության՝ Ջոյսի «Ֆինեզանի հուղարկավորության» հստակ ազդեցությունը:

Եվ պատեհ է հիշեցնում: Խորուժին «Յուղարկավորության...» մասին ասում է. «Յիմնականում այստեղ լեզուն, այնուամենայնիվ, անգլերենն է, սակայն յուրաքանչյուր արտահայտության մեջ, յուրաքանչյուր տողում առկա են բառեր, որոնք անգլերենում չկան: Սովորաբար դրանք չկան և ուրիշ ոչ մի լեզվում, դրանք Ջոյսի նորաբանություններն են: Դրանք հազարներով ու տասնյակ հազարներով են. եթե «Ուլիսուն» ընդամենը 30 հազար բառ կա, ապա «Յուղարկավորության» մեջ՝ 49 200 միայն այդպիսին, որ գործածված են միայն մեկ անգամ... Ջոյսը բառեր է վերցնում մոտավորապես 70 լեզուներից ու դրանցից կառուցում միջլեզվա-

կան կամ մուլտիլեզվական հիբրիդներ...» («Ուլիսը ռուսական հայելու մեջ»): 49 200 նորաբանություն - դա արդեն նոր լեզու է: Բաբելոն է հակառակ կողմից: Բանը չի հասնում աշտարակաշինության, գործընթացը ընդհակառակն է՝ 70 լեզուների սինթեզ մեկում: Իմաստային կապվածությունը հաճախ լսելի ու տեսանելի չէ, և նորաբանությունների մեջ որսալի են միայն հայտնի լեզուներով ծանոթ բառերի պատռիկները. այն, ինչ Ադսոնը նկատում է Սալվատորի խոսքում. «Եվ գրիչն իմ անգոր է վերարտադրելու այն կոտորատված, և եթե կարելի է պատկերացնել, բառերի էլ ավելի բաբելոնական նմանակումները...»:

Սալվատորի կերպարում աչքի է ընկնում լեզվի, բնավորության ու արտաքինի կատարյալ համահունչ լինելը: Էկոն ընթերցողին ստիպում է ընդունել Սալվատորի կոպիտ, հակասական, տարերային բնավորությունը նրա խոսքի միջոցով, խոսքը՝ արտաքինի միջոցով, արտաքինը՝ բնավորության միջոցով:

Վերևում նշվել է, որ «Վարդի անունի» մեջ Սալվատորի արտաքինին Էկոն ավելի շատ ուշադրություն է հատկացնում, քան մեկ ուրիշին: Դա, իհարկե, պատահական չէ: Արդեն վեպի առաջին էջերում Ադսոնը զգուշացնում է. «Այսուհետ սույն թերթերը չեն զբաղեցնի՝ նկարագրելով մարդկանց արտաքինը, բացի այն դեպքերի, երբ դեմքը կամ գործողությունը հանդես կգան համր, բայց պերճախոս լեզվի նշաններով»:

Սալվատորի «Մռութ» Ադսոնի համար հստակ հարաբերվում է նրա լեզվի հետ. կոտորատված քթին, սպիներին, «ծմնված երախին», անհարթ ատամների համապատասխանում են խոսքի մեջ բառերի կոտորածությունն ու ծուռումուռ լինելը:

Եթե մեկ ուրիշ էկո մեկ այլ «Վարդի

անունը» վեպում ցանկանար արտացոլել Ջոյսի կերպարը, որպես «Ուլիսի» և «Ֆիննեգամի հուղարկավորության» հեղինակի, նրա մոտ ավելի լավ չէր ստացվի, քան այն, որ ստացվեց այս էկոյի մոտ, այս «Վարդի անունի» մեջ: Ուրիշը պարզապես կվերցներ «...հուղարկավորության» կտորները, ասենք Յիսուս Քրիստոսի խաչյալ ճանապարհին վերաբերող, ու մասնատելով դրանք երկտողերի, կցրեր վեպով: Եվ ինտերտեքստն էլ պատրաստ է. ընթերցողը ցնծում է, գրականագետը շնորհի է արժանացնում, քննադատը թախծում է, եւ բոլորը գոհ են: Սակայն էկոն վերցրել է Ջոյսի բառաստեղծագործության մեխանիզմը ու վերափոխել այն XIV դարի պատանու հասկացողության միջոցով:

#### Կառնավալ

Ջոյսի գեղարվեստական աշխարհում բառաստեղծագործական կառնավալը սինթեզվում է աշխարհընկալման կառնավալի հետ. կառնավալի տառը սնվում է նրա ոգուց:

«Վարդի անունի» ամենակառնավալացված գլխում՝ «Վեցերորդ օրվա ժամը երեքը», հոգեհանգստյան երգեցողության ժամանակ Ադսոնը ննջում է ու երազ տեսնում, որը Վիլիելմ Բասկերվիլացին մեկնաբանում է որպես «Կիպրիանովյան խնջույք»՝ վաղմիջնադարյան բնագիր, ինչը Բախտինը համարում էր գրոտեսկային ավանդույթի սկիզբ, որը կառնավալային խեղաթյուրման էր ենթարկում սրբազան խորհրդանիշերը, մարմնական թեմատիկայով ստորացնելով այն մինչև անպատշաճ-զվարճալի մակարդակ: Եթե փնտրենք «Վարդի անունի» գաղափարական գազաթնակետը, ապա դա կլինի ադսոնյան երազը՝ անընդհատ լսելով «և՛ ծիծաղ, և՛ մեղք» թեմայով սխոլաստիկ բանավե-

ճեր, վանքի գիշերային, թաքուն կյանքի ականատեսը լինելով ու կորցնելով կուսությունը, Ադսոնը, որի գիտակցությունը բորբոքված է մտորումներով, տպավորություններով ու կասկածներով, երազում կառնավալային թոհուրոհ է տեսնում. «Ահա երբ մտան ու միախառնվեցին զույգ շքերթները, Վանահոր հրամանով Սողոմոնը սկսեց խնջույքի սեղանի պատրաստություն տեսնել, Յակոբն ու Անդրեյը խոտի դեզ քարշ տվին, Ադամը նստեց բոլորի դիմաց, իսկ Եվան՝ տերևների խուրձի վրա... »:

Գաղափարական ու աշխարհայացքային հակասությունների կծիկից, որում խճճվել է Ադսոնը՝ ֆրանցիսկանության, պապականության, բենեդիկտականության, դոլչիականության, ծիծաղի կողմնակիցների ու հակառակորդների, սուրբ մեղսավորների ու վերամբարձ սրբապիղծների միջև կեսկես լինելով, ելքը՝ երկինքն ու դժոխքը, հոգևորն ու երկրայինը ընդգրկող, ամեն ինչ գլխիվայր անող կառնավալն է՝ ծիծաղի ամենակուլ տարերքի մեջ:

Թվում է՝ բավական է, բայց ոչ, երազ-կառնավալի մասին Ադսոնի պատմությունը վերջանում է այս բառերով. «Ես չեի հասկանում՝ որտեղ եմ գտնվում՝ դժոխքում, թե՞ ընդհակառակը՝ դրախտում, կառուցված Սալվատորի պատկերացումներով...»: Դրանք վերջնականապես համոզում են, որ այս ամենը պարզապես կառնավալ չէ և ոչ էլ «Կապրիանյան խնջույք», և ոչ էլ «Կապրիանյան խնջույքի»՝ որպես կառնավալի ադսոնյան ընկալում, այլ «Կապրիանյան խնջույքի» ընկալում Ադսոնի կողմից, Սալվատոր-Ջոյսի կառնավալային աշխարհագրության միջոցով:

Թարգմանությունը ռուսերենից՝  
Գայանե ԲԱԽՏԱՄՅԱՆԻ

Literary translations

Slavik CHILOYAN



**EVERYTHING IS FINE**

Love isn't anything big,  
it just has  
to be consulted.  
And the consultation  
will end one day  
when the silence hits your shoulder  
and say:  
Let's go.

**EXPROMT**

I, the miserable,  
have been brought here  
by your footsteps.  
A sad intoxication –  
and  
as you see  
your footsteps  
become  
a poem...  
(There is no need  
to put any dots,  
I'm doing it for you  
to have a rest).



Գեղարմ Գալուն 2017

**THE STREETS DOGS DON'T  
ALWAYS DIE IN THE STREETS**

There was so quietly  
and so cold outdoors  
that a dog was howling.  
I came to it and asked,  
"What is there in the world?"  
"Nothing good,  
I'm looking for a place to warm".

**ONLY WITH PETROL**

I'm reading,  
"Be careful, it's painted".  
On the way I meet a friend.  
We greet.  
He talks to me of something  
but I'm still reading,  
"Be careful, it's painted".  
I reach him.  
He has been already waiting for me.  
We're walking home side by side.  
Time is being up  
but I'm still reading,  
"Be careful, it's painted".  
I get home  
and take a magazine unwittingly  
but once again  
something crawls from my mind  
into my car  
and whispers,  
"Be careful, it's painted".

\*\*\*

I haven't lost  
anything –  
neither an emotion  
nor any feeling.  
And the vodka made even from dirt  
I pour into my simple mind,  
then this dirt becomes nothing

Գեղարմ Գալուն 2017

or such  
a poem.

**FOR KOMITAS**

We didn't know  
what had you sung  
in a psychiatric hospital of Paris.  
You had changed the whimper into the cry,  
into the daily bread,  
the moaning of a patient into the song...  
And now if even Tamerlane came  
we shouldn't sob any more  
over our robbed happiness,  
we'd put a spade on his shoulder  
and made him to sing  
our national song.

**FROM OPERETTA**

I was born so  
( I think all the people do the same )  
that from the very day of my birth  
I could think but I couldn't speak  
because I didn't need doing it  
but my relatives did everything  
in order me to speak.  
And when I began to speak  
I stopped thinking;  
then I talked and talked  
I talked all day long.  
There was only one way out:  
so talking I came into the world  
where I'd been born so  
that from the very day of my birth  
I could think.  
And after all that  
you still ask me:  
“Who has come back from the under-  
world?”

## Գեղարմ Գարուն 2017

### **SAGA ABOUT THE NAME**


The names in the twentieth century  
or in the centuries at all  
are proper and common,  
proper names  
are the names  
of promontories, cities, streets, statues  
of parks, boats, cakes and so on,  
for example: Bering, Washington, Peter I  
David of Sasoun, Napoleon, Josephine etc.  
Common are the names  
which become ground,  
for example:  
the name of  
our neighbor Artash  
who came from Kars and till his death he  
always said  
“Skoro boudet Voina”\*, the machinist Karo  
who had a great honor, the patriot Hayk  
who was a conductor, one of the many  
repatriates  
of 1946, the wonderful group of the seven,  
all wandering gypsies and others.  
Notes: As all the promontories,  
cities, statues, streets, cakes  
and others  
are made from the earth  
so all the proper names become common  
ones  
and vice versa.  
So, in such a way they always revolve  
and become the Earth.

\* *“The war would soon break out”.*

Translated from Armenian by  
Christina KOCHARIAN

Նվարդ ԱԼԵԶՍԱՆՅԱՆ

«ՄԵՌՆՈՂ ՕՐՎԱ  
ՀԵՏ ՉԻ ՄԵՌՆՈՒՄ  
ՀՈՒՅՍԸ»



Անվանի գեղանկարիչ Սամվել Գաբրիելյանի բանաստեղծությունների հայտնությունը հաճելի անակնկալ էր, բայց, միաժամանակ, այդ անակնկալն արտառոց երանգներ չունեի, քանզի գեղանկարն էլ գույներով հառնող բանաստեղծություն է, որն ամեն մեկի հայացքում դառնում է նաև ուրույն մեղեդի: Չափածո գործերի շարքով նա հավակնություն չունի իր ակոսն ունենալ պոեզիայում, սակայն նրա ստեղծած բանաստեղծական պատկերները սրտի տրոփյունով՝ տաղանդավոր գեղանկարչի ձեռագրին հատուկ վրձնահարվածներ են թողին: Ս. Գաբրիելյանի արվեստում բնության այս կամ այն պատկերն ու նկարչի հույզը, ուրախությունը, թախիծը կտավին դառնում են մեկ եւ իրենց հրաշալի համադրությամբ՝ մարդուն՝ հոգու անիմանալի ճամփաներով ինքնաճանաչման տանում: Իր բանաստեղծություններն էլ, հենց իրենց համար պահած՝ գույն ու նախշով, բայցև կտավների հանգով են շարունակում գրույցն աշխարհի ու մարդու հետ, փորձելով, այս անգամ բանաստեղծության հայացքով, ընդգրկել արվեստագետի անցած ճանապարհն եւ նրա ամեն հանգրվանի թողած փորձը: Եվ բանաստեղծությունները ներկայանում են իբրև գեղանկարչի յուրատեսակ ինքնագիր, չափածո տողերն այնքան համահունչ են նրա գեղանկարչությանը, որ դրանք կարող են ուղեկցել նույնալիք հուզմունքից ծնված կտավներին: Եվ բանաստեղծությամբ, և գեղանկարչությամբ Սամվել Գաբրիելյանի մեկնել է բոլոր ժամանակների արվեստագետներին հետամուտ ինքնահաստատման գաղտնիքը, իր համար այդ խորախորհուրդն իր ստեղծած աշխարհն է՝ գունեղ ու ապրեցնող: Ս. Գաբրիելյանի համար արարումն էր իրական աշխարհ վերադառնալու երազային ճամփան: Ամեն օրը նման էր հեռուներից երկիր վերադառնալուն, և հեռավոր ասուպի ցղանքը նրա համար դարձել է կտավ, իսկ կյանքի վերջին շրջանում՝ նաև բա-

## Գեղարմ Գարուն 2017

նաստեղծություն: Եթե ինչ-որ խազ կտավին իր ուզած սավերն ու լույսը չունեն, կամ գույների համանվագի մի ակորդը կիսատ էր, ապա այն հաճախ ամբողջացրել է բանաստեղծությամբ: Չափածո տողերը հառնում են կտավի գույներով ու պատկերներով և, ո՞վ գիտե, գուցե հաճախ բանաստեղծություն<sup>օ</sup>ն է իրենով ուրվագծել հերթական կտավը:

Սամվել Գաբրիելյանի բանաստեղծությունների ռիթմը, տրամադրությունը անկեղծությունն է, անցավոր ու հավերժական աշխարհի հետ այս գրույցն իր բաժին շնորհքն ու փորձությունն բանաստեղծությամբ քննության առնելու և հենց իր հոգու ուժը իրեն նեցուկ կարգելու խոհն ու խորհրդածությունն է: Դա է պահ տվել տողերին՝ ապրած կյանքի պարզևած պարզ ու անպաճույճ խոհափիլիսոփայական ընդհանրացումներով:

Բանաստեղծական շարքն ավարտվում է դեռևս չարարված կտավի տենչանքով, երկրային կյանքի ավարտին իր ձեռքին տեսել է նոր գործի ուրվանկարը: Բանաստեղծությամբ ասվածը իր հաստատումն ունի մահ գեղանկարչի վերջին՝ «Հարսանիք», անավարտ գործում: Այս կտավը ցուցադրվել է Ստեփանակերտի պետական պատկերասրահում, գեղանկարչի 65-ամյակին նվիրված հետախայաց ցուցահանդեսին: Չնայած մարմնական ցավերին, անկորնչելի կենսասիրությամբ ու լավատեսությամբ հավատում էր, որ ստեղծագործական նոր լիցքով պիտի շարունակի ստեղծագործական ուղին, որ «Հարսանիք» կտավն իր ուրախ ելևէջներով նոր ելակետ կդառնա իր արվեստում: Ուրեմն, արվեստագետ Սամվել Գաբրիելյանը բանաստեղծությամբ ու գեղանկարչությամբ հաղթել է մահին, վանել նրա սառը հայացքը: Իր հոգին վաղուց հանձնել էր գույներին, և գույներով ծփացող հոգին ենթակա չէր հիվանդ մարմնի կապանքներին:

Արևոտ գույներով լեցուն է Սամվել Գաբրիելյան գեղանկարչի ու բանաստեղծի ներկայանկը: Հպարտ էր ժամանակի

վայրիվերումներից չընկրկող իր կեցվածքով: Գիտեր՝ գեղանկարիչը կյանքի պայծառ գույների պահապանն է, իսկ իր կտավները՝ արևամուտին պակասող գույների հանգրվանը, որ նոր օրը բացվի նրանց հրավառությամբ:

Դժվարին դարի չարի ու բարու խաչմերուկում քանիցս հեծեծել է արվեստագետի հոգին, բայց գիտեր՝ մառախուղը պիտի հետ քաշվի արևից, իր կտավից ու բանաստեղծությունից հառնող արևից:

Սամվել Գաբրիելյանի համար հայրենի Արցախը իր անսպառ ներշնչանքն էր, լույսի ու լինելության խորհուրդը, իր ստեղծագործության սրբազան ակունքը: Գեղագետի խորհմաստությունը նրան հորդորել է ոչ մի պահ չկորցնել անպտուղ՝ բացառիկ աշխատասիրությամբ զարմացնելով իրեն ճանաչողներին: Ամեն առավոտ ինքը պիտի ողջուներ արևածագը, նրանից օրվա իր տալիքն իմանար և գուցե թե այդ թաքուն գրույցներից գիտեր, որ չի հասցնի ծերանալ...

Իր սերնդակիցների մեջ Սամվել Գաբրիելյան գեղանկարիչը տաղանդավորների շարքում է: Մի շարք ցուցահանդեսներ է ունեցել արտերկրում, նրա շատ գործեր պահվում են աշխարհի տարբեր պատկերասրահներում, անհատական հավաքածուներում: Եվ ամեն անգամ հեռուներից տուն դառնալով՝ կարոտով փարվում էր իր հայրենիքին. նրա համար ամենաքաղցր մեղեդին իր հայրենիքի երգն էր՝ աշխարհի խուլ ականջին: Ամեն օր Արցախը իր վաղվա երգն է երգում: Եվ այդ երգը նման է լույսի, որը ոչ ոք չի կարող բանտել: Մեռնող օրվա հետ չի մեռնում հույսը,- Արցախի վաստակավոր նկարիչ Սամվել Գաբրիելյանի տողն է հուշում: Հիրավի, արվեստում սահմաններ չընդունող արվեստագետի նաև չափածո տողերը վկայում են, թե որքան անկատար երազանքներ մնացին նրա հոգում, որքան գործեր դեռ պիտի տեղ գտնեին սերունդներին ի պահ թողած գեղանկարների ու բանաստեղծության շքեղ պատկերասրահում:

Մամվել ԳԱԲՐԻԵԼՅԱՆ



\*\*\*

Պատռվեց երկինքը,  
աստղերը թափվեցին հոգուս մեջ,  
Սիրտս թրթռաց,  
կարկմակեց մի պահ ու նորից երգեց...  
Աստղերը քո՞նն են,  
թե՞ ուրիշինը, ասա, դու իմ սեր,  
Դու երգող ծա՞ն ես,  
թե՞ բուրումնավետ դաշտերի ծաղիկ,  
Ինչո՞ւ ես լռում, դե՛, խոսիր,  
թե տերն ես սրտիս, ինձ քիչ խնայիր...

\*\*\*

Սիրտս փոթորկված մի ծով է դարձել,  
Որ ափ է հանում այն ամենը լավ,  
Ինչ պիտի բերի մարդուն բարություն.  
Աստված է այդպես կամենում հարկավ:

Խոսիր, դե՛, ասա, լսում եմ քեզ,  
Ինչո՞ւ ես լռում, դու համր ես այսօր,  
Խոսիր, որ լռեմ, լռեմ՝ հասկանամ՝  
Ես ո՞վ եմ այսօր, դու ո՞վ ես հիմա:



## Գեղարմ Գարուն 2017

\*\*\*

Սիրո մրմուռը հոգիս է պատել,  
Քանդում, ավերում է այն,  
Սրտիս թրթիռը դողոցք է դարձել,  
Դարձել է նվագ, դարձել երագ:  
Աշուն է հիմա, գունեղ աշուն,  
Ես ճերմակել եմ, տես,-  
Ինչ փույթ, իմ սիրտը սիրով է լցված,

Չմեռն ինձ համար դեռ ուշ կգա,  
Ես դեռ պիտ նայեմ արևին սիրով,  
Արշալույսներ դեռ պիտի տեսնեմ,  
Արշալույսներ ր կարմիր ու հրեղեն...



\*\*\*


Այս մայրերը, այս մայրերը...  
Ոտքերի տակ հավիող, մաշվող  
Այս մայրերով  
Մարդիկ գալիս ու անցնում են,  
Ժամանակն է հավում այսօր  
Այս մայրերին,  
Այս ճամփեքին:  
Մերունդները եկել, անցել  
Ու մաշել են այս մայրերը.  
Մայրերը կան,  
Մարդիկ չկան:

## Գեղարմ Գարուն 2017



Լսե՛ք, մարդիկ  
Բացե՛ք ականջները ձեր  
Ու լսե՛ք:  
Նա վաղվա երգն է երգում այսօր,  
Հասկացե՛ք նրան:  
Մենք էլ սոսկ ապրել, երկնել ենք ուզում.  
Հասկացե՛ք մեզ, մարդիկ:

\*\*\*  
Եռում է խաղողի ողկույզը  
Գինու գավաթի մեջ  
Պոռթկալու մեծ ցանկությամբ.  
Նա այսօր հարբած է:  
Հարբած են նաև ես,  
Հարբած է օրը նաև,



96

\*\*\*

Թափառում են ուրվականները պատերին,  
Ովքե՞ր եք դուք...  
Թափառեք, թափառեք իմ պատերին...

Ի՞նչ եք ուզում,  
Ես կգամ մի օր ձեզ մոտ  
Որպես ուրվական,  
Բայց հանգիստ թողեք ինձ այսօր,  
Ի՞նչ եք ուզում:

\*\*\*

Երգում է երկիրս այսօր  
Իր փոքրիկ, զուլալ ձայնով,  
Երգում է իր երգը վաղվա,



Հարբած է տիեզերքը:  
Կգա օրը վաղվա,  
Նորից կծնենք հարկավ,  
Կծնվենք ինչպես լույս ցող՝  
Արևի համբույրին կարոտ:  
Արևը համբույր կտա մեզ,  
Յող էինք, կդառնանք երազ  
Եվ կապրենք աշխարհում կարծես  
Նորից ծնվելու՝ մեծ հույսով:



\*\*\*

Անասնձ է միտքը մարդկային,  
Երբ հոգին լույս է արձակում,  
Երբ պայքարը դառնում է լուսաստղ,  
Ուղեկցում մարդուն դեպ անհաս հեռուն,  
Երբ ճամփի փշերն անգամ ծակծկող  
Գառնում են բուրավետ ծաղկունք,  
Երբ վազքդ դառնում է ընթացք,  
Հիշիր, որ այլևս հետադարձ չկա:



\*\*\*


Ես երազների մեջ եմ թափառում,  
Մառախուղի մեջ փնտրում եմ  
վայրկյան,  
Վայրկյանը պահի ու հավերժության,  
Վայրկյանը գույնի ու անմահության...  
Ես գտա այսօր.  
Գտա հավերժի գաղտնիքը կորած,  
Որ պարուրված էր խիտ  
Ստվերների գալարների մեջ:  
Ես երազներիս դեզերումներից  
Այսօր վերջ տվի  
Ու վերադարձա իրական աշխարհ

Եվ համոզվեցի, որ իմ ձեռքերում կտա՛վն է վաղվա...



*Ս. Գաբրիելյանի  
բանաստեղծություններն  
ուղեկցվում են հեղինակի  
գեղանկարների  
արտասպասկերներով*

## Խ Ճ Ա Ն Կ Ա Ր



### Ստամբուլում արևմտահայերենով հրատարակվել է Սարոյանի «Թութա՞կ ես, ծո՞» պատմվածքների ժողովածուն

Ստամբուլում գործող հայկական «Արաս» հրատարակչության կողմից հրատարակվել է ամերիկահայ գրող Վիլյամ Սարոյանի պատմվածքների հիման վրա կազմված «Թութա՞կ ես, ծո՞» գիրքը: Գիրքն արդեն տեղ է գտել «Արաս»-ի պաշտոնական կայքում:

Արևմտահայերենով հրատարակված ժողովածուի սրբագրմամբ և խմբագրմամբ զբաղվել են Հրակ Փափազյանն ու Սևակ Դեյիրմենջյանը: Սարոյանի «Թութա՞կ ես, ծո՞» հատորը կազմվել է դեռևս 1994թ.-ին Բեյրութի «Սիփան» հրատարակչության կողմից հրատարակված «Պատմվածքներ» ժողովածուի երկրորդ հատորի հիման վրա, որն անգլերենից թարգմանել է Հովհաննես Շեռհմելյանը՝ Արամ Սեփեթջյանի խմբագրությամբ:



### 2017 թվականի ամենասպասված գեղարվեստական գրքերը

Հայտնի են 2017 թվականի ամենասպասված գեղարվեստական գրքերի անունները: Այդ ցանկը, տարբեր հեղինակավոր հրատարակչությունների հետ համաձայնեցնելով, ընտրել ու կազմել է Forbes-ը:

Ներկայացնում ենք ժամանակակից լավագույն գրքերը.

1. Գրեմ Սվիֆտ - «Մայրական վերածնունդ»

2. Էուջեն Զիրովիցի - «Հայելիների գիրքը»
3. Էն Թայլեր - «Պատահական զբոսաշրջիկը»
4. Էլենա Ֆերանտե - «Նոր անվան պատմությունը»
5. Յան Մարտել - «Պորտուգալիայի բարձր լեռները»
6. Յու Նեսքյո - «Ծարավ»
7. Սիլենա Բուսկետտա - «Դա էլ կանցնի»
8. Քոլմ Թոյբին - «Բրուքլին»
9. Լորդ Ջուլիան Ֆելոուզ - «Բելգրավիա»
10. Ջոնաթան Ֆոեր - «Ես այստեղ եմ»
11. Լասլո Կրասնահորկաի - «Սատանայական տանգո»
12. Չայնա Մսիլ - «Պայթյունի երեք դրվագ»
13. Ֆեդերիկո Աբսատ - «Վերջին հնարավորությունը»
14. Էմմա Զլայն - «Աղջիկներ»
15. Ֆիլիպ Մայեր - «Ամերիկյան ժանգ»

**Խ Ճ Ա Ն Կ Ա Ր**

**Ստամբուլում լույս է տեսել Չաբել Եսայանի  
«Հոգիս աքսորյալ» գրքի  
թուրքերեն թարգմանությունը**




Ստամբուլում գործող «Արաս» հայկական հրատարակչությունը լույս է ընծայել հայտնի պոլսահայ գրող Չաբել Եսայանի «Հոգիս աքսորյալ» գրքի թուրքերեն թարգմանությունը:

Գիրքն արդեն տեղ է գտել «Արաս»-ի պաշտոնական կայքում, որտեղից էլ գնորդները կարող են այն պատվիրել համացանցի միջոցով:

«Արաս» հրատարակչությունը հիմնադրվել է Ստամբուլում, 1993թ.-ին: Հրատարակչությունը կարճ ժամանակում կարողացել է շատերի համար դառնալ «պատուհան» դեպի հայկական գրականություն, քանի որ զբաղվում է հայ դասականների, հայտնի պատմության և Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ գրքերի թուրքերեն թարգմանությամբ՝ հասանելի դարձնելով այն թուրքական հասարակության բոլոր խավերին:

Հրատարակչությունն ունի նաև արևմտահայերենով հրատարակված գրքեր:

**Կոլումբիայում հեռուստատեսիալ կնկարահանեն  
Գաբրիել Գարսիա Մարկեսի կյանքի մասին**



Կոլումբիացի ռեժիսոր Սերխիո Կաբրերան պրոդյուսեր Ուգո Ֆերերի հետ համատեղ ներկայացրել է լեզենդար գրող, Նոբելյան գրականության մրցանակի դափնեկիր Գաբրիել Գարսիա Մարկեսի կյանքի մասին պատմող հեռուստատեսային շարքի առաջին դրվագը:

Նկարահանումները սկսվել են 2015 թվականին: Ֆիլմը բաղկացած է լինելու երեք սեզոնից՝ յուրաքանչյուրը 13 սերիայից, որոնք կտևեն 45 րոպե, փոխանցում է ՏԱՍՍ գործակալությունը:

Գաբրիել Գարսիա Մարկեսը կախարդական ռեալիզմի առավել հայտնի ներկայացուցիչներից է: Այս միտումը գրականության մեջ համատեղում է իրականության և երևակայության տարրերը: Հեղինակի ամենահայտնի վեպերն են՝ «Հարյուր տարվա մենությունը», «Պատրիարքի աշունը», «Հրամանատարն իր լաբիրինթոսում» և այլն: 1982 թ.-ին Մարկեսն արժանացել է Նոբելյան գրականության մրցանակին:

Գրողը մահացել է 2014 թ. ապրիլին: Այս տարվա մարտի 6-ին կլրանար նրա 90-ամյակը:

**Խ Ճ Ա Ն Կ Ա Ր**



**Մեծ Բրիտանիայում մարդիկ տպագիր գրքերը նախընտրում են էլեկտրոնային գրքերից**

ՉԼՄ-ները վերջերս ուշադրություն են դարձրել Nielsen հետազոտական ընկերության տվյալներին, որոնք ուսումնասիրել են բրիտանական գրքի շուկայները, հաղորդում է Regnum-ը:

Պարզվել է, որ ամբողջ 2016 թվականի ընթացքում 360 միլիոն գիրք է վաճառվել Մեծ Բրիտանիայում: Այսպիսով, տպագիր գրքերի վաճառքն աճել է 7%-ով:

Մինչդեռ նույն ժամանակահատվածում գրքերի էլեկտրոնային տարբերակների վաճառքը նվազել է 4%-ով: Այս հետաքրքիր միտումը նկատվում է երկրորդ տարին անընդմեջ:



**4-ամյա ամերիկուհին ավելի շատ գիրք է կարդացել, քան մարդիկ կարդում են իրենց ողջ կյանքի ընթացքում**

Ամերիկյան հետազոտական կենտրոնի վիճակագրության համաձայն՝ մարդկանց կարդացած գրքերի միջին քանակը 2015-ին կազմել է 12:

Ինչպես հայտնում է The Independent-ը, կենտրոնի մասնագետների կատարած հաշվարկի համաձայն՝ մարդիկ, սովորաբար, 50 տարվա ընթացքում մոտ 200 գիրք են ընթերցում:

Այս մասին գրելով՝ աղբյուրը ներկայացնում է ԱՄՆ Ջորջիա նահանգում բնակվող 4-ամյա հրաշամանուկին, ով արդեն 1000 գիրք է հասցրել կարդալ: Դալիա Մարի Արանան իր առաջին գիրքը կարդացել է 2 տարեկան 11 ամսականում: Դալիայի մայրիկի խոսքով՝ ինքը դստեր համար հեքիաթներ է կարդացել մինչև 1.5 տարեկանը, որից հետո երեխան ինքն է ձգտել կարդալ:



**Տորոնտոյի փողոցներից մեկը «հեղեղվել» է գրքերով**

Կանադական Տորոնտո քաղաքում կայացած Nuit Blanche 2016 («Անքուն գիշեր») մշակութային փառատոնի շրջանակում քաղաքի փողոցներից մեկում հետաքրքիր ինստալյացիա է արվել:

Literature Vs Traffic նախագծի հեղինակներն ամենամարդաշատ փողոցներից մեկը «գետի» են վերածել 10 հազար լուսավորված գրքի միջոցով:

Boredpanda.com-ը գրում է, որ գրքերը նվիրաբերել է «Փրկության բանակ» բարեգործական կազմակերպությունը, և ավելի քան 50 կամավոր 12 օր շարունակ աշխատել է ինստալյացիան իրագործելու համար: